# ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԻԶ. ՏԱՐԻ ԹԻՒ 27 (1274) ՇԱԲԱԹ, ՅՈՒԼԻՍ 29,2006
VOLUME 26, NO. 27 (1274) SATURDAY, JULY 29, 2006

Պաշտօնաթերթ՝
Ս. Դ. Հնչակեան Կուսակցութեան
Արեւմտեան Ամերիկայի

MASSIS Weekly
1060 N. Allen Ave. Suite 101
Pasadena, California 91104


## ԿՈՉ ՀԱՅ ԺՈՂՈՎՈՒՐԴԻՆ

*Անգամ մը եւս վայրագ բռնարարքներու եւ տակաւ շարունակուող պատերազմի զոհ կ'երթայ բովանդակ Լիբանանը: Իսրայէլեան յարձակումներու թիրախ դարձած են ոչ միայն երկրի Հարաւը՝ այլեւ մայրաքաղաք Պէյրութը մինչեւ հեռաւոր այլ շրջաններ:*

*Արդարեւ, օդային ռմբակոծումներու զոհ գացած են բազմահարիւր անմեղ մարդիկ, տեղահան դարձած են աւելի քան 800 հազար հոգի, որոնք՝ կարիքն ունին ամէն տեսակի օգնութեան (հագուստ, սնունդ, դեղորայք եւ ապաստանարան): Մէկ խօսքով՝ Լիբանան դարձած է «Աղէտի Երկիր»:*

*Լիբանանահայութիւնը եւս կ'ապրի դժուարին օրեր: Հայկական թաղամասերը կը դիմագրաւեն կենցաղային, առողջապահական, սնունդի ապահովման, ջուրի եւ ելեքտրական հոսանքի դժուարութիններ, որոնք հոգալու պարտականութիւնը ստանձնած են մեր քաղաքական եւ բարեսիրական կազմակերպութիւնները: Տնտեսական դժուարութիւններու եւ անգործութեան պատճառաւ սկսած է բազմապատկուիլ չքաւոր հայերու թիւը:*

*Հայկական կազմակերպութիւնները նաեւ օգնութեան ձեռք կ'երկարեն երկրի հարաւային շրջաններէն հայկական թաղամասերը ժամանած գաղթականներուն:*

*Հայկական Կրթական Բարեսիրական Միութիւնը (Հ.Կ.Բ.Մ.) իր դարմանատուները եւ կրթական ու բարեսիրական կեդրոնները առանց խտրութեան բացած է բոլորի առջեւ, օգտակար հանդիսանալով եւ հոգալով ժողովուրդի կարիքներուն:*

*Ռազմական գործողութիւններու աւարտէն ետք իսկ, երկար ժամանակ, լիբանանահայութիւնը պէտք պիտի ունենայ Հայաստանի եւ սփիւռքի օգնութեան՝ իր գոյութիւնը պահպանելու եւ արտագաղթի նոր հոսք մը կանխելու համար:*

*Ուստի, կոչ կ'ուղղենք սփիւռքահայութեան՝ գործնականօրէն զօրակցիլ աղէտահար Լիբանանի կարօտեալներուն եւ անյապաղ մարդասիրական օժանդակութիւն ցուցաբերել հայութեան:*

*Տուրքէ զերծ ձեր գումարները հաճեցէք առաքել հետեւեալ հասցէին.*

*A.E.B.U. - Lebanon Fond*
*1060 N. Allen Avenue*
*Pasadena, CA 91104*

***ՀԱՅԿԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԲԱՐԵՍԻՐԱԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ***

## ԵՒՐՈՊԱՅԻ ՀԱՄԱՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԷՋ ԱԶԱՏ ԵՒ ԱՐԴԱՐ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ԿԱՅԱՑՈՒՄԸ ԱՌԱՋՆԱՀԵՐԹ Է



**Կովկասի մէջ Եւրամիութեան յատուկ ներկայացուցիչ Փիթըր Սեմնեբի**

*Երկօրեայ այցով Երեւան գտնուող Փիթըր Սեմնեբի, որ Հարաւային Կովկասի մէջ Եւրամիութեան յատուկ ներկայացուցիչն է, Յուլիս 24-ին տուած մամլոյ ասուլիսին բաւական խիստ եւ յստակ թոնով խօսած է Հայաստանի խորհրդարանի գալիք ընտրութեան մասին: Ան ըսած է, որ Հայաստան-Եւրամիութիւն հետագայ յարաբերութեան որակը պայմանաւորուած է այդ ընտրութեան ազատութեամբ եւ արդարութեամբ: Եւրոպայի Միութեան յատուկ ներկայացուցիչը յայտարարած է, որ Եւրոպական Հարեւաններ ծրագիրին Հայաստանի մասնակցութիւնն ու խորհրդարանի ընտրութիւնը կապուած են իրար:*

*Խորհրդարանի ընտրութեան թեման եղած է այն չորս հարցերէն մէկը, որ Պր. Սեմնեբի քննարկած է Հայաստանի ղեկավարութեան հետ: Առաջին երեքն են՝ Անհատական գործակցութեան ծրագիրը, Ղարաբաղի հարցը եւ Հայաստանի ու հարեւաններու յարաբերութիւնը: Սակայն չորս թեմաներէն Սեմնեբի իր մամուլի ասուլիսի ընթացքին աւելի շատ ժամանակ յատկացուցած է Անհատական գործընկերութեան եւ խորհրդարանի ընտրութեան:*

*Ասուլիսի մասնակցող ՀՀ Արտաքին Գործոց Նախարար Վարդան Օսկանեան յայտարարած է, որ Եւրամիութեան հետ գործընկերութեան անհատական ծրագիրը գրեթէ աւարտած է:*

*Վարդան Օսկանեանէն յետոյ խօսք առնելով, Փիթըր Սեմնեբի անմիջապէս յայտարարած է, որ կ'ուզէ կապել Անհատական գործընկերութիւնն ու Հայաստանի խորհրդարանի ընտրութիւնը, քանի որ գործընկերութեան փաստաթուղթին մէջ արդար եւ ազատ, Եւրոպական չափանիշի համապատասխան ընտրութիւնը ընդունուած է իբրեւ գերակայ նպա-*

*Շար.ը էջ 4*

## ԱՇԽԱՐՀ ԿԸ ՓՈՐՁԷ ՕԳՆՈՒԹԵԱՆ ՀԱՍՆԻԼ ԼԻԲԱՆԱՆԻՆ

*Իսրայէլի կողմէ Լիբանանի դէմ յայտարարուած պատերազմը թեւակոխեց իր երրորդ շաբաթը: Անխնայ ռմբակոծութիւնը ոչ միայն թիրախ դարձուցած է «Հըզպալլայի» դիրքերը, այլ մահ ու աւեր կը գործէ անմեղ բնակչութեան դէմ:*

*Օտար երկիրներու քաղաքացիները, իրենց դեսպանատուներու օգնութեամբ դուրս կու գան երկրէն, իսկ հոն մնացողներուն՝ աշխարհ կը փորձէ մարդասիրական օգնութիւն հասցնել:*

*Այլ երկիրներու շարքին, Հայաստանի կառավարութիւնը եւս որոշած է ուղարկել դեղորայք, սարքաւորումներ եւ վրաններ, որոնք Սուրիոյ վրայով այս շաբթուայ ընթացքին պիտի հասնին Լիբանան: Կառավարութեան աղբիւրները կը տեղեկացնեն նաեւ, որ Լիբանանէն եւ Իսրայէլէն շուրջ 600 հոգիներ տեղափոխուած են Հայաստան:*

*Մեծ դժուարութիւններու առջեւ գտնուող լիբանահայութիւնը կ'ակնկալէ սփիւռքի եւ Հայաստանի օժանդակութիւնը:*

*Այս նպատակով, սփիւռքի բարեսիրական կազմակերպութիւնները եւ եկեղեցական առաջնորդները սկսած են հանգանակային աշխատանքներու, մարդասիրական օժանդակութիւն ապահովելու համար Լիբանանի հայ եւ ոչ հայ աղէտեալներուն:*

### «ՄԱՍԻՍ»Ի ՏԱՐԵԿԱՆ ԱՐՁԱԿՈՒՐԴԸ

Ամառնային արձակուրդի առիթով «Մասիս» Շաբաթաթերթի խմբագրատունը Օգոստոսի առաջին երկու շաբաթներուն փակ պիտի ըլլայ եւ մեր յաջորդ թիւը լոյս պիտի տեսնէ Օգոստոս 19ին:

## ՀԱՅԱՍՏԱՆ Կ'ԱԿՆԿԱԼԷ ԱՏՐՊԷՅՃԱՆԻ ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄՆԵՐՈՒՆ ՄԷՋ ՓՈՓՈԽՈՒԹԻՒՆ

*Պաշտօնական Երեւանը ԵԱՀԿ Մինսկի Խումբի ամերիկացի համանախագահ Մեթիւ Պրայզայի տարածաշրջանային այցելութենէն կ'ակնկալէ Ատրպէյճանի դիրքորոշման մէջ բեկում, Յուլիս 24-ին յայտարարեց Հայաստանի Արտաքին գործոց Նախարար Վարդան Օսկանեան:*

*«Մեր ակնկալութիւնը Մեթիւ Պրայզայի այցից, որ կարողանայ Ատրպէյճանական կողմին համոզել վերադառնալ բանակցութեան սեղան, եղած փաստաթուղթի հիման վրայ բանակցութիւնը շարունակելու: Ինչպէս գիտէք Հայաստանն իր դիրքորոշումը յստակ ասել է այդ փաստաթղթի կապակցութեամբ: Ատրպէյճանն ուղղակի պրոբլեմներ ունի, եթէ Ատրպէյճանի կողմից համաձայնութիւն լինի վերադառնալ այդ սկզբունքներին, ապա կը համարենք, որ հնարաւորութիւն կը ստեղծուի բանակցութեան նոր փուլ սկսելու եւ առաջընթաց արձանագրելու», ըսաւ Վարդան Օսկանեան:*

*«Ուղղակի ես կարծում եմ, եւ յաճախ եմ ասել, ուղղակի ափսոս կը լինի այս փաստաթուղթը հերթական անգամ, այսպիսի առիթը կորցնել, որովհետեւ սա երրորդը կը լինի՝ «Ընդհանուր պետութիւն», Քի Ուեսթ, եւ ահաւասիկ երրորդը: Որովհետեւ այս փաստաթղթերը գիտէք, մէկ շաբաթուայ ընթացքում չեն ծնւում, սրանք արդիւնք են երկար բանակցութեան, եթէ Ատրպէյճանը հերթական անգամ մերժում է, ես կարծում եմ իրավիճակը լրջօրէն բարդանալու է», յայտարարեց Արտաքին Գործոց Նախարարը:*

*Օսկանեան կարծիք յայտնեց, որ Մեթիւ Պրայզա լաւագոյն պարագային իր հետ կրնայ բերել կարգաւորման եղած տարբերակի «մանր փոփոխութիւններու» մասին առաջարկներ: Իսկ հիմնական տարբերակի նոր մօտեցումներու մասին առաջարկները հայկական կողմը կը նկատէ գրեթէ անհաւանական:*

## ՀԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՄԱՄՈՒԼ

# ՔԱՆԻ ՇՈՒՏ Է, ԹՈՂ ՍԵՐԺԻՆ ՀԱՆԵՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԻՒՆԻՑ

Հանրապետական կուսակցութեան արտահերթ համագումարի աւարտից անմիջապէս յետոյ շատ արագ փողոց դուրս գալու ցանկութիւն առաջացաւ: Եւ դրա պատճառը միայն դահլիճի անտանելի տօթն ու օդի բացակայութիւնը չէր: Ցանկութիւն կար արագ դուրս գալ փողոց, տեսնելու համար, թէ ինչ փոխուեց երկրում ՀՀԿ արտահերթ հաւաքից յետոյ: Պարզուեց ոչինչ: Նոյն շոգը: Եթէ համագումարը որեւէ բան փոխեց, ապա միայն ՀՀԿ, կամ առաւելագոյնը իշխանութեան համար: Իսկ այն, որ ինչ որ բան այնուամենայնիւ փոխուել է վերոյիշեալ երկու սուբիեկտների համար, վկայում է նրանց վարքը: Հանրութեան համար ՀՀԿ եւ իշխանութիւն հասկացութիւնները թերեւս նոյնն են: Բայց դա արդէն այդքան էլ մօտ չէ իրականութեանը: Եւ հենց դրանով էր թելադրուած 40 աստիճան շոգին համագումար անցկացնելը: Հանրապետականները դեռ երբեք այդքան քրտինք չէին թափել, իսկ դա նշանակում է, որ այժմ նրանց համար աննախադէպ իրավիճակ է: Դրա վկայութիւնն է նաեւ այն, որ ամբողջ համագումարի ընթացքում Անդրանիկ Մարգարեանն ու Տիգրան Թորոսեանն իրենց կուսակիցներին հաւատիացնում էին, որ Հանրապետականը կայ եւ կը լինի, որ կուսակցութեան հին (Անդրանիկ Մարգարեան եւ վարչակրիմինալ) եւ նոր (Սերժ Սարգսեան + վարչակրիմինալ հանրոյթի նոր «խմբաքանակ») անդամների միջեւ հակասութիւններ չկան:

Այդ ամէնն, իհարկէ, վկայում է հակառակի մասին: Հակասութիւններ գուցէ իսկապէս չկան, բայց դրանց առաջացման մտահոգութիւնը անկասկած առկայ է: Աւելին, Անդրանիկ Մարգարեանի ու Տիգրան Թորոսեանի համար առկայ է մտահոգութիւնը, որ հակասութիւն, որպէս այդպիսին, կարող է եւ չհասցնի առաջանալ, եւ կուսակցութեան հետ տեղի ունենայ այն, ինչ այդքան չի սպասում ՀՀԿ հիմնադիր Աշոտ Նաւասարդեանի կինը՝ Անդրանիկ Մարգարեանը գլխի կուսակցութեան ղեկավարի իր դիրքը: Իսկ դրա համար կան բոլոր նախադրեալները: ՀՀԿ խորհրդի ընդլայնումից յետոյ խորհրդի կազմում արդէն գրեթէ հաւասար են Սերժ Սարգսեանականները: Դա միայն քանակով, իսկ ազդեցիկութեամբ նրանք թերեւս արդէն գերազանցում են Անդրանիկ Մարգարեանի թիմակիցներին: Օրինակ, ՀՀԿ գործունէութեան տնտեսաքաղաքական ասպարէզում պաշտօնապէս առաջատար դիրք են գալիս Կարէն Կարապետեանն ու Յարութիւն Փամբուկեանը: Իսկ նրանք ընդամէնը մի քանի օր առաջ են դարձել Հանրապետական, այսինքն եկել են Սերժ Սարգսեանի հետ:

Կարող էին արդեօք Անդրանիկ Մարգարեանն ու Տիգրան Թորոսեանը կանխել պաշտպանութեան նախարարի ազդեցութեան արագ տարածումը: Գուցէ կարող էին, բայց դա նրանցից թերեւս որոշակի զոհողութիւն պահանջեր իշխանութեան ներսում: Մինչդեռ այդ գործիչների պատկերացման մէջ կուսակցութիւնը հենց իշխանութեան մնալու ճանապարհ է եւ նրանք նոյնիսկ վատ երազում չեն պատկերացնում, որ կարող են յանուն կուսակցութեան իշխանութիւնը զոհել: Իսկ յանուն իշխանութեան կուսակցութիւնը՝ խնդրեմ, ինչ հարց կայ: Բայց Մարգարեանն ու Թորոսեանը այժմ հասկանում են, որ կուսակցութիւնը կորցնելով, կորցնելու են նաեւ իշխանութիւնը: Այսինքն այս դէպքում նրանք ոչ թէ զոհում են կուսակցական դիրքը յանուն իշխանութեան, այլ նրանցից պարզապէս խլում են կուսակցութիւնը: Որեւէ երաշխիք չկայ, որ այդ պարագայում Մարգարեանն ու Թորոսեանը կարող են 2007 թուականին շահել աւելի, քան ասենք շարքային Հանրապետականը, որի համար իսկապէս զարմանալի է, թէ այդ ինչ վաստակի համար են երկու օրական կուսակցականները դառնում կուսակցութեան ղեկավարներ: Բնական է, որ ՀՀԿ դեռեւս հին ղեկավարները իրենց շարքերին պէտք է ամբողջ ուժով հաւաստիացնեն, որ Հանրապետականը մնալու է իր աւանդոյթին հաւատարիմ: Նրանց այլ բան չի մնում, ինչպէս այն մարդուն, որ գիշերով ճանապարհ է գնում ու բղաւում է, վախից, իր իսկ վախը ցրելու համար: Անդրանիկ Մարգարեանն ու Տիգրան Թորոսեանը հիմա զբաղուած են բղաւելով:

Եւ ունեն բղաւելու, այսինքն վախենալու պատճառ: Ի վերջոյ, Հանրապետական վերնախաւում նրանք հասկանում են, որ նոյնիսկ իրենց թիմակիցների վրայ յոյս դնելը իրատեսական չէ: Վարչապետն ու ԱԺ նախագահն անշուշտ յիշում են, թէ ինչպէս էր Յակոբ Յակոբեանը Հանրապետական Տիգրան Թորոսեանի մրցակից առաջադրում Հանրապետական Գալուստ Սահակեանին: Ի դէպ, Յակոբ Յակոբեանն էլ Սերժ Սարգսեանի յետեւից մտաւ ՀՀԿ: Օրինակ, Գալուստ Սահակեանի համար կարեւոր չէ, թէ ով է իր որդու փոխքաղաքապետութեան երաշխաւորը՝ Անդրանիկ Մարգարեանը, թէ Սերժ Սարգսեանը:

Եւ ինչ Գալուստ Սահակեան, եթէ Անդրանիկ Մարգարեանը նոյնիսկ Տիգրան Թորոսեանի վրայ յոյս դնել չի կարող, երբ Թորոսեանը շտապեց առաջին իսկ օրը ՀՀԿ խորհրդի նորընտիր նախագահ Սերժ Սարգսեանին հաւաստիացնել, թէ նրա հետ հակասութիւն չունի եւ ունենալու մասին լուրերն էլ անհեթեթութիւն են: Շտապեց, որովհետեւ ժամանակ չկայ, Սերժ Սարգսեանը յայտարարում է, որ սկիզբ է դնում մի գործընթացի, որի նախնական պտուղները կ՚երեւան երեքչորս ամիս անց: Իսկ անզէն աչքով անգամ երեւում է, որ Տիգրան Թորոսեանն այդ պտուղների կարիքն ունի աւելի շատ, քան Անդրանիկ Մարգարեանը: Իսկ դրա համար հարկաւոր է տեղաւորուել այդ գործընթացի մէջ: Կուսակցութեան ժամանակը չէ: ՀՀԿ-ն ոչ առաջինն է, ոչ էլ վերջինն է լինելու: Հաւատարմութիւնը Հայաստանում դեռ ոչ մէկին բարիք չի բերել: Եւ յետոյ, Մարգարեանը մի անգամ արդէն լեզու գտել է Սերժ Սարգսեանի հետ՝ վեց տարի առաջ, եւ չի տուժել: Իսկ ինչու բախտը չփորձի Տիգրան Թորոսեանը: Պարզապէս կայ մի նրբերանգ. եթէ վեց տարի առաջ Մարգարեանի գտած «լեզուն» պայմանաւորում էր ՀՀԿ բախտը, ապա վեց տարի յետոյ Թորոսեանի «գտած լեզուն» կը պայմանաւորի արդէն Մարգարեանի բախտը: Առաւել եւս, որ Սերժն էլ լեզուի հետ սէր ունի, բանասէր է, ի վերջոյ:

ՅԱԿՈԲ ԲԱԴԱԼԵԱՆ
«ԼՐԱԳԻՐ»
7-24-06

# ՆԵՐԻՇԽԱՆԱԿԱՆ ՀԱԿԱՍՈՒԹԻՒՆՆԵՐ

Հակասութիւնների այն դաշտը, որը գոյութիւն ունէր իշխանութեան ներսում եւ որը մինչ այժմ խնամքով թաքցւում էր, ի վերջոյ որոշակիօրէն դուրս եկաւ պալատական միջանցքներից: Այդ արտահոսքի հեղինակը դարձան ՀՀ ՊՆախարար Սերժ Սարգսեանը՝ մի կողմից եւ «Բարգաւաճ Հայաստան» կուսակցութեան առաջնորդ Գագիկ Ծառուկեանը՝ միւս կողմից, որը դեմարշի ենթարկեց ՀՀԿ համագումարը եւ չընդունեց այդ միջոցառմանը մասնակցելու հրաւէրը: Մինչ այդ Սերժ Սարգսեանը յայտարարութիւններ էր արել, որոնց մենք անդրադարձել ենք: Դրանցից մէկը, սակայն, յատուկ ուշադրութեան է արժանի: Խօսքը Սերժ Սարգսեանի այն պնդման մասին է, թէ «Բարգաւաճ Հայաստանը» դեռեւս կուսակցութիւն չէ: Այս յայտարարութեան բուն իմաստը հասկանալու համար հարկաւոր է առանց քննութեան թողնել դրա իրաւական, փաստական մասը եւ այն քննել, այսպէս ասած, մերկ վիճակում: Իսկ այսպիսի վերլուծութիւնը ցոյց է տալիս, որ Սերժ Սարգսեանը փորձում է ամէն ինչ անել, որպէսզի «ԲՀ»-ն զրկուի առաջիկայ խորհրդարանական ընտրութիւններին մասնակցելու հնարաւորութիւնից: Իսկ այս պնդումը հիմնաւորւում է հետեւեալ կերպ. ըստ Հայաստանի օրէնսդրութեան՝ հերթական խորհրդարանական ընտրութիւններին կարող են մասնակցել այն կուսակցութիւնները, որոնք ընտրութիւններից առնուազն մէկ տարի առաջ են սկսել իրենց գործունէութիւնը: Ու եթէ հաշուի առնենք, որ 2006-ի խորհրդարանական ընտրութիւնները տեղի են ունենալու մօտաւորապէս ապրիլին, ու որպէս հիմք ընդունենք Սերժ Սարգսեանի յայտարարութիւնը, ստացւում է, որ Գագիկ Ծառուկեանի կուսակցութիւնը չի կարող ընտրութիւններին մասնակցել: Իհարկէ, նախկինում արդէն յայտարարուել է, որ «ԲՀ»-ն որպէս կուսակցութիւն գրանցուել է շատ աւելի վաղ, քան դրան անդամակցելու մասին յայտարարել է Գագիկ Ծառուկեանը: Բայց Սերժ Սարգսեանը չէր կարող տեղեակ չլինել այս նրբութեանը ու եթէ տեղեակ եղել է ու, այսուհանդերձ, յայտարարել է, նշանակում է՝ պէտք է իր յայտարարութիւնը հիմնաւորող փաստարկներ ունենայ: Եւ հիմնական հարցը այն է, թէ արդեօ՞ք այդ փաստարկները օգտագործելու անհրաժեշտութիւն կ՚առաջանայ: Նման անհրաժեշտութեան բացակայութեան մասին կարելի կը լինէր խօսել, եթէ «Բարգաւաճ Հայաստանը» կապիտուլյացիայի ենթարկուէր: Բայց Գագիկ Ծառուկեանի չներկայանալը ՀՀԿ համագումարին առնուազն նշանակում է, որ նա մտադիր չէ ենթարկուել Ազատիչի հեռահար հրահանգներին: Աւելին, երէկ Ծառուկեանը Սունդուկեանի անուան պետական ակադեմիական թատրոնում «Բարգաւաճ Հայաստանի» ակտիւի ժողով էր անցկացնում: Եւ այս ամէնը Սերժ Սարգսեանի յայտարարութիւնների անուղղակի պատասխանն է, ու սրանում փնտռել միայն Գագիկ Ծառուկեանի նախաձեռնութիւնը՝ առնուազն ճիշդ չի լինի: Ու թերեւս Հանրապետական կուսակցութեան համագումարի լարուած մթնոլորտի պատճառներից մէկն էլ հենց այս իրավիճակն էր: ՀՀԿ-ն, թերեւս, իշխանութեան ներսում արագ եւ անվերապահ յաղթանակ տանելու յոյս ունէր եւ, ըստ էութեան, չէր սպասում դիմադրութեան: Բայց համագումարին յաջորդած եւ նախորդած իրադարձութիւնները վկայում են, որ «Բարգաւաճ Հայաստանը», ասել կ՚ուզի՝ Ռոբերդ Քոչարեանը, դիմադրութիւն ցոյց է տալու եւ առանց մարտի յանձնուողը չէ: Ու ՀՀԿ-ի համագումարի շատ պատուիրակներ այս մթնոլորտը զգալով, թերեւս, թերահաւատ են դարձել իրենց ընտրութեան ճշմարտացիութեան իմաստով: Ինչ վերաբերում է Սերժ Սարգսեանին, հասկանալի է, որ նա հիմա «ֆոլստարտի» զգացողութիւն պէտք է ունենայ, որովհետեւ տպաւորութիւնն է, որ նա իր հիմնական խաղաքարտերը օգտագործեց: Բայց պայմանական հակառակորդը քարտերը ցած չի դնում եւ շարունակում է խաղալ: Ընդ որում, Քոչարեանի խօսնակ Վիկտոր Սողոմոնեանը անում է Սարգսեանի պահանջած յայտարարութիւնը, իսկ «Բարգաւաճ Հայաստանը» փորձում է ցոյց տալ, որ ինքը կայ որպէս կուսակցութիւն: Այս իրավիճակում ներիշխանական յարաբերութիւնների լարուածութիւնը, բնականաբար, աւելի է մեծանալու: Եւ այս ֆոնին հետաքրքիր են տեղեկութիւնները, որ Քոչարեանը ՀՀ մաքսային պետական կոմիտէի ղեկավար Արմէն Աւետիսեանին առաջարկել է ազատման դիմում գրել, իսկ վարչապետ Մարգարեանն ու Սերժ Սարգսեանը նրան յորդորում են չգնալ այդ քայլին:

«ՀԱՅԿԱՆ ԺԱՄԱՆԱԿ»
7-25-06

massisweekly.com

**ՄԱՍԻՍ** ՇԱԲԱԹԱԹԵՐԹ
ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹ՝
ՍՈՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ՀՆՉԱԿԵԱՆ
ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ
Արեւմտեան Ամերիկայի Շրջանի
ԽՄԲԱԳԻՐ՝
ՏՕՔԹ. ԱՐՇԱԿ ԳԱԶԱՆՃԵԱՆ

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԿԱԶՄ՝
ԳԱԲՐԻԷԼ ՄՈԼՈՅԵԱՆ
ՍԱՀԱԿ ԹՈՒԹՃԵԱՆ
ՎԱԶԳԷՆ ԽՈՏԱՆԵԱՆ
ՅԱՐՈՒԹ ՏԷՐ ԴԱՒԻԹԵԱՆ
Հեռ. (626) 797-7680
Ֆաքս. (626)797- 6863
E:Mail: massis2@earthlink.net
http://www.massisweekly.com

**MASSIS Weekly**
Organ of the Armenian Social Democratic Hunchakian Party of Western USA
1060 N. Allen Ave.
Pasadena, CA 91104
Phone: (626) 797-7680
Fax: (626) 797-6863
(USPS 667-310) (ISSN 0744-334X)
Published Weekly
Except Two Weeks in August
ANNUAL SUBSCRIPTION RATES:
USA $50.00, Canada $60 (Second Class), $75.00 (Air Mail)
Overseas $85.00 (2nd Class Mail), $125.00 (Air Mail).
All payments must be made in US funds & Drawn on US banks.
Periodicals Postage Paid at Pasadena CA.
Please Send Address Change To
**MASSIS WEEKLY**
**1060 N. Allen Ave.**
**Pasadena, CA 91104**

## ԼՈՒՐԵՐ

# ՍԵՐԺ ՍԱՐԳՍԵԱՆԸ՝ ՀՀԿ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ



Պաշտպանութեան նախարար Սերժ Սարգսեան ելոյթ կ'ունենայ ՀՀԿ համագումարին

*ԵՐԵՒԱՆ, «ԱՅԲ-ՖԷ»:* ՀՀԿ արտահերթ 10-րդ համագումարը կայացաւ եւ, ինչպէս խոստանում էին ՀՀԿ-ականները, ոչ մի անակնկալ էլ չմատուցուեց: Պաշտպանութեան Նախարար Սերժ Սարգսեանն ընտրուեց ՀՀԿ խորհրդի նախագահ: Ընտրութիւններին մասնակցած բոլոր 712 պատուիրակները նրան ընտրեցին միաձայն: Այսպիսով, Հանրապետականի պատմութեան մէջ երկրորդ անգամ ամենավճռական պահին պաշտպանութեան նախարարը դառնում է կուսակցութեան անդամ եւ փաստացի ղեկավար. այդպէս էր նաեւ 1998 թուականին, երբ Վազգէն Սարգսեանը, իր քաղաքական կշռով մտաւ ՀՀԿ՝ ուժեղացնելով այն:

Կառավարութեան նիստերի դահլիճում էին կառավարութեան գրեթէ բոլոր անդամները՝ բացառութեամբ Դաւիթ Յարութիւնեանի, Վարդան Օսկանեանի եւ դաշնակցական նախարարների, գրեթէ բոլոր գործարարները, գրեթէ բոլոր «հեղինակութիւնները»: Վերջիններից մի քանիսն, ի դէպ, ընտրուեցին ՀՀԿ խորհրդի անդամներ:

Արդէն քաղխորհրդի նախագահ ընտրուելուց յետոյ Սերժ Սարգսեանը յայտարարեց, որ երկրի եւ ժողովրդի առջեւ պարտաւորութիւն ունեն համախմբուելու. «Համագործակցութիւնը լաւ բան է, բայց մենք պարտաւոր ենք միաւորուել: Հանրապետութեան առողջ եւ կարող ուժերը պարտաւոր են համախմբուել, եւ ես համարում եմ, որ այս համագումարով մենք սկիզբ ենք դնում այդ գործընթացին: Եւ, կախուած նրանից, մենք յաջողելու ենք, թէ ոչ, կարծում եմ կարող ենք նոր ոգի հաղորդել այդ գաղափարին, կամ էլ այն վարկաբեկել: Մենք ունենք կուսակցականների համոզուած շարքեր, մենք ունենք համակիրների հզօր բանակ, մենք ունենք քաղաքական կամք եւ նպատակասլացութիւն մեր երկիրն առաջ տանելու, զարգացման նոր աստիճանի: Ես վստահ եմ, որ այս խնդիրը մենք յաջողութեամբ ենք կատարելու: Յամենայն դէպս, ես ամէն ինչ անելու եմ, որ այս պայքարում եւս մենք յաղթող լինենք», աւարտեց իր առաջին ելոյթը ՀՀԿ Խորհրդի նորընտիր նախագահ Սերժ Սարգսեանը:

Պարոն Սարգսեանն ըստ էութեան ակնարկեց, որ այսօր քաղաքական դաշտի ամենաառողջ ու ամենակարող ուժը իրենով համալրուած ՀՀԿ-ն է: Իսկ ՀՀԿ նախագահ, վարչապետ Անդրանիկ Մարգարեանը համագումարի բացման խօսքում ասաց, որ գաղափարախօսութեան ուղղուածութեան առումով ոչինչ չի փոխուել, ուղղակի կառուցուածքային փոփոխութիւններ են արւում՝գործունէութեան ընդլայնման ուղղութեամբ:

Ի դէպ, ծրագրային հիմնադրոյթների ու գաղափարախօսական ուղղուածութեան չփոփոխման հետ էին այսօր ՀՀԿ-ականները կապում այլ կուսակցութիւնների ղեկավարներին չհրաւիրելու հանգամանքը: Ներկայ էին միայն երկու հոգի ՀՅԴ-ից, երկու պատգամաւոր ՄԱԿ-ից, ԺՊ-ից եւ «Գործարար» խմբից: Խորհրդարանական ընդդիմութիւնը եւ արտախորհրդարանական կուսակցութիւններին հրաւէր չէր ուղարկուել: Փոխարէնը հրաւիրուած էր «Բարգաւաճ Հայաստան» կուսակցութեան հիմնադիր Գագիկ Ծառուկեանը, որը սակայն ներկայ չէր համագումարին: Եւ այնուամենայնիւ, ՀՀԿ նախագահ Անդրանիկ Մարգարեանը նկատեց, որ ինքը եւ Գագիկ Ծառուկեանը ընկերներ են, եւ նրա բացակայութիւնը որեւէ կերպ չբացատրեց, իսկ ՀՀԿ խորհրդի նախագահ Սերժ Սարգսեանը չբացառեց «Բարգաւաճ Հայաստանի» հետ ոչ միայն համագործակցութիւնը, այլեւ դաշինքով ընտրութեան գնալու հնարաւորութիւնը:

# «ԲԱՐԳԱՒԱՃ ՀԱՅԱՍՏԱՆԻ» ՀԱՄԲԵՐՈՒԹԵԱՆ ԲԱԺԱԿԸ ԼՑՒՈՒՄ Է

*ԵՐԵՒԱՆ, ԼՐԱԳԻՐ* Հանրապետական կուսակցութեան համագումարից ընդամէնը երկու օր անց, Յուլիսի 25-ին Գ. Սունդուկեանի անուան թատրոնում ակտիւի ժողով անցկացրեց «Բարգաւաճ Հայաստան» կուսակցութիւնը: Որ այդ ժողովը եղել է առաւելապէս հակահարուած Հանրապետականին, վկայում է այն, որ ժողովն իրականում եղել է գրեթէ փակ: Լրատուամիջոցներ հրաւիրուած չեն եղել, իսկ մուտքը բաւական լաւ հսկուել է եւ ներս են թողել միայն կուսակցական անցագրերով: Այդպիսով, հաւաքն առաւել խորհրդաւոր է դառնում եւ հետեւաբար առաւել ազդեցիկ: Մասնաւորապէս դահլիճում հաւաքուածները բաւական վրդովուած են եղել վերջին օրերին իրենց կուսակցութեան հասցէին ուղղուած ՀՀԿ անդամների արտայայտութիւնների բովանդակութիւնից:

Հանրապետականները «Բարգաւաճին» ոչ միայն կուսակցութիւն չեն համարում, այլ նաեւ համեմատում են առեւտրային կազմակերպութեան հետ, որը չունի գաղափարախօսութիւն: «Բարգաւաճի» ակտիւը բաւական կոշտ պատասխան է ակնկալել կուսակցութեան առաջնորդից: Գագիկ Ծառուկեանը, մեր ունեցած տեղեկութեան համաձայն, տուել է այդ բաւական կոշտ պատասխանը, ասելով, թէ կը գայ ժամանակը եւ առաւել յստակ ու համարժէք պատասխան կը տան իրենց ուղղուած յայտարարութիւններին: Հետաքրքրական է, որ ակտիւի ժողովի օրը խափանուել է Կենտրոն հեռուստաընկերութեան եթերը, որի նկարահանող խումբը տեսագրել է հաւաքը եւ այն թերեւս պէտք է ցուցադրուէր:

# «ԺԱՌԱՆԳՈՒԹԻՒՆ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆԸ ՓՈՐՁՈՒՄ ԵՆ ԿՐԿԻՆ ՎՏԱՐԵԼ ԻՐ ԳՐԱՍԵՆԵԱԿԻՑ

*«ԱԶԱՏՈՒԹԻՒՆ ՌԱՏԻՈՅ»:* Հայաստանի նախկին արտգործնախարար Րաֆֆի Յովհաննիսեանի գլխաւորած «Ժառանգութիւն» կուսակցութիւնը, որի ներկայացուցիչները Յուլիս 20-ին հնարաւորութիւն ստացել էին մուտք գործել Պարոնեանի անուան երաժշտական կոմեդիայի պետական թատրոնի շէնքում գտնուող կուսակցութեան վարձակալած տարածքը, յաջորդ օրը կրկին կանգնեցին վտարման սպառնալիքի առջեւ:

Առաւօտեան կուսակցութեան անդամներին գրասենեակից վտարելու եկած Դատական ակտերի հարկադիր կատարման (ԴԱՀԿ) ծառայութեան Կենտրոն եւ Նորք-Մարաշ ստորաբաժանման աշխատակիցները պնդեցին, որ կուսակցութեան ներկայացուցիչները «անօրինական են մտել գրասենեակ», քանի որ նրանց չի ուղեկցել ԴԱՀԿ ներկայացուցիչը:

Խնդիրն այն է, որ Երեւանի Կենտրոն եւ Նորք-Մարաշ համայնքների առաջին ատեանի դատարանի՝ Յունիսի 26-ին կայացուած եւ Յուլիսի 12-ին օրինական ուժի մէջ մտած վճիռը տարընթերցումների տեղիք է տուել: Ուստի «Ժառանգութիւնը»-ը դիմել է դատաւոր Էդուարդ Աւետիսեանին՝ իր կայացրած վճիռը պարզաբանելու խնդրանքով: Մինչ այդ վտարման գործընթացը սառեցուեց:

«Ցաւ է, որ ինքնիշխան, իբր թէ իրաւական, իբր թէ սոցիալական, իբր թէ ժողովրդավարական Հայաստանում նման ապօրինի գործողութիւնները տեղի են ունենում», - «Ազատութիւն» ռադիոկայանին ասաց «Ժառանգութիւն» կուսակցութեան նախագահ Րաֆֆի Յովհաննիսեանը: - «Կամայականութիւնների, Բաղրամեան պողոտայից եկող հրահանգների այս շարանը շարունակւում է եւ շարունակւում է, իմ կարծիքով՝ արհամարհելով քաղաքացու արժէքը, դերակատարումը եւ գիտակցութիւնը Հայաստանի Հանրապետութիւնում»:

«Այս գործողութիւնը, որին մենք այսօր վկայ ենք լինում, փաստում է, որ մենք դեռ հեռու ենք իրաւական, ժողովրդավարական երկիր լինելուց: Եւ բոլոր նախընտրական թէ հերթական խօսակցութիւնները ազգային արժէքների, քաղաքացիական հասարակութեան մասին սուտ փուչիկներ են, որովհետեւ մեր իշխանութեան, մեր պետութեան իրական պատկերը առայժմ հենց այս տեղում է», - շարունակեց նա:

Րաֆֆի Յովհաննիսեանը բնորոշմամբ, այսօր կատարուողը «վախկոտի ձեռագիր է». - «Մենք պէտք է այնպէս անենք, որ Հայաստանի Հանրապետութիւնը, իր քաղաքացին, իր նախագահը, իր ընդդիմադիրը լինի անվախ եւ լինի ազատ»:

# ԱՐՏԱՇԷՍ ԳԵՂԱՄԵԱՆԻ ԿԱՐԾԻՔՈՎ, ՀՀԿ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԸ «ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ԱՌԱՋԻՆ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆՆ ԷՐ»

*«ԱԶԱՏՈՒԹԻՒՆ ՌԱՏԻՈՅ»:* Ընդդիմադիր «Ազգային Միաբանութիւն» կուսակցութեան առաջնորդ Արտաշէս Գեղամեանի համոզմամբ, շաբաթավերջին Հայաստանի հանրապետական կուսակցութեան արտահերթ համագումարը, որը կուսակցութեան ղեկավար պաշտօններում ընտրեց պաշտպանութեան նախարար Սերժ Սարգսեանին, հայաստանեան մի քանի խոշոր գործարարների, երկրի նախագահ Ռոբերդ Քոչարեանի եւ Սերժ Սարգսեանի «բեմականացրած ներկայացման առաջին գործողութիւնն էր»:

Գեղամեանի խօսքերով, համագումարը որեւէ կապ չունէր Հանրապետական կուսակցութեան հետ. միակ նպատակը «նախագահ Քոչարեանի եւ պաշտպանութեան նախարար Սարգսեանի պաշտօնավարումը երկարաձգելն էր»:

«Ազգային Միաբանութեան» ղեկավարը վստահ է, որ, ընտրուելով ՀՀԿ Խորհրդի նախագահ, Սերժ Սարգսեանը փորձում է միջազգային հանրութեանը ցոյց տալ, որ ինքը պատրաստ է լուծել Ղարաբաղի խնդիրը եւ այդ նպատակով անգամ անդամագրւում է Հանրապետական կուսակցութեանը՝ քաղաքական մի ուժի, որը պարբերաբար դէմ է արտայայտւում տարածքները վերադարձնելու գաղափարին:

«Պարոն Սերժ Սարգսեանը, անդամագրուելով Հանրապետական կուսակցութեանը, արտաքին քաղաքական ուժերին ուզում են [Քոչարեանը եւ Սարգսեանը] ապացուցել, թէ ինչ մեծ զոհողութիւնների գնով՝ անգամ իսկ գնում-անդամակցում է այդ քաղաքական ուժին, որը իբր երկու ոտքով կանգնել եւ յայտարարում էր, որ դէմ է մի թիզ հող յանձնելուն, եւ մեծագոյն զոհաբերութիւններով հիմա այդ հարցը կարգաւորելու են: Այսինքն՝ հերթական անգամ պատրանք են ուզում ստեղծել միջազգային հանրութեան առաջ առ այն, որ Լեռնային Ղարաբաղի հարցի լուծողները Հայաստանի Հանրապետութիւնում կարող են միայն եւ միայն իրենք լինեն», - «Ազատութիւն» ռադիոկայանի հետ հարցազրոյցում պարզաբանեց Արտաշէս Գեղամեանը:

«Ազգային Միաբանութեան» առաջնորդը վստահ է, որ «բեմադրութիւնը» աւարտուելու է ոչ հեղինակների նախանշած սցենարով. - «Սցենարը աւարտին կը հասցուի՝ բայց ոչ իրենց կողմից, այլ միջազգային այն կազմակերպութիւնների կողմից, որոնք այլեւս չեն կարող հանդուրժել Հարաւային Կովկասում կրիմինալ իշխանութիւններ»:

Անդրադառնալով ՀՀԿ-ին վերջին շրջանում անդամագրուածներին՝ Գեղամեանը կարծիք յայտնեց, որ նոյն մարդիկ շատ շուտով տեղափոխուելու են ընդդիմադիր կուսակցութիւններ:

Մէկ այլ ընդդիմադիր ուժի՝ «Հանրապետութիւն» կուսակցութեան ղեկավար անդամ, ներքին գործերի նախկին նախարար Սուրէն Աբրահամեանի համար «կրկնակի, եռակի զարմանք է, որ նման գործընթացի գլխին կանգնած է նախկինում այլախոհ համարուող Անդրանիկ Մարգարեանը»:

## ԼՈՒՐԵՐ

# ԻՆՉՈ՞Ւ Է ԴԵՄԻՐՃԵԱՆԸ ԵԿԵԼ ՂԱՐԱԲԱՂ



Ստեփան Դեմիրճեան–Արկադի Ղուկասեան հանդիպում Ստեփանակերտի մէջ

Ստեփանակերտում է գտնւում Հայաստանի Ժողովրդական Կուսակցութեան ղեկավար Ստեփան Դեմիրճեանը: Նա արդէն հանդիպել է ԼՂՀ նախագահ Արկադի Ղուկասեանի հետ:

Հայաստանում տեղի ունեցող իրադարձութիւնների ֆոնին՝ Սերժ Սարգսեանի Հանրապետական կուսակցութեան ղեկավար կազմում ընտրուելը, ընդդիմութեան անպատրաստուածութիւնը, Արթուր Բաղդասարեանի լռութիւնը ընդդիմութեան հնարաւոր առաջնորդներից մէկի այցը Ղարաբաղ կարելի է տարբեր կերպ գնահատել: Բայց ոչ որպէս սովորական մի հայի ցանկութիւն՝ գալ Ղարաբաղ եւ տեսնել այս երկիրը սեփական աչքերով:

Հայաստանի քաղաքականութեան մէջ ղարաբաղեան գործօնի մասին շատ է խօսուել: Ընդ որում, փորձագէտները նշում են, որ Հայաստանի եւ Ղարաբաղի իշխանութիւնները փոխկապուած են: Ղարաբաղը գտնւում է Հայաստանից ֆինանսական կախուածութեան մէջ, իսկ Հայաստանի իշխանութիւնների ոտքերի տակի հողի ամրութիւնը կախուած է նրանից, որ Ղարաբաղում յանկարծ չապստամբեն:

1998-ին «հաշուեկշիռը» փոխուեց ի վնաս Ստեփանակերտի, երբ ԼՂՀ հեռացուեց բանակցային գործընթացից: Դրանից յետոյ ղարաբաղեան իշխանութիւնները կորցրել են Հայաստանի վրայ ազդելու որոշ լծակներ: Աւելի ճիշդ, այն ժամանակուայ Ղարաբաղի իշխանութեան մի մասը վերցրել է ազդեցութեան լծակները եւ տեղափոխուել Հայաստան:

Ինչ վերաբերում է Հայաստանի կուսակցութիւններին, ապա միայն Դաշնակցութիւնը Ղարաբաղում թեւ ունի: Ճիշդ է, այն որպէս առանձին կառոյց է գրանցուած, սակայն բոլոր իր քայլերը համաձայնեցնում է կենտրոնի հետ: Մնացած հայաստանեան կուսակցութիւնները հարկ չեն համարում Ղարաբաղում ներկայացուցչութիւններ բացել: Նորերս Սերժ Սարգսեանն էլ յայտարարեց, որ իմաստ չի տեսնում Ղարաբաղում Հանրապետական կուսակցութեան ներկայացուցչութիւն ունենալ: Իսկապէս, ի՞նչ իմաստ կայ: Չէ որ ղարաբաղցիները չեն մասնակցում հայաստանեան ընտրութիւններին, եւ Ղարաբաղի գործօնը ապահովելու համար բաւական է իշխանութիւնների հետ պայմանաւորուել: Իսկ Ղարաբաղի ընտրողները թող գնան եւ Հայաստանից անկախ 7 կուսակցութիւններին ընտրեն:

Բայց չէ՞ որ իրավիճակը փոխուել է: Չէ՞ որ Հայաստանում փոփոխութիւններ են սպասւում: Նախագահ Քոչարեանը յայտարարել է, որ չի առաջադրուելու երրորդ անգամ: Իրենց նպատակների մասին ակնարկ են արել Սերժ Սարգսեանն ու Վարդան Օսկանեանը: Հանրապետականների հետ ընկերութիւն չեն անում Աղուան Յովսէփեանը եւ Գագիկ Ծառուկեանը:

Ո՞ւմ կը սատարեն ղարաբաղեան իշխանութիւնները: Որքանո՞վ է դա կարեւոր: Գուցէ դրա համար է Ստեփանակերտ եկել Ստեփան Դեմիրճեանը:

ՆԱԻՐԱ ՀԱՅՐՈՒՄԵԱՆ

# ԹՈՅԼ ՉՏԱՆՔ ԽՆԴՐԻ ԱՊԱԿԱՆՈՒՄԸ

Յուլիսի 25-ին յայտարարութիւն է տարածել Մարդու Իրաւունքների եւ ժողովրդավարութեան ինստիտուտը, ուր դիրքորոշում է արտայայտում Ղարաբաղի հարցի կարգաւորման գործընթացի առնչութեամբ:

«Արցախեան հարցը Հայ ժողովրդի պայքարն է յանուն արդարութեան եւ ճշմարտութեան, յանուն արժանապատուութեան եւ զարգացման, յանուն պետականաշինութեան եւ ազգային անվտանգութեան: Թոյլ չտանք դրա ապականումը եւ այլասերումը յանուն ընտրախաւերի իշխանական ախորժակի եւ նկրտումների», ասուած է կազմակերպութեան տարածած յայտարարութեան մէջ: ՄԻԺԻ-ն նշում է, որ Ղարաբաղի հարցի կարգաւորումը պէտք է հիմնուած լինի «ԱՐԴԱՐՈՒԹԵԱՆ եւ ՃՇՄԱՐՏՈՒԹԵԱՆ հիմնական սկզբունքների վրայ, առաջնորդուի ժողովրդավարութեան ու Մարդու Իրաւունքների հիմնարար սկզբունքներով»:

ՄԻԺԻ-ն յայտարարում է, որ գործընթացը պէտք է լինի հրապարակային եւ որոշումը Լեռնային Ղարաբաղի Հանրապետութեան՝ ԼՂՀ ժողովրդի եւ քաղաքացիների իրաւունքն է:

«Պէտք է պահպանուեն ազատագրուած տարածքները՝ որպէս Արցախի ժողովրդի անվտանգութեան հիմնական երաշխիք եւ ցամաքային կապ Հայաստանի Հանրապետութեան հետ: Ընդունելի չէ որ-է շուտափոյթ լուծում, որը ոտնատակ կ'անի ԱՐԴԱՐՈՒԹԵԱՆ, ՃՇՄԱՐՏՈՒԹԵԱՆ եւ Մարդու Իրաւունքների հիմնարար սկզբունքները: Լեռնային Ղարաբաղի Հանրապետութիւնը որպէս այս իրաւունքների եւ ժառանգութեան իրական կրողը, պէտք է դառնայ դիւանագիտական գործընթացների ու նա- բանակցութիւնների լիիրաւ կողմ եւ լիարժէք մասնակից: Պէտք է բացառուի որ-է զիջում կամ փոխզիջում. հայկական կողմը զիջելու որ-է բան չունի» ասւում է կազմակերպութեան յայտարարութեան մէջ:

ՄԻԺԻ համոզմամբ, Ղարաբաղի խնդրի «շուտափոյթ լուծումը շուտափոյթ լուծումը» կը ծառայի աշխարհաքաղաքական եւ ներքին տիրապետող այլասերուած ընտրախաւերի անձնապաշտ եւ նիւթապաշտ շահերին, կը համընկնի արտաքին գերուժերի եւ ուժերի նմանատիպ շահերին, որոնք անպայման չէ, որ համընկնեն Հայ ժողովրդի՝ Մարդու Իրաւունքների եւ Ժողովրդավարութեանը ձգտող ԱՐԴԱՐ եւ ՃՇՄԱՐԻՏ շահերին»:

# ԻԳՈՐ ԼԵՒԻՏԻՆ. «ՀԱՅԿԱԿԱՆ ԻՆՔՆԱԹԻՌԻ ՎԹԱՐԻ ՊԱՏՃԱՌԸ ՄԱՐԴԿԱՅԻՆ ԳՈՐԾՕՆՆ Է»



Ռուսաստանցի նախարար Իգոր Լեւիտին

«Սոչիի մերձակայքում հայկական A-320 ինքնաթիռի վթարի պատճառը մարդկային գործօնն է», - ԻՏԱՌ-ՏԱՍՍ-ի փոխանցմամբ, Չորեքշաբթի, Յուլիս, 26-ին կայացած ասուլիսում յայտարարել է Ռուսաստանի տրանսպորտի նախարար, վթարի պատճառները ուսումնասիրող կառավարական յանձնաժողովի նախագահ Իգոր Լեւիտինը:

Միջպետական աւիացիոն կոմիտէի նախագահ Տատիանա Անոդինան յայտարարել է, որ եղանակային անբարենպաստ պայմաններում վայրէջքի ժամանակ հրամանատարը «պատշաճ կերպով չի վերահսկել ինքնաթիռի թեքութիւնը եւ բարձրութիւնը»: Նրա խօսքերով, «հրամանատարի նման գործողութիւնների պայմաններում երկրորդ օդաչուն նոյնպէս չի ապահովել վայրէջքի ցուցանիշների վերահսկումը»:

Վթարի պատճառների հետաքննութիւնը իրականացնում էր Միջպետական աւիացիոն կոմիտէի տեխնիկական յանձնաժողովը՝ «Էյրբաս» ընկերութեան ֆրանսիացի փորձագէտների մասնակցութեամբ:

Մայիսի 3-ին «Արմաւիա» ընկերութեան Երեւան - Սոչի չուերթն իրականացնող A-320 ինքնաթիռի վթարի հետեւանքով զոհուել էր 113 մարդ:

# ԵՈՒՐԻ ՄԵՐԶԼԵԱԿՈՎ. «ՅԱՄԱՆԱԽԱԳԱՀՆԵՐԸ ԿԸ ՅԱՆԴԻՊԵՆ ՕԳՈՍՏՈՍԻ ՍԿԶԲԻՆ ՓԱՐԻԶՈՒՄ»

ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահները մտադիր են ղարաբաղեան հակամարտութեան կարգաւորման շուրջ հերթական կոնսուլտացիաները անցկացնել Օգոստոսի սկզբին Փարիզում:

Մինսկի խմբի ռուսաստանցի համանախագահ Եուրի Մերզլեակովը ատրպէյճանական «Թրենդ» գործակալութիւն հարցազրոյցում յայտնել է, որ հանդիպման հիմնական նպատակը ամերիկացի համանախագահ Մեթիւ Բրայզայի՝ Յուլիսի վերջին տարածաշրջան կատարելիք այցի արդիւնքների քննարկումն է:

Մերզլեակովը նշել է, թէ առայժմ յայտնի չէ, թէ ի՞նչ որոշումներ են կայացուելու եւ քննարկուելու է արդեօ՞ք կումերի հանդիպումների հերթական փուլերի կազմակերպման հարցը:

«Մենք դա կ'որոշենք, երբ հանդիպենք: Ամերիկացի համանախագահը կ'ունենայ վերջին շփումները, կը խօսի նախագահների հետ, եւ, հաւանաբար, ինչ-որ գնահատականներ կը տայ», - նշել է Եուրի Մերզլեակովը:

Մեթիւ Բրայզան, ինչպէս «Ռեգնում» գործակալութեանը յայտնել են Լեռնային Ղարաբաղի արտգործնախարարութիւնից, տարածաշրջանային այցը կը սկսի Ստեփանակերտից, ուր կը ժամանի Յուլիսի 29-ին: Նախատեսւում է նրա հանդիպումը Արկադի Ղուկասեանի հետ:

# ԱԶԱՏ ԵՒ ԱՐԴԱՐ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ԿԱՅԱՑՈՒՄԸ ԱՌԱՋՆԱՀԵՐԹ Է

Շարունակուած էջ 1–էն

տակ Հայաստանի համար:

«Գալիք ընտրութիւնը ինծի կը թուի որ կենսական նշանակութիւն կ'ունենայ Հայաստան-Եւրամիութիւն յարաբերութեան ոլորտի վրայ: Կրկնեմ, որ մեր կարծիքով, ցանկացած ընտրութիւն պէտք է տեղի ունենայ համաձայն մեր մօտ ընդունուած չափանիշներու», ըսած է Փիթըր Սեմնեբի: Ան չուզեց խօսիլ հետեւանքներու մասին՝ միջազգային չափանիշերուն չհամապատասխանող ընտրութիւններու կայացման պարագային:

«Կ'ակնկալեմ, որ ընտրութիւնները ըլլան ազատ եւ արդար եւ այդ պատճառով այժմ ենթադրութիւններու վրայ հիմնուած չեմ ուզեր խօսքեր ըսել, թէ ինչ պատժամիջոցներ կրնան ըլլալ՝ եթէ ընտրութիւնները չըլլան ազատ ու արդար: Ի վերջոյ, Հայաստանը ինքն է որ պարտաւորութիւն ստանձնած է՝ կազմակերպելու եւրոպական չափանիշի ընտրութիւններ»:

Մամուլի ասուլիսի ընթացքին ամէն անգամ որ Վարդան Օսկանեան փորձած է նիւթը շեղել եւ խօսիլ այլ հարցերու մասին՝ Եւրոպայի Միութեան ներկայացուցիչը վերադարձած է ընտրութիւններու հարցին:

ՄԱՍԻՍ
ԱՄԵՆԱՎՍՏԱՀԵԼԻ ԱՂԲԻՒՐԸ ՀԱՅՐԵՆԻ ԼՈՒՐԵՐՈՒ

**ՔԱՂԱՔԱԿԱՆ**

# ԻՍՐԱՅԷԼ, ԱՄԵՐԻԿԱ ԵՒ ՀԻՄԱ՝ ԼԻԲԱՆԱՆ

*ՅԱՐՈՒԹԻՒՆ ՍԱՂՐԵԱՆ*

Բ.

Անգամ մը եւս, Լիբանան կ'ենթարկուի պատերազմի ամենաբիրտ քանդումներուն: Մօտ 750 հազար քաղաքացիներ տեղահան կ'ըլլան: Ամբողջ շէնքեր, թաղամասեր, ելեկտրական հոսանքի կայաններ, թելեվիզիոնային կայաններ քարուքանդ կ'ըլլան, Լիբանանի օտարերկրեայ բնակիչներ, հազարաւորներով երկրէն դուրս կը փախչին, տրամադրելի բոլոր միջոցներով, յաճախ ողբալի պայմաններու տակ: Ամբողջ ընտանիքներ տեղահան կ'ըլլան: Անգամ մը եւս, հազիւ քաղաքացիական պատերազմէ մը ազատելով, վերականգնող Լիբանանը կ'ենթարկուի անարգ յարձակումներու, օդէն, ցամաքէն եւ ծովէն: Իսրայէլեան բանակի ահեղ ոյժը, իր բոլոր սաստկութեամբ, օդանաւերով, հրասայլերով կը թափի Լիբանանի քաղաքներուն եւ գիւղերուն վրայ: Եւ ասիկա, ահաւասիկ աւելի քան երկու շաբաթներ, նիւթական, մարդկային եւ քաղաքակրթական անհաշիւ քանդումներ եւ զոհեր խլելով: Դժբախտութիւնը հոն է որ ոչ միայն լիբանանցին, այլ ամբողջ աշխարհի մարդկութիւնը, երկիրներ, կառավարութիւններ, անզօր եւ անկարող, կը հետեւին պատերազմական գործողութեանց եւ անոնց պատճառած ահաւոր վնասներուն: Հոսկէ եւ հոնկէ, տկար կարեկցութեան, գութի եւ մարդասիրական օգնութեան ճղճիմ արտայայտութիւններ, որոնք ոչ մէկ ձեւով կարող են կասեցնել կազմակերպուած բանակի մը գրոհը անզէն եւ դիմադրելու անկարող ժողովուրդի մը վրայ: Կարելի է էջեր եւ էջեր լեցնել կատարուող ողբերգութեան նկարագրութիւնը ընելու համար:

Աշխարհի ճակատագիրը իրենց ձեռքերուն մէջ ունեցող երկիրներն ալ, որոնցմէ գլխաւորը, ան որ իր ոյժով եւ կարելիութիւններով կրնայ, եւ ակնկալուած է կասեցնելու խելայեղ մոլեգնութիւնը, եւ գէթ ժամանակաւոր վերջ մը դնելու տեղի ունեցող արիւնահեղութեանց եւ քանդումներուն, այսինքն, Ամերիկայի Միացեալ Նահանգները, կարծես լուսանցքային ներկայութիւն մըն է այս բոլորին դիմաց, սինիքաբար յայտարարելով որ «Իսրայէլ իրաւունք ունի ինքզինք պաշտպանելու»: Պաշտպանելու որո՞ւ դէմ:

Իսրայէլ ահեղ միջոցներու դիմած է երկու ճակատներու վրայ, Կազա եւ Լիբանան: Ամերիկեան զէնքերով յագեցած Իսրայէլ, իր պատերազմական ամենէն ոյժով կը յարձակի, որոշապէս բնաջնջելու համար ահաբեկչական գործողութիւններ կատարող «Համաս» եւ «Հզպալլահ» կոչուած կազմակերպութիւնները:

Ինչո՞ւ: Քանի մը շաբաթներ եւ օրեր առաջ, «Համաս»ի մարդիկը քանի մը իսրայէլացի զինուոր սպաննած են եւ մէկ ալ պատանդ բռնած: Իսկ «Հզպալլահ»ի ահաբեկիչները Լիբանանեան եւ Իսրայէլեան սահմանին վրայ, քանի մը իսրայէլացի զինուոր սպաննած եւ երկու հատ ալ գերի բռնած էին: Եւ Իսրայէլի պահանջքը անոնց, ողջերուն վերադարձը մերժուեցաւ, «Համաս»ի եւ «Հզպալլահ»ի կողմէ: Իսրայէլ, ըստ երեւոյթին նախապէս ծրագրուած հակայարձակումի կ'անցնէր, վերոյիշեալ քանդումները պատճառելով Կազայի եւ խեղճ Լիբանանի անմեղ բնակչութեան եւ հողամասերուն վրայ: Ըստ երեւոյթին դարձեալ, կիրքերը տակաւին չեն յագեցած, պատերազմական գործողութիւնները տակաւին կը շարունակուին, սպասելով որ աշխարհի միակ գերզօր տէրութիւնը լրջօրէն մտահոգուի այս դժոխային վիճակին վերջ մը տալու, կամ գոնէ պատերազմական գործողութիւնները դադրեցնելու: Կ'երեւի Ամերիկան ալ կը սպասէ որ Իսրայէլ ամբողջացնէ իր ծրագիրը, յատկապէս «Համաս»ը եւ «Հզպալլահ»ն տկարացնելով կամ ոչնչացնելով: Եւրոպա, ՄԱԿ, Արաբական երկիրներ, յատկապէս Եգիպտոս եւ Յորդանան, բոլորը անկարող են լուծում մը առաջարկելու եւ քանդումներու վերջ մը տալու:

«Համաս»ի եւ «Հզպալլահ»ի կողքին, ամբաստանուող երկու երկիրներ ալ կան, Սուրիան եւ Իրանը, որոնք ըստ Ամերիկայի եւ իր դաշնակից պաշտպանեալ Իսրայէլի, կը գտնուին այս երկու ահաբեկչական կազմակերպութեանց կողքին եւ կը պարենաւորեն զանոնք զէնքերով, հրթիռներով եւ մասնագէտներով:

***

Մինչ այս տողերը կը գրուին, խօսք կայ որ Իսրայէլ գրաւէ Լիբանանի Հարաւային հողամասը զոր պարպած էր 2000 թուականին, եւ անկէ վտարէ «Հզպալլահ»ի զինեալ ահաբեկիչները, որոնք ամենօրեայ «Քաթուշա» կոչուած հրթիռներով կը ռմբակոծեն Իսրայէլի տարբեր քաղաքներ, նիւթական եւ մարդկային զոհեր պատճառելով:

Պահ մը եթէ առարկայական ըլլալու փորձ մը կատարենք, պիտի ընդունինք որ այս նորագոյն բռնկումի պատասխանատուները «Համաս»ն ու «Հզպալլահ»ն են որ իրենց պախարակելի սահմանային գործողութիւններով իսրայէլեան բանակի մէջ զոհեր պատճառեցին եւ պատանդներ բռնեցին: Այս պատահածները որեւէ ձեւով արդարանալի չեն, եւ յստակ ալ չէ թէ եթէ այդ պատանդները անմիջապէս վերադարձուէին, այս բոլոր տեղի ունեցածները կրնային կանխուիլ: Այդ պատանդներէն մէկը՝ «Համաս»էն, միւս երկուքը՝ «Հզպալլահ»էն, ըստ երեւոյթին, իսրայէլեան բանտերու մէջ գտնուող հազարաւոր բանտարկեալներ փոխանակելու պէտք է ծառայէին:

Հարցումը կարելի՞ չէ հարցնել: Արդեօք բանակցութեանց առիթ տրուեցա՞ւ: Ինչո՞ւ յատկապէս Ամերիկան չնախաձեռնեց եւ կամ չպարտադրեց Իսրայէլին քիչ մը եւս համբերել՝ փոխանակ ամբողջական պատերազմի դիմելու: Հոս եւս մարդ կրնայ կասկածիլ թէ Ամերիկայի լռելեայն համաձայնութիւնը կը վայելէր Իսրայէլեան դաժան հակադարձը: Որքան արդարանալի է կամ էր երեք պատանդներու համար, ամբողջ երկիր մը, այս պարագային, խեղճ Լիբանանը զոհ դարձնել «Հզպալլահ»ի անզիջող դերին, եւ քարուքանդ ընել զայն: Անհաւասար գրոհ մը՝ եղած անարդարութեան մը դէմ:

***

Այս օրերուն, հզօր Ամերիկայի արտաքին գործերու պաշտօնատար, Գոնտոլիզա Ռայս, երկար խորհրդակցութիւններէ ետք ՄԱԿի ընդհանուր քարտուղար Քոֆի Անանի հետ, կ'ուղղուի Մերձաւոր Արեւելք, առաջին առիթով տեսնուելու Ամերիկայի պաշտպանեալ Իսրայէլի ղեկավարութեան հետ: Զէ՞ր կրնար արդեօք աւելի կանուխ շարժիլ, եւ հաւանօրէն արգիլէր Լիբանանի քանդումը: Հոս եւս սադայէլական հաշիւներ կան, սպասելով որ Իսրայէլ ամբողջացնէ իր սկսած քանդումի եւ պատիժի գործողութիւնները: Շատ հաւանօրէն, ուշ կամ կանուխ, զինադադար մը պիտի հաստատուի, սակայն ի՞նչ գնով: Երկրի մը, Լիբանանի ամբողջական քանդումէն ետք, երկիր մը որ ինք եւս վստահաբար զոհ մըն էր ոչ միայն «Հզպալլահ»ին, այլ ամբողջ Մերձաւոր Արեւելեան 60 տարիներէ ի վեր շարունակուող տագնապին, «Համաս»ներն ու «Հզպալլահ»ները այդ շարունակուող արաբ-իսրայէլեան տագնապին ծնունդն ու արդիւնքն էին: Եւ ուղղակի ծիծաղելի պիտի ըլլայ ենթադրել որ այս վերջին բռնկումներուն իբրեւ եզրակացութիւն, անոնք պիտի հրապարակէն վերցուին եւ Իսրայէլ իր հանգիստը գտնէ:

Լուծում կամ լուծումներ կա՞ն այս բոլորին: Տեսական գետնի վրայ, կարելի է խորհիլ որ չկայ հարց որ ի վերջոյ իր լուծումը չունենայ, մանաւանդ եթէ կողմերու միջեւ լուծումներու յանգելու տրամադրութիւն եւ պատրաստակամութիւն գոյութիւն ունի: Պարզ ու յստակ կարելի է ըսել հետեւեալը: Այնքան ատեն որ աշխարհի միակ գերզօր պետութիւնը, Ամերիկայի Միացեալ Նահանգները չվերանայի ցարդ իր հետեւած քաղաքականութիւնը, եւ մնայ անխոնջ եւ միակողմանի պաշտպանը Իսրայէլի, եւ չորդեգրէ հաւասարակշռուած դիրք՝ հակառակորդ կողմերու միջեւ, անվարան կարելի է ըսել որ այս նորագոյն ողբերգութիւնը պիտի չըլլայ վերջինը:

Մինչ այդ, մեղք եղաւ Լիբանանին:



Իսրայէլեան օդուժի բիրտ ռմբակոծումներու հետեւանքով Պէյրութի հարաւային շրջանի քարուքանդ եղած թաղամասերը

Blue Cross of California
A.B.A. INSURANCE SERVICES
Blue Shield of California
ԱՌԱՋԻՆ ՀԱՅԿԱԿԱՆ ԿԱՅՔԷՋԸ, ՈՐ ՁԵԶԻ ԿԸ ԲԱՑԱՏՐԷ
ԿԵԱՆՔԻ ԵՒ ԱՌՈՂՋՈՒԹԵԱՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ
Հեռ. 818-500-9585
Այցելեցէք www.HyeInsurance.com

**ԱԶԳԱՅԻՆ**

# ԼԵՒՈՆ ՏԷՐ-ՊԵՏՐՈՍԵԱՆԻ ԵԼՈՅԹԸ ԱՆՎՏԱՆԳՈՒԹԵԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏՈՒՄ
## 1998 Թ. ՅՈՒՆՈՒԱՐԻ 8

**Հայաստանի Հանրապետութեան Առաջին Նախագահ Լեւոն Տէր Պետրոսեանի ծննդեան վաթսունամեակին առթիւ, լոյս է տեսել իր ելոյթների, յօդուածների եւ հարցազրոյցների ընտրանի հաւաքածոյ մը, որ ընդգրկում է 1983–1998 ժամանակաշրջանը: Գիրքը կոչւում է «Ընտրանի» եւ բաղկանում է 727 էջերից:**

**«Մասիս»ի ընթերցողներին ներկայացնում ենք այս գրքում տեղ գտած առկայ նիւթերից մէկը:**




Խօսքը 1998 թուականի Յունուարի 7-ից 8-ը տեղի ունեցած ՀՀ ազգային անվտանգութեան խորհրդի նիստում Տէր-Պետրոսեանի ունեցած ելոյթի մասին է: Այդ նիստում քննարկուել են Լեռնային Ղարաբաղի հարցի կարգաւորման ուղիները, եւ հենց այստեղ է տեղի ունեցել իշխանութեան այսպէս ասած «յաղթողական» եւ «պարտուողական» թեւերի բաժանումը: Այս ելոյթից մօտ մէկ ամիս անց Տէր-Պետրոսեանը հրաժարական էր տալու: Իսկ Անտուեալ նիստին մասնակցել են Լեւոն Տէր-Պետրոսեանը, Բաբգէն Արարքցեանը, Ռոբերդ Քոչարեանը, Գագիկ Յարութիւնեանը, Ալեքսանդր Արզումանեանը, Վազգէն Սարգսեանը, Սերժիկ Սարգսեանը, Վանօ Սիրադեղեանը, Արկադի Ղուկասեանը, Լեոնարդ Պետրոսեանը, Օլէգ Եսաեանը, Սամուէլ Բաբաեանը, Արա Սահակեանը, Կարապետ Ռուբինեանը, Տէր-Յուսիկ Լազարեանը, Վարդան Օսկանեանը, Շահէն Կարամանուկեանը, Լեւոն Զուրաբեանը, Յովհաննէս Իգիթեանը, Բագրատ Ասատրեանը: Սոյն հրապարակման մէջ դուրս են թողնուած պետական գաղտնիք պարունակող տեղեկութիւնները:

*Նախքան բուն ելոյթին անցնելը, կարծում եմ, աւելորդ չէ ամփոփ ձեւով ներկայացնել երկու օրուայ ընթացքում այստեղ հնչած որոշ կարծիքներ, որոնք կարեւոր են քննարկուող հարցի համակողմանի լուսաբանման տեսակէտից: Նախապէս ներողութիւն եմ խնդրում, եթէ այդ ամփոփումը որոշ դէպքերում չի ապահովում կարծիքների բառացի վերարտադրութիւնը. յամենայն դէպս դրանց բովանդակութեան ճշգրտութիւնը ես երաշխաւորում եմ: Եւ այսպէս.*

*«Շրջափակումները չեն ազդում Հայաստանի տնտեսական զարգացման վրայ: Ամէն ինչ կախուած է կառավարութեան աշխատանքի ճիշդ կազմակերպումից եւ ուժերի մոբիլիզացիայից» (Ռ. Քոչարեան, Վ. Սարգսեան):*

*«Ղարաբաղեան հակամարտութիւնը խոչընդոտ չէ արտասահմանեան ներդրումների համար: Ներդրումների հոսքի ապահովումը կախուած է ակտիվ ու լայնամասշտաբ մարկետինգային քաղաքականութիւնից, մասնաւորապէս ինտերնետի հնարաւորութիւնների մաքսիմալ օգտագործումից» (Ռ. Քոչարեան):*

*«Հայաստանի բիւջէն կարելի է երկու-երեք անգամ մեծացնել՝ պայքարելով ստուերային տնտեսութեան դէմ եւ խստացնելով հարկերի հաւաքման պրոցեսը» (Ռ. Քոչարեան, Վ. Սարգսեան):*

*«Սփիւռք-Հայաստան յարաբերութիւնների սերտացման դէպքում Սփիւռքից կարելի է ստանալ տարեկան 400-500 միլիոն տոլարի օգնութիւն» (Ռ. Քոչարեան, Վ. Սարգսեան):*

*«Արտագաղթն այլեւս չի սպառնում Հայաստանին, եւ ընդհակառակը՝ արդէն դիտւում են ներգաղթի միտումներ: Դրա ապացոյցն է այն, որ եթէ անցեալ տարի դպրոցներում երեք-չորս առաջին դասարաններ էին բացւում, ապա այս տարի բացուել են վեց-եօթ դասարաններ» (Ռ. Քոչարեան):*

*«Հնարաւոր չէ Հայաստանը լրիւ մեկուսացնել: Մեզ կ'օգնեն Ռուսաստանը եւ Իրանը: Իսկ եթէ ինչ-ինչ պատճառներով Ռուսաստանը ղադարեցնի զէնքի մատակարարումը, ապա մենք զէնք կ'ստանանք Իրանից» (Վ. Սարգսեան):*

*«Իսրայէլի օրինակը ցոյց է տալիս, որ կարելի է զարգանալ նաեւ մեկուսացման պայմաններում» (Ռ. Քոչարեան):*

*«Ղարաբաղեան կարգաւորման պրոցէսում պէտք է վարել ակտիվ սառեցման քաղաքականութիւն» (Վ. Սարգսեան, Ս. Սարգսեան):*

*«Ղարաբաղի հարցում հիմա կարիք չունենք փոխզիջման գնալու: Կը զիջենք այն ժամանակ, երբ հարկադրուած կը լինենք» (Վ. Սարգսեան):*

*«Ղարաբաղում ստատուս-քվոյի պահպանումը մեզ համար վտանգաւոր չէ» (Ա. Ղուկասեան):*

*«Ապաշրջափակումը հնարաւոր չէ ապահովել. ցանկացած պատրուակով Ատրպէյճանը կարող է խախտել այն» (Ա. Ղուկասեան):*

*«Փուլային տարբերակը կարող է մեծացնել պատերազմի վտանգը: Նոր դիրքերը մեզ համար դժուար կը լինի ամրացնել» (Ս. Սարգսեան):*

*«Փուլային տարբերակը Ղարաբաղի ժողովուրդը վատ կ'ընկալի, Ղարաբաղում արտագաղթ կը սկսուի» (Օ. Եսաեան):*

*«Մենք համոզուած ենք, որ կարող ենք անկախ լինել. մեզ համար անընդունելի է մնալ Ատրպէյճանի կազմում» (Լ. Պետրոսեան):*

*Այս կարծիքներից մի քանիսին ռեպլիկի կարգով արդէն արձագանքել եմ, ուստի հարկ չեմ համարում կրկնել իմ առարկութիւնները: Միւսներին կը փորձեմ անդրադառնալ ելոյթի ընթացքում:*

* * *

*Այժմ անցնենք բուն նիւթին: Ինչպէս իմ բացման խօսքում ասացի, գոյութիւն ունի Ղարաբաղի հարցի կարգաւորման երեք հնարաւորութիւն.*

*1. Փաթեթային տարբերակ.*

*2. Փուլային տարբերակ.*

*3. Ստատուս-քվոյի պահպանում:*

*Ես այսօր չեմ պատրաստւում խօսել առաջին երկու տարբերակների առաւելութիւնների ու թերութիւնների մասին, քանի որ նախ՝ բոլորդ էլ դրանց ծանօթ էք, եւ ապա՝ մեր դիտողութիւններն ու վերապահումներն այդ տարբերակների վերաբերեալ արտայայտուած են Մինսկի խմբի համանախագահութեանն ուղղուած պաշտօնական պատասխաններում (այդ փաստաթղթերը ձեզ բաժանուած են): Բացի այդ, նշուած տարբերակների մասին խօսելն իմաստ կ'ունենայ միայն այն բանից յետոյ, երբ պարզենք՝ մենք պատրա՞ստ ենք կամ համոզուա՞ծ ենք, որ Ղարաբաղի հարցը պէտք է լուծել այսօր, թէ՞ դեռ անհրաժեշտ է սպասել, այսինքն՝ առայժմ պահպանել ստեղծուած ստատուս-քվոն՝ յոյս ունենալով, թէ ժամանակը մեր օգտին կ'աշխատի, եւ Ղարաբաղի հարցը կը լուծուի ինքնըստինքեան՝ աշխարհը վաղ թէ ուշ կը հաշտուի կատարուած փաստի հետ: Քանի որ ինձ մօտ տպաւորութիւն է առաջանում, որ շատերը հակուած են երրորդ տարբերակին, ուստի ես կը կենտրոնանամ բացառապէս դրա վրայ:*

*Տեսականօրէն չեմ ժխտում, որ ստատուս-քվոյի պահպանումը թերեւս կարող էր լինել լաւագոյն ելքը, քանի որ ի տարբերութիւն առաջին երկու տարբերակների, որոնց հիմքում ընկած է փոխզիջման գաղափարը, այն ենթադրում է բացառապէս յաղթական լուծում: Սակայն դա միայն տեսականօրէն: Իսկ գործնականում այդ ճանապարհն ընտրելուց առաջ մենք պարտաւոր ենք պատասխանել այն հարցին, թէ Հայաստանը, որ Ղարաբաղի գոյութեան միակ երաշխիքն է, ի վիճակի՞ է երկար ժամանակ պահպանել ստատուս-քվոն՝ միաժամանակ ապահովելով իր նորմալ կենսագործունէութիւնը, տնտեսական բարգաւաճումը, ռազմական հզօրութիւնը, ինչպէս նաեւ յաղթահարելով շրջափակումների յարուցած դժուարութիւններն ու դիմագրաւելով միջազգային աճող ճնշումները: Կարող էք ինձ յոռետես համարել, բայց ես չեմ հաւատում նման հրաշքի: Եւ ահա, թէ ինչու:*

*Վերջին տարիների մակրոտնտեսական ցուցանիշների ուսումնասիրութիւնն ինձ բերել է այն համոզման, որ Հայաստանն իր տնտեսական զարգացման մէջ արդէն բախւում է, կարելի է ասել, ֆիզիկական լիմիտների, որոնք կախուած չեն կառավարութեան գործունէութեան արդիւնաւէտութիւնից կամ այլ սուբիեկտիւ գործօններից: Թէ ինչ լիմիտների մասին է խօսքը, ես կ'ասեմ յետոյ, իսկ առայժմ դիտարկենք այդ մակրոտնտեսական ցուցանիշները* (տես աղիւսակը)*:*

*Աղիւսակից պարզորոշ կերպով երեւում է, որ թէեւ գրեթէ բոլոր ցուցանիշների գծով աճը դեռեւս շարունակւում է, բայց արդէն առկայ է նրա տեմպի դանդաղեցման ակնյայտ միտում: Եւ ամբողջ դժբախտութիւնն այն է, որ այս պրոցէսը ոչ միայն շարունակուելու է, այլեւ մէկ-երկու տարուց մեր տնտեսութեան մէջ դրսեւորուելու են նաեւ անկման միտումներ:*

*Ի՞նչն է պատճառը: Արդեօ՞ք մեր վատ աշխատանքը, արդեօ՞ք տնտեսական բարեփոխումների ձախողումը կամ դանդաղեցումը: Զեմ ժխտում, որ այստեղ կան ռեզերվներ, եւ որ մեր աշխատանքի բարելաւման ու վերափոխումների արագացման շնորհիւ կարելի է հասնել որոշ դրական տեղաշարժի: Բայց միեւնոյն է, դա չի կարող էապէս ազդել Հայաստանի տնտեսական զարգացման վրայ, քանի որ երեւոյթն, իմ կարծիքով, կախուած է շատ աւելի օբիեկտիւ ու խորքային գործօններից:*

*Այդ գործօններն են, ահա, որ ես կոչում եմ Հայաստանի տնտեսական զարգացման ֆիզիկական լիմիտներ: Դրանք են՝ ղարաբաղեան հակամարտութեան պատճառով խորացող Հայաստանի քաղաքական մեկուսացումը, շրջափակումները եւ արտասահմանեան ներդրումների բացակայութիւնը: Քանի դեռ չեն վերացել այդ գործօնները, ինչպիսի իշխանութիւն էլ լինի Հայաստանում, ինչպիսի հանճարեղ մարդիկ էլ գտնուեն կառավարութեան ղեկին, միեւնոյն է, ոչ միայն չի յաջողուելու ապահովել երկրի տնտեսական զարգացման նորմալ ընթացքը, այլեւ հնարաւոր չի լինելու լուծել առկայ սոցիալական խնդիրները:*

*Աշխատավարձերը, թոշակները, նպաստները մնալու են նոյն խղճուկ մակարդակին, Աղէտի գօտու վերականգնումը ձգձգուելու է տասնեակ տարիներ, խորանալու է գործազրկութիւնը: Բիւջետային աշխատողների աշխատավարձն այսօր կազմում է շուրջ 20 դոլար: Եթէ յաջողուի անգամ այդ գծով ապահովել տարեկան 20-30 տոկոսի աճ, ապա պատկերացրէք, ինչ աշխատավարձ ենք մենք վճարելու հինգ տարի յետոյ: 40-50 տոլա՞ր: Նկատի ունենալով դրամի արժեզրկումը եւ անխուսափելի սղաճը՝ դժուար չէ կռահել, որ հինգ տարի յետոյ այդ 40-50 տոլարը կունենան նոյն արժէքը, ինչ այսօրուայ 20 տոլարը, այսինքն՝ բնակչութեան կենսամակարդակի որեւէ բարելաւում տեղի չի ունենայ, եթէ Աստուած, իհարկէ, մեզ փրկի վատթարացումից: Եթէ չեմ սխալւում, այստեղ կարծիք արտայայտուեց, որ մեր ժողովուրդը յանուն Ղարաբաղի դեռ կը դիմանայ, եւ որ Հայաստանին սոցիալական բունտ չի սպառնում: Ես էլ*

| | 1994 | 1995 | 1996 | 1997* |
|---|---|---|---|---|
| ՀՆԱ-ի աճը նախորդ տարուայ նկատմամբ | 5,4% | 6,9% | 5,8% | 3% |
| Արդիւնաբերութեան աճը նախորդ տարուայ նկատմամբ | 5,3% | 1,5% | 1,4% | 1% |
| Արտահանման աճը նախորդ տարուայ նկատմամբ | 38% | 25% | 7,2% | -20% |
| Ներմուծման աճը նախորդ տարուայ նկատմամբ | 54,9% | 71,1% | 27% | 4% |

* 1997 թ. տուեալները նախնական են.

*Շար.ը էջ 7*

# ԼԵՒՈՆ ՏԷՐ-ՊԵՏՐՈՍԵԱՆԻ ԵԼՈՅԹԸ ԱՆՎՏԱՆԳՈՒԹԵԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏՈՒՄ

## 1998 Թ. ՅՈՒՆՈՒԱՐԻ 8

*Շարունակուած էջ 6-էն*

*եմ կարծում, որ մեր ժողովուրդը յանուն իր սոցիալական վիճակի բարելաւման չի վտանգի Ղարաբաղի գոյութիւնը: Բայց նրա սոցիալական դժգոհութիւնը կ՚արտայայտուի բոլորովին այլ կերպ՝ արտագաղթի վերսկսումով:*

*Հետաքրքիր է, ինչի՞ վրայ ենք յոյս դնում՝ խափանելով կամ, մեղմ ասած, յետաձգելով ղարաբաղեան հակամարտութեան կարգաւորումը: Այն համոզուածութեան վրայ՞, որ շրջափակումները չեն խանգարում Հայաստանի տնտեսական զարգացմանը, որ արտասահմանեան ներդրումները կարելի է ապահովել ճիշդ մարկետինգային քաղաքականութիւն վարելու շնորհիւ, որ բիւճէն կարելի է զգալիօրէն մեծացնել՝ խստացնելով հարկային կարգապահութիւնը, որ Սփիւռքից կարելի է ստանալ հարիւրաւոր միլիոնների օգնութիւն, որ մեզ կ՚օգնեն ու մեկուսացումից կը հանեն Ռուսաստանն ու Իրանը, որ ինչ որ յաջողուել է Իսրայէլին, մեզ էլ կը յաջողուի, որ պէտք է փոխզիջման գնալ այն ժամանակ, երբ հարկադրուած լինենք:*

*Այս պնդումներն այնքան ծանրակշիռ են թւում, որ կարծում եմ, անհրաժեշտ է մէկ առ մէկ անդրադառնալ դրանց:*

* * *

*Իմ կարծիքով, ղարաբաղեան հակամարտութեան չկարգաւորուած վիճակը բացասաբար է անդրադառնում Հայաստանի տնտեսական զարգացման վրայ մի շարք առումներով:*

*Առաջին. Շրջափակումը շուրջ 30 տոկոսով թանկացնում է Հայաստանի արտաքին բեռնափոխանակութիւնը, որ ինքնին արդէն ահաւոր բեռ է թէ՛ մեր արդիւնաբերողների, թէ՛ գործարարների համար: Այս թիւը ոչ մտացածին է, ոչ էլ ենթադրութիւն, այլ լուրջ տնտեսական հաշուարկի արդիւնք: Դրանում դուք կը համոզուէք՝ կարդալով ՀՀ տրանսպորտի նախարարութեան ներկայացրած ծաւալուն ուսումնասիրութիւնը եւ Համաշխարհային բանկի տեղեկանքը, որոնք պատրաստուել են իմ խնդրանքով, յատուկ այս նիստի համար:*

*Իսկ եթէ չէք հաւատում նաեւ այս փաստաթղթերին, ապա մտէք ցանկացած գործարան, ցանկացած շինհրապարակ, ցանկացած խանութ եւ հարցրէք, թէ որքանով է շրջափակումն ազդում նրանց գործունէութեան վրայ:*

*Շրջափակումը յատկապէս խոչընդոտում է մեծածաւալ ապրանքների արտահանմանը: Թերեւս զարմանալի թուայ, եթէ ասեմ, որ այս պահին մենք ունենք շուրջ 1 միլիարդ տոլարի ապրանքներ, որոնց արտահանումը չենք կարողանում իրականացնել նրանց մեծ բեռնատարողութեան պատճառով: Դրանք են՝ մոլիբդենի հանքաքարը, շինանիւթը, բենտոնիտը, պերլիտները եւ գինին (մոլիբդենի խտանիւթի ու կոնյակի փոխադրումն ինքնաթիռներով դեռ ինչ-որ կերպ արդարացւում է): Էլ չեմ խօսում «Նաիրիտի» մասին, որի շահութաբեր աշխատանքի համար պահանջւում է, որ օրական մէկ գնացք մտնի, մէկ գնացք դուրս գա գործարանից:*

*Անշուշտ, մեր բեռը զգալիօրէն կը թեթեւանար, եթէ վերագործարկուէր թէկուզ միայն աբխազական երկաթուղին, որի խափանումը կապուած չէ ղարաբաղեան հակամարտութեան հետ: Հայաստանը եւ Ռուսաստանը զգալի ջանքեր են գործադրել այդ ուղղութեամբ, բայց դրանք քաղաքական նկատառումներով պատշաճ արձագանքի չեն արժանացել Վրաստանի կողմից: Ուստի նկատի ունենալով այդ դառը փորձառութիւնը, ինչպէս նաեւ վրացաբխազական յարաբերութիւնների շարունակուող գերլարուած վիճակը, ես վստահ եմ, որ այդ երկաթուղին առնուազն եւս հինգ տարի դեռ չի գործի: Այնպէս որ, մենք չենք կարող յոյս դնել դրա վրայ եւ առայժմ ստիպուած ենք բաւարարուել առկայ ծախսատար ճանապարհներով: Քիչ էր, որ ծով չունենք, այժմ գործնականօրէն զրկուած ենք նաեւ երկաթուղիներից: Իսկ առանց երկաթուղիների դժուար է պատկերացնել քիչ թէ շատ կենսունակ տնտեսութիւն:*

*Երկրորդ. Ինչ վերաբերում է այն պնդմանը, թէ իբր արտասահմանեան ներդրումների հոսքը կախուած չէ ղարաբաղեան հակամարտութիւնից, եւ դրանք կարելի է ապահովել, եթէ Հայաստանի իշխանութիւններն աւելի ակտիվ ու լայնամասշտաբ մարկետինգային քաղաքականութիւն վարեն, ես, չմերժելով այդպիսի քաղաքականութեան իրականացման անհրաժեշտութիւնը, գտնում եմ, որ դրա արդիւնքն, այնուամենայնիւ, չնչին է լինելու: Նախ, ոչ ոք չի կարող առարկել, որ Ղարաբաղում ռազմական գործողութիւնների վերսկսման հաւանականութիւնը Հայաստանը, արտասահմանեան ներդրումների տեսակէտից, դարձնում է ռիսկի գօտի: Օտար կապիտալը չի կարող հաշուի չառնել այդ հանգամանքը, եւ դա բազմիցս արտայայտուել է միջազգային տնտեսական կազմակերպութիւնների փորձագէտների մակարդակում: Այնուհետեւ, ասուեց արդէն, որ շրջափակումները շուրջ 30 տոկոսով թանկացնում են Հայաստանի արտաքին բեռնափոխանակութիւնը, եւ դա նոյնպէս չի կարող չազդել արտասահմանեան ներդրողի մտադրութիւնների վրայ. երբ բիզնեսը զգայուն է անգամ մէկ ցենտի տատանման նկատմամբ, ինչպէ՞ս կարող է անտարբեր լինել 30 տոկոսի թանկութեան դէպքում: Եւ վերջապէս, պէտք է սառնասրտօրէն գիտակցել, որ անգամ անկախ այս հանգամանքներից, Հայաստանը, որպէս երեքուկէս միլիոնանոց շուկայ, ինքնըստինքեան գրաւիչ չէ արտասահմանեան ներդրումների համար: Հակամարտութիւնների կարգաւորման պարագայում Անդրկովկասում կարող էր ձեւաւորուել շուրջ 15 միլիոնանոց շուկայ, որը անտարակուսելիօրէն բարենպաստ հող կը հանդիսանար օտարերկրեայ ներդրումների համար: Մի գործարան կը կառուցուէր Հայաստանում, մէկը՝ Վրաստանում, մի ուրիշն էլ՝ Ատրպէյճանում, որոնք հաւասարապէս կը սպասարկէին այդ միացեալ շուկան: Բացի այդ, նման պայմաններում հնարաւոր կը լինէր իրականացնել նաեւ լայնածաւալ տարածաշրջանային ծրագրեր, որոնք արտասահմանեան կապիտալի համար շատ աւելի գրաւիչ են, քան կոնկրետ երկրներում կատարուող ներդրումները: Մասնաւորապէս այն պատճառով, որ այդ տիպի ծրագրերը, կողմնակիօրէն նպաստելով տարածաշրջանային կայունութեան ու անվտանգութեան ամրապնդմանը, տնտեսական նպատակայարմարութիւնից բացի ձեռք են բերում նաեւ քաղաքական նշանակութիւն:*

*Երրորդ. Հակամարտութեան առկայութիւնը Հայաստանին զրկում է իր ամենաբնական եւ շահաւէտ տնտեսական գործընկերներից՝ Ատրպէյճանից, Թուրքիայից եւ մասամբ՝ Իրանից: Բնական եւ շահաւէտ՝ նախ եւ առաջ այն պարզ պատճառով, որ նրանք մեր անմիջական հարեւաններն են: Գաղտնիք չէ, որ աշխարհի բոլոր նորմալ պետութիւնների արտաքին տնտեսական կապերի առնուազն յիսուն տոկոսը բաժին է ընկնում նրանց անմիջական հարեւաններին: Մինչդեռ Հայաստանի դէպքում դա գործնականում հաւասարւում է զրոյի: Ես առիթ ունեցել եմ գնահատելու հայ-ատրպէյճանական տնտեսական համագործակցութեան հնարաւորութիւններն ու հեռանկարները, ուստի զերծ եմ մնում կրկնութիւնից: Չեմ կարծում, որ որեւէ մէկը կարող է ժխտել նաեւ հայ-թուրքական տնտեսական յարաբերութիւնների հսկայական պոտենցիալը, որը թերեւս երկրորդական դեր կարող է խաղալ Թուրքիայի տնտեսութեան զարգացման գործում, բայց Հայաստանի դէպքում, անկասկած, ունի կենսական նշանակութիւն: Մեր Արդիւնաբերողների միութեան կատարած հաշուարկների համաձայն՝ Հայաստանի ու Թուրքիայի հաղորդակցութեան ճանապարհների վերագործարկման դէպքում, երկու երկրների միջեւ շրջանառութիւնը մէկ տարուայ ընթացքում կարելի է հասցնել մօտ 600 միլիոն տոլարի: Այսինքն, մէկ տարուայ ընթացքում Հայաստանի արտաքին առեւտրի շրջանառութիւնը կարող է աճել 50 տոկոսով (այսօր այն կազմում է մօտաւորապէս 1 միլիարդ 125 միլիոն դոլար): Իսկ դա նշանակում է արդիւնաբերութեան զարգացման լուրջ հնարաւորութիւններ, լրացուցիչ աշխատատեղեր եւ սոցիալական խնդիրների լուծման հեռանկարներ:*

*Չպետք է մոռանալ նաեւ, որ բացի բնական տնտեսական գործընկեր լինելու ինքնին արժէքից, Թուրքիան եւ Ատրպէյճանը Հայաստանի համար կարեւոր նշանակութիւն ունեն նաեւ որպէս ամենակարճ տարանցիկ ճանապարհներ մի դէպքում՝ դէպի Եւրոպա եւ արաբական աշխարհ, միւս դէպքում՝ դէպի Իրան, Ռուսաստան ու Միջին Ասիա: Այս առումով, ըստ իս, չարժէ լուրջ պատրանքներ փայփայել՝ կապուած Մեղրու աւտոճանապարհի հետ, քանի որ ակնյայտ է, որ Ջուլֆայի երկաթուղին մէկ-երկու շաբաթուայ ընթացքում, այն էլ զգալիօրէն նուազ ծախսով, շատ աւելի մեծ ծաւալի բեռներ կարող էր տեղափոխել, քան այդ աւտոճանապարհը՝ մէկ տարում:*

*Եւ վերջապէս չորրորդ, որն իմ կարծիքով՝ ամենացաւալին ու վտանգաւորն է, ղարաբաղեան հակամարտութեան պատճառով Հայաստանը դուրս է մնում տարածաշրջանային կազմակերպութիւններից՝ դատապարտուելով օրէցօր խորացող մեկուսացման: Հայաստանն այժմ անդամակցում է ընդամէնը երկու տարածաշրջանային կազմակերպութեան՝ ԱՊՀ-ին եւ Սեւծովեան տնտեսական համագործակցութեանը: ԱՊՀ-ն, քաղաքական եւ անվտանգութեան կարեւորութեամբ հանդերձ, ըստ էութեան որեւէ դեր չի խաղում Հայաստանի տնտեսութեան զարգացման մէջ: Իսկ Սեւծովեան տնտեսական համագործակցութիւնն առայժմ դուրս չի եկել բարի մտադրութիւնների արտայայտման ակումբի կարգավիճակից: Ինչ վերաբերում է Հայաստան-Իրան-Թուրքմենստան եւ Հայաստան-Իրան-Յունաստան եռակողմ համագործակցութեան ծրագրերին, ապա դրանք դեռեւս գտնւում են ձեւաւորման փուլում, բայց անգամ լիարժէք իրականացման դէպքում էլ էական ազդեցութիւն չեն կարող ունենալ Հայաստանի տնտեսական զարգացման վրայ: Բոլորիս համար էլ, կարծում եմ, հասկանալի է, որ տնտեսական առումով շատ աւելի գործնական ու կարեւոր են ԳՈՒՈՒԱՄ-ը, ՏՐԱՍԵԿԱ-ն, ԷԿՕ-ն, նաւթամուղային կոնսորցիումները, որոնց դռները, դժբախտաբար, առայժմ փակ են մեր առաջ:*

*Հակամարտութեան կարգաւորման գործընթացի խափանման կամ նոյնիսկ ձգձգման դէպքում մենք ոչ միայն չենք կարողանալու դուրս գալ առկայ մեկուսացումից, այլեւ աւելի ու աւելի խորացնելու ենք այն: Խօսքը սոսկ տնտեսական մեկուսացման մասին չէ, քանի որ ինքնըստինքեան հասկանալի է, որ տնտեսական մեկուսացումն ունենալու է նաեւ անցանկալի քաղաքական հետեւանքներ: Չեմ բացառում, որ անգամ մեկուսացման պայմաններում Հայաստանը կարող է մասնակցել տարածաշրջանային կազմակերպութիւնների ինչ-ինչ ծրագրերի, բայց ես նկատի ունեմ ոչ թէ սիմվոլիկ մասնակցութիւնը, այլ լիարժէք անդամակցութիւնը, քանի որ միայն այդ դէպքում կարելի է ակնկալել շօշափելի արդիւնքներ:*

*Շար.ը էջ 18*

*Mark Your Calander*

Festival

ARMENIAN INDEPENDENCE DAY

***Sunday September 24, 2006***

***Verdugo Park, Glendale***

***Հայաստանի Անկախութեան Փառատօն***

***Կիրակի, Սեպտեմբեր 24, 2006***

***Կլէնտէյլի Վըրտուկօ Բարքին մէջ***

**ՏԵՍԱԿԷՏ**

# ԵՒ ԴՈ՞Ւ ՊՈՒԼԿԱՐԻԱ

*ՀԱՅԿ ՆԱԳԳԱՇԵԱՆ*

Պուլկարիոյ Խորհրդարանը Մայիս 10ի իր նիստին մերժեր է ճանչնալ Հայկական Ցեղասպանութեան վաւերականութիւնը: 240 անդամ ունեցող խորհրդարանի նիստին մասնակցեր են 170 երեսփոխաններ, որոնցմէ 81-ը դէմ քուէարկած են, 56-ը ի նպաստ, իսկ 33-ը ձեռնպահ: Մեր ակնոցով դիտելով յանցաւոր կը նկատենք ոչ միայն դէմ քուէարկողները, այլ նաեւ ձեռնպահները եւ բացակաները: Դէմ քուէարկողները իրենց արարքը արդարացուցած են Թուրքիոյ հետ բարեկամական յարաբերութիւններուն չվնասելու մտահոգութեամբ:

Ինչ փափկանկատ մտահոգութիւն...: Ե՞րբ է որ Թուրքիա բարեկամաբար մօտեցեր է Պուլկարիոյ, եթէ նոյնիսկ պուլկար ժողովուրդը ոչխարի հնազանդութեամբ ենթարկուեր է Թուրք բռնագրաւիչներուն, ինչպէս հայ ժողովուրդը՝ դարաւոր իր ստրկային կեցութեան ընթացքին: Պուլկար ժողովուրդին կրած տառապանքը, ի հարկէ, կարելի չէ համեմատել հայկական ցեղասպանութեան հետ, սակայն օսմանեան տիրապետութեան ընթացքին պուլկար ժողովուրդին ենթարկուած հալածանքին, ջարդերուն, բռնի կրօնափոխութեան, անուանափոխութեան, բռնաբարութեանց եւ բռնի ամուսնութեանց հետքերը տակաւին նկատեր են Պուլկարիոյ մէջ: Հոն կատարած մեր կրկնակի այցելութիւններուն ընթացքին վերոյիշեալ իրականութեանց մասին բազմաթիւ վկայութիւններ ու շօշափելի փաստեր ունեցած ենք: Սկիւպի (Սքոբիա) մահմետական շրջանին մէջ պանդոկ մը մտնելով ընդունելութեան սեղանին առջեւ մեր դիմացը գտանք սլաւական ցեղի տիպար գեղուհի մը, որ սակայն իսլամ էր...: Այս կինը տառապանքով պատմեց իր նախնիքներուն բռնի իսլամացումը, որ մեծ համեմատութիւններու հասեր էր: Այս երեւոյթը, նուազ սաստկութեամբ շարունակուեցաւ նաեւ Պուլկարիոյ համայնավար վարչակարգի օրերուն, երբ ազգայինը գէթ երեւութապէս կը ստորադասուէր միջազգայինին: Սակայն համայնավարութեան վերջին շրջանին քիչ մը ամէն տեղ եւ յատկապէս Պուլկարիոյ մէջ, ճնշուած՝ մոխրածածկ կրակի տակ անթեղուած ազգային զգացումները մակերես ելան, եւ կրօնափոխութեան ու անուանափոխութեան պոռթկումով մը պուլկար ժողովուրդը վերադարձաւ իր քրիստոնեայ կրօնքին, կամ պարզապէս թօթափեց թրքական լուծին պարտադրած իսլամութիւնը: Դարերու հալածանքին ու ջարդերուն խօսուն ապացոյցը կը գտնուի Սոֆիայէն ոչ շատ հեռու վայրի մը մէջ, ուր բրգաձեւ բլուր մը կազմած են նահատակներու գանկերն ու ոսկերոտիքը, փոքր չափով յիշեցնելով մեր նահատակներուն յուշարձանները:

Պուլկարիոյ մէջ պարզուած այս նպաստաւոր կացութեան մէջ Հայ Իրաւանց Խորհրդի կողմէ շփման մէջ մտանք Պէյրութի պուլկար դեսպանատան հետ, որ հարցին կարեւորութեան անդրադառնալով եւ պետական հանգամանք տալու համար, ինծի եւ մի քանի ուրիշներս Պուլկարիա մեկնելու հրաւէրներ ձեւակերպեց՝ լիազօր պաշտօնատարներու հետ գործակցութեան հիմերը դնելու համար: Այս մասին «Բերքահաւաք» ին մէջ ընդարձակ կերպով գրած ըլլալով, չեմ ուզեր մանրամասնութիւններու մէջ մտնել, շեշտելով միայն որ Պուլկարները հարցը շատ լուրջի առած էին՝ բանակցութիւններուն մեզի խօսակից նշանակելով Արտաքին Գործոց Փոխ Նախարար Իվան Կանեւը եւ Սոֆիա շրջանի Նախագահ Սոլաքովը: Այս իրականութիւնը հաստատող հետեւեալ ապացոյցները բաւարար են:

1) Անոնք շատ տկար եւ անկազմակերպ էին հակաթուրք պայքարին մէջ եւ չունէին անոր վերաբերեալ մեր հարուստ արխիւները, իրենց խնդրանքին վրայ հազարաւոր էջերով փաստաթուղթերու պատճէններ տրամադրեցինք, որոնց հիման վրայ անոնք կազմակերպեցին ցուցահանդէսներ Պուլկարիոյ զուգահեռ՝ Աթէնքի եւ Կիպրոսի մէջ, իսկ Պէյրութ ծրագրուածը տեղի չունեցաւ պատերազմի սաստկացումին պատճառաւ:

2) Ըստ խոստացուածին, ֆիլմի մը պատրաստութեան համար բեմադրիչ եւ այլ մասնագէտներ Պուլկարիա հրաւիրեցին, ամբողջական ծախսերը իրենց վրայ առնելով, սակայն մեր կողմէ թերացաւ իր պարտականութեան մէջ:

Գնահատելով կ՚ուզեմ արձանագրել որ Պուլկարիա կատարած այցելութիւններուս ընթացքին գլխ մեծապէս քաջալերեցին Պուլկարահայ գրագիտուհի Սեւդա Սեւանն ու իր ամուսինը՝ Վրպան Սթամաթովը, որ երկար տարիներ Պուլկար Գրողներու Միութեան նախագահութիւնը վարելէ յետոյ, պաշտօնանկ եղեր էր տիրող համայնավար ղեկավարութեան հետ իր տարակարծութեան պատճառով:

Շուրջ երկու մեթրնոց այս հսկան հակաթուրք պատնէշ մըն էր կարծես՝ Թուրքիոյ սահմանամերձ Սեւ Ծովի ափին իր տնակէն հսկողութիւն կատարելով: Հակառակ իր մօտ հիմնաւորուած կարծիքին, պուլկար կառավարութեան հակաթուրք կեցուածքը իրենց որքան զարմանք՝ նոյնքան ալ գոհունակութիւն կը պատճառէր: Իսկ Սեւդա Սեւանի խանդավառութիւնը գինք կը մղէր որ ամէն տեղ ինծի ընկերակցէր, ի հարկին, իբր թարգման ծառայելու համար, բացի այն պարագաներէն երբ կը մերժուէր իր ներկայութիւնը:

Կատարուած բանակցութիւններուն եւ իրագործուած համաձայնութիւններուն փաստաթուղթը ժամանակին յանձնած ենք նաեւ Սփիւռքահայութեան հետ Մշակութային Կապի Կոմիտէին, որպէսզի Հայաստանի կառավարութիւնը եթէ յարմար նկատէ, կարենայ շփման մէջ մտնել Պուլկարիոյ հետ: Սակայն, ինչպէս յաճախ պատահած է մեր պատմութեան ճակատագրական պահերուն, Սովետական Միութեան եւ արեւմտեան պետութիւններու մէջ համայնավար վարչաձեւերուն անկումին հետեւանքով այս գործակցութիւնը կասեցաւ եւ անոր վերաբերեալ փաստաթուղթն ալ մտաւ արխիւային թանգարանին մէջ:

Այս բոլորէն յետոյ անհաւատալի եւ տխուր է իմանալ որ Պուլկարիոյ Խորհրդարանը մերժեր է ճանչնալ Հայկական Ցեղասպանութիւնը: Բայց, հակառակ այս հակահայ որոշումին պատճառած յուսախաբութեան ու դառնութեան, կը խորհինք թէ այդ կեցուածքը չ՚արտայայտեր պուլկար ժողովուրդին հարազատ զգացումները հայ ժողովուրդին հանդէպ: Արդ ամօթալի կեցուածքը համաշխարհային կլոպալիզմին արտադրանքն է, Made in U.S.A. վաճառանիշով:




مطعم الشرق

WAHIB'S MIDDLE EAST RESTAURANT

*"Where the East Meets the West"*

**MEDITERRANEAN - LEBANESE FOOD**

**BANQUET HALL**

**CATERING FOR ALL OCCASIONS**

**FAMILY ENTERTAINMENT**

**EVERY FRIDAY & SATURDAY NIGHT INTERNATIONAL & ARABIC SHOW**




NAZO, VARTAN, AMIR &
SINGER MUHAMMAD

**CALL FOR RESERVATIONS**

**TEL 626-281-1006 626-587-1048**

**FAX 626-281-3641**

**910 E. MAIN ALHAMBRA, CA**




**BELLY DANCING**

PHOTO/CONCEPT-J/D-2005 TEL (6260 795-4493

# Massis Weekly

**Volume 26, No. 27** **Saturday, July 29, 2006**


## Clean Vote Crucially Important For Armenia's Ties With EU



**EU representative to the South Caucasus Peter Semneby**

YEREVAN -- The freedom and fairness of parliamentary elections due in Armenia next spring will be "crucially important" for the Armenian government's drive to forge closer political and economic links with the European Union, a senior EU official said on Monday.

Peter Semneby, the EU representative to the South Caucasus, warned that a repeat of serious electoral fraud would seriously jeopardize Yerevan's participation in the European Neighborhood Policy (ENP) program that provides for a privileged partnership with the 25-nation bloc. Speaking during a regular visit in Yerevan, he said the plan of ENP-related actions which the Armenian government is currently discussing with the EU will include a pledge to conduct the upcoming polls in accordance "European values, standards and norms."

"The elections that will follow the entry into force of the action plan will be a crucially important test for Armenia in terms of the quality of its future relationship with the European Union," Semneby told a news conference after talks with senior Armenian officials.

"After all, Armenia has committed itself and has confirmed in the far-reaching and detailed document, which will regulate the Armenia-EU relationship, that free and fair elections are a top priority," he said. "That is why I expect the elections to be free and fair."

The EU has always added its voice to Western criticism of the Armenian authorities' handling of elections. In particular, the bloc questioned their "commitment to democracy" in the wake of last November's constitutional referendum which was marred by allegations of massive vote rigging. However, EU pressure for Armenia's democratization was otherwise minimal until recently.

The EU signaled its intention to press harder for political reform in February when its External Relations Commissioner Benita Ferrero-Waldner visited Yerevan and raised the issue with Armenian leaders. They assured her that they will do their best to tackle the chronic vote rigging.

Foreign Minister Vartan Oskanian said the issue was high on the agenda of his talks with Semneby. He said Yerevan is close to completing its negotiations with the EU on the ENP action plan and will publicize the document "soon." "The Armenian side is having virtually no problems [in the talks,]" he said. "There are a number of minor outstanding issues which we think will be sorted out in the course of next week."

## Over 600 People Evacuated To Yerevan
### Armenia To Provide Relief To Lebanon



**Lebanese Red Cross volunteer yells for help at the rubble of a destroyed building in Tyre, South Lebanon**

YEREVAN/BEIRUT -- Armenia has pledged on Wednesday to send humanitarian assistance to Lebanon as the number of people arriving in Armenia from the war-devastated country continued to rise.

The government has allocated an unspecified amount of medicines, tents and fire-fighting equipment to the Lebanese authorities and ship them to Beirut via Syria later in the week. It said the aid will be provided in response to the Lebanese leadership's appeal to the international community to help hundreds of thousands of people displaced by the two-week Israeli bombardment.

More than 550 Armenians and ethnic Armenian citizens of Lebanon have been evacuated to Armenia since the start of Israel's military assault against the Middle Eastern nation, a senior official in Yerevan said on Monday.

Deputy Foreign Minister Gegham Gharibjanian said virtually all of them have been transported to Yerevan from Syria in special charter flights carried out by the Armavia national airline and partly subsidized by the Armenian government. "The planes flying to Syria are empty and the government covers their one-way cost," told RFE/RL.

Gharibjanian said Armavia carried out a similar flight to Tel Aviv, bringing back more than 50 Armenian nationals residing in Israel early on Monday. Not all of them are believed to have returned to

**Continued on page 4**

## Russia Blames Armenian Airbus Crash On Pilots

MOSCOW -- The crash of an Armenian Airbus plane off Russia's Black Sea coast in May that killed all 113 people on board was caused by a "human factor", Russian Transport Minister Igor Levitin said Wednesday.

"Weather conditions were difficult, the human factor played its role," Levitin was quoted by the Interfax news agency as saying at a press conference, held about the results of an inquiry into the crash of the A320 liner belonging to Armavia airlines.

Tatyana Anodina, head of the intergovernmental aviation committee that took part in the enquiry, said: "The main pilot did not ensure control of the plane as far as angle and altitude were concerned," ITAR-TASS reported.

"The co-pilot did not ensure necessary control on the descent," Anodina said, adding that an alarm system had gone off as the plane plunged but that it was too late to regain altitude.

The Airbus A320 plunged into the Black Sea on May 3 amid rainy weather as it was coming in to land in Sochi — a popular coastal resort city in southwest Russia.

## US House Rejects Attempts To Isolate Armenia
### No Export-Import Funding For Kars-Akhalkalaki-Tbilisi-Baku Railroad Project

WASHINGTON, DC -- The House of Representatives has voted to help ensure that U.S. regional cooperation and economic integration is maintained by making certain that no Export-Import funding is used for a railroad project sponsored by the Turkish and Azeri governments that seeks to exclude Armenia from economic and regional transportation opportunities.

Lawmakers approved H.R. 5068, the Export-Import Bank Reauthorization Act of 2006, which included an amendment by Congressman Joseph Crowley (D-NY), along with Congressmen Edward Royce (R-CA) and Brad Sherman (D-CA), ensuring that taxpayer dollars will not be spent on efforts that would isolate Armenia – which is already facing dual blockades by Turkey and Azerbaijan.

The amendment, which was unanimously approved by the House Financial Services Committee last month, states that "The Bank shall not guarantee, insure, extend credit, or participate in an extension of credit in connection with the development or promotion of any rail connections or railway-related connections that do not traverse or connect with Armenia, and do traverse or connect Baku, Azerbaijan, Tbilisi, Georgia, and Kars, Turkey."

In a statement submitted for the House record, Crowley said "This language will assist in promoting stability in the Caucasus region, help in ending long standing conflicts, and save U.S. taxpayers the responsibility of funding a project that goes against U.S. interests."

Representative Carolyn Maloney (D-NY), who spoke in favor of H.R. 5068 on the House floor, said "I support the provisions which would prohibit the Export-Import Bank from funding railroad projects in the South Caucasus region that deliberately exclude Armenia."

The Crowley-Royce-Sherman provision was modeled after H.R. 3361, the South Caucasus Integration and Open Railroads Act. The legislation, which also has a Senate counterpart, would prohibit U.S. assistance for the promotion or development of a railroad that would connect the three countries and exclude Armenia . The House bill, introduced by Armenian Caucus Co-Chair Joe Knollenberg (R-MI), along with Co-Chair Frank Pallone, Jr. (D-NJ) and Caucus Member George Radanovich (R-CA), currently has 87 cosponsors.

The proposed bypass railway is estimated to cost upwards of $800 million and is expected to take years to construct. The existing line, which crosses Armenia , is in working condition and could be operational in a matter of weeks at very little cost.

Recently, U.S. Assistant Secretary of State Daniel Fried reiterated U.S. policy in the South Caucasus which seeks to promote regional cooperation and economic integration.

"The U.S. Government strongly encourages regional integration in the Caucasus , including in our discussions with Armenia , Azerbaijan , Turkey , and other countries in the region," Fried said. "Removing trade barriers would improve regional integration and enhance economic cooperation and development. The proposed railway would bypass Armenia and thus not be beneficial to regional integration."

Similarly, Ambassador to Azerbaijan Anne Derse explained that "Because the proposed railway would bypass Armenia , and thus not be beneficial to regional integration, we have no plans to support such a railway financially."

Azerbaijani President Ilham Aliyev told an Azeri news agency last summer

**Continued on page 4**

## Massis Weekly Annual Vacation

**The offices of Massis Weekly will be closed the first two weeks of August for Summer vacation**

**Next issue of Massis Weekly will be published on August 19, 2006**

## Rift Between Sarkisian, Kocharian? Defense Minister Discusses Political Ambitions



**Serzh Sarkisian with the leadership of Republican Party (HHK)**

YEREVAN (RFE/RL) -- In a rare interview, Armenian Defense Minister Serzh Sarkisian spoke on July 20 with RFE/RL's Armenian Service about his recent alliance with the Republican Party of Armenia, his reported presidential ambitions, and his relationship with President Robert Kocharian. Sarkisian, the former wartime commander of Karabakh Armenian forces, also gave his backing to a compromise solution to the Nagorno-Karabakh conflict favored by international mediators.

Sarkisian said that Kocharian does not object to his far-reaching alliance with Armenia's largest governing party, the Republican Party of Armenia (HHK).

### Rift Between Sarkisian, Kocharian?

Many Armenia observers believe that Sarkisian's decision to align himself with Prime Minister Andranik Markarian's HHK does not sit well with Kocharian, who is widely expected to resign after completing his second term in office in early 2008.

Reports have pegged Sarkisian as a possible candidate to succeed Kocharian. But Sarkisian's ties to the HHK could conflict with the president's perceived efforts to contain the HHK and secure his own political future.

Asked whether he thinks he could be sacked by Kocharian for joining the HHK, Sarkisian replied: "How can I rule out the possibility of the president dismissing me when he is the supreme commander in chief [of the armed forces] and can do that with a single signature? But I rule out his doing so in connection with [my affiliation with the HHK] because the president of the republic has fully approved my intention. I think there will be an occasion for him or his spokesman to speak about this. Besides, what is the use of taking steps contradicting the opinion of the supreme commander in chief?"

Observers say Kocharian does not necessarily back Sarkisian's reputed presidential ambitions, despite having closely cooperated with the powerful defense minister for nearly two decades.

Sarkisian himself says he has not yet decided whether to run for president in 2008.

"It's very difficult to say [if I will run], because I've never given it serious thought," he said. "You may not believe me, but I am speaking sincerely. I will make my decision after the parliamentary elections are held [in May 2007]. All I can say is that I've never strove for any position. All of my friends know this."

### Working With HHK

Speaking to RFE/RL late on July 19, Prime Minister Markarian was likewise vague about Sarkisian's presidential ambitions and stopped short of ruling out his own participation in the 2008 presidential ballot. "We will see in 2008," he said.

Markarian also described as "logical" Sarkisian's decision to join his party. "He felt that he likes the party's ideology and program," Markarian said. "Besides, we have closely cooperated during all these years and are simply formalizing this fact."

Sarkisian has repeatedly made it clear that a possible presidential bid hinges on the HHK's performance in next year's parliamentary elections. This has been construed by opposition leaders and other government critics as a sign that the Republicans will seek to hold on to their parliamentary plurality in the next National Assembly at any cost.

The HHK boasts the largest faction in the current National Assembly, controlling at least 41 of its 131 seats. Sarkisian said on July 20 that he would consider maintaining that number in the next Armenian parliament an excellent result.

"I haven't yet discussed this topic with members and leaders of the Republican Party," he said when asked how many parliament seats it is looking to win. "But I have decided for myself that if the Republicans win up to 21-22 percent of the vote in the elections, I will consider that satisfactory; [if they get] up to 25 percent, [I will consider that] good; [if they get] more than that [I will consider that] excellent."

### Karabakh Compromise

Sarkisian, the former wartime commander of Karabakh Armenian forces, also endorsed a compromise solution to the Nagorno-Karabakh conflict favored by international mediators.

He said he agreed with the Armenian government's overall acceptance of a recent plan that calls for a referendum on Karabakh's status after the liberation of Azerbaijani territories surrounding the disputed region. "Yes, I am in favor of the proposed principles. How can I be against something that I have said for years?"

But at the same time he left room for maneuver in the event of popular opposition to the peace plan. "If the public has a different opinion, another political force will win a majority and pursue its policy, and that would be very good," he said. "How can I oppose something which is to our people's liking?"

**(by Hrach Melkumian, Armen Dulian, and Ruzanna Khachatrian)**

## Raffi Hovannisian's Heritage Party Headquarters Under Lock Again

YEREVAN -- Heritage party led by Armenia's former Foreign Minister Raffi Hovannisian was again evicted from its main offices on Friday despite winning legal action against their government-controlled owner.

The eviction came one day after the Zharangutyun (Heritage) party reclaimed the premises located in a building in downtown Yerevan housing a state-run theater. An Armenian court of first instance annulled late last month the theater management's controversial decision four months ago to unilaterally terminate a five-year lease agreement with the party signed in September 2002.

Officials from the Armenian Justice Ministry's Service for Mandatory Execution of Judicial Acts (SMEJA) claimed, however, that this does not mean Hovannisian and his associates can return to the offices. The officials led by the acting head of the SMEJA division in central Yerevan, Vahram Yenokian, said the court ruling does not explicitly provide for this.

"Do you have any grounds to evict us?" Hovannisian asked Yenokian as the office doors were again sealed by the law-enforcement officers. "Do you have a ruling allowing you to occupy the property?" replied Yenokian.

"You didn't answer my question," shot back Hovannisian. "I did," said the official.



**Justice Ministry officials guard the entrance to the Zharangutyun offices after the eviction**

Zaruhi Postanjian, a Zharangutyun lawyer, argued that the party can occupy the offices until September 2007 because the court effectively upheld the validity of the lease. She said the Zharangutyun leadership will ask the judge who adjudicated the dispute to provide a written clarification of his verdict.

"We agreed that the party's property will remain here until we get a clarification from the court as to whether or not we can occupy these offices," Postanjian said.

Zharangutyun leaders maintain that they were forced out of their headquarters in retaliation against Hovannisian's scathing attacks on Robert Kocharian and his intention to challenge the ruling regime in the approaching national elections. Hovannisian charged on Friday that Kocharian personally ordered the "illegal" eviction.

## European Union
## Turk Lawyer Puts Patriotism Before Free Speech

ANKARA -- A lawyer instrumental in trials of writers who challenge Turkey's limits on freedom of speech vowed on Wednesday to advance a nationalist campaign which has put Ankara at odds with the European Union.

Bitter EU critic Kemal Kerincsiz has come to prominence this year through his involvement in bringing charges against internationally renowned novelist Orhan Pamuk and other writers for comments on the Armenian issue and insulting "Turkishness". The EU, which Turkey wants to join, is pushing Ankara to improve freedom of expression as a condition for membership, but nationalist lawyers and the judiciary are undermining the drive. This week he filed a complaint to prosecutors about comments made by Turkish-Armenian editor Hrant Dink, prompting a fresh probe of the writer just a week after a previous conviction.

"You cannot view what writers like Hrant Dink and Orhan Pamuk have said as freedom of expression. They are provoking the situation under the Armenian diaspora's influence," Kerincsiz told Reuters in his office in an Istanbul apartment block. "We will not allow insults and abuse of Turkishness in the name of freedom of expression. We will continue to defend Turkishness and the rights of Turks from Central Asia to Western Thrace (in eastern Greece)," he said.

Kerincsiz heads the Grand Lawyers' Association which claims 800 members in Istanbul and devotes itself to nationalist causes. As he spoke, his colleagues prepared placards for a pro-Turkish Cypriot demonstration they were staging in Istanbul. The latest target of his campaign was an interview which Dink gave to Reuters on July 14 in which he said Armenians suffered genocide at the hands of Ottoman forces during World War One. The European Parliament has called on Turkey to recognize the Armenian massacres as a genocide before it joins the bloc.

"Dink has sealed his own fate with this comment. He has convicted himself. It is now impossible from him to escape his suspended sentence and a new conviction," said Kerincsiz.

The High Court of Appeals last week confirmed a six-month suspended jail sentence for Dink under a controversial article of Turkey's penal code which outlaws insults to "Turkishness". The EU has urged Turkey to scrap Article 301, which carries a jail sentence of up to three years, arguing it restricts freedom of expression. The government says the revised penal code, introduced last year, needs more time to be tested.

Cases against Pamuk and four columnists collapsed on a legal technicality, but only after drawing a sharp rebuke from the EU, which Turkey aims to join.

"The European Union means slavery and a prisoner's chains for Turkey," Kerincsiz said.

### Armenians In Georgia

## Javakheti: Airing Differences

**By Florence Mardirossian (EurasiaNet)**

Officials and activists from all sides of the issue are at least talking about how to ease discontent among Armenians in Georgia's Javakheti region.

Officials, academics, and non-governmental organization representatives are pondering ways to defuse a potential crisis in the Georgian region of Samtskhe-Javakheti, where discontent is brewing among the area's Armenian community.

Some local leaders and civic activists warn of socio-political trouble if no action is taken to address the demands of the local Armenian community for expanded language rights and other cultural privileges. Discontent has already reached the point where one local Armenian cultural organization, United Javakhk, reportedly adopted a statement in early July calling on the Georgian government to grant the region autonomy status.




The language issue is intertwined with other issues, namely a lack of economic opportunity in the region. Most Armenians in Samtskhe-Javakheti don't speak Georgian, and they say the Georgian government should do more to protect their cultural traditions. Georgian officials, meanwhile, want Armenians living in the region to learn Georgian. Some quietly question the sincerity of the Armenian community's desire to integrate.

The compulsory use of the Georgian language for education is the chief source of discontent among Armenians in Samtskhe-Javakheti. Ethnic Armenian demands also include an acknowledgment of the Armenian genocide of 1915, a removal of the ban on teaching Armenian history, the adoption of new laws covering minority rights, and self-governance.

A recent roundtable discussion, held in the regional center of Akhalkalaki, sought to bring all sides together to discuss problems and explore possible solutions. Participants, including local politicians, experts and NGO representatives from Georgia and Armenia, generally agreed that giving the region autonomous status was not a viable option, especially given Tbilisi's experience with separatism in Abkhazia, Ajaria, and South Ossetia over the past 15 years.

At the same time, attendees suggested that Tbilisi couldn't ignore the complaints of local Armenians. One of the event's chief organizers, Sevak Artsruni, head of [Yerkir,] the Armenian Union of NGOs for Repatriation and Settlement, cautioned that cultural issues, left unaddressed, could develop into a major headache for Tbilisi.

Samtskhe-Javakheti sits along a trade corridor that is growing in geopolitical importance. In particular, the recently inaugurated Baku-Tbilisi-Ceyhan pipeline runs through the territory. As a result, international development funds have been earmarked for local infrastructure improvement, including over $100 million in U.S. assistance made available under the Millennium Challenge program for local road construction and renovation. The region also figures prominently in plans to build a rail link connecting the Turkish city of Kars and the Azeri capital of Baku.

"Socio-economic projects cold bring stability if the cultural and linguistic rights of the Armenian minority were respected," Artsruni said. "But if ethnic Armenians do not take part in these projects, the cultural problem could turn political and Javakheti could definitely [encounter] a crisis."

Meanwhile, another conference participant, Georgian political scientist Ghia Nodia, said tension in Samtskhe-Javakheti is a reflection of poor local governance in Georgia. "Many people are calling for autonomy because local democracy … is weak or does not work," Nodia said.

Mutual suspicion mars relations between ethnic Armenians and Tbilisi. Last March, tension boiled over and resulted in a prolonged period of rioting, ignited by the killing of an ethnic Armenian in a brawl.

The political atmosphere became charged following the Rose Revolution in November 2003 and was been exacerbated by the decision to withdraw Russian troops from a permanent base in Akhalkalaki by the end of 2007.

The base was a major source of employment for the Armenian community, providing well-paying jobs for roughly 10,000 civilians. The Georgian government has promised to implement programs that diminish the economic impact of the Russians' departure, but Armenians remain skeptical. Many view President Mikheil Saakashvili's administration as focused mainly on nationalist concerns, namely reestablishing Tbilisi's authority over Abkhazia and South Ossetia.

Speaking at the Akhalkalaki roundtable in early June, Meka Elbakidze, an analyst with the Caucasus Institute for Peace, Development and Democracy (CIPDD), provided a road map for a Georgian conflict-prevention strategy. Tbilisi should focus on the linguistic issue and ethic Armenians' disenfranchisement from local and national politics, he suggested.

Georgian officials seem interested in exploring solutions to Javakheti dilemmas. During a mid-July meeting, Georgian Prime Minister Zurab Noghaideli discussed with his Armenian counterpart Andranik Markarian the feasibility of opening an Armenian-Georgian university in Tbilisi, according to news accounts of the meeting. In addition, Markarian said the Armenian government was prepared to assist in efforts to improve Samtskhe-Javakheti's infrastructure.

## Letter To The Lebanese Community

Due to the tragic circumstances caused by the barbaric and continuing Israeli aggression on Lebanon, and after the Lebanese Prime Minister declared Lebanon a disaster area, calling out to all organizations and countries for help and aid, the Consulate General of Lebanon in Los Angeles pleads the Lebanese community and all the associations, organizations and agencies to provide supplies and financial help to all our families in Lebanon, who are being subjected to the worst type of aggression.

Please send your donations to the following accounts at the Bank of Lebanon (Banque du Liban) in favor of the Lebanese Ministry of Finance:

1. Account in US Dollars: 02 700 362123
To Federal Reserve Bank of New York – New York
Bic code FRNYUS33 Routing number: 021084694
Favor Banque du Liban - Account number: 02 700 362123

2. Account in Lebanese Pound:
Banque du Liban – Account Number 01 700 362123

3. To all the groups able to offer supplies, the Higher Council of Emergency Relief is in dire and urgent need of the following:

4. Food and Supplies:
- Milk + Diapers + Baby Formula and food
- Canned meat, jams, sugar, rice, various grains
- Cooking utensils (pots, pans, kitchen utensils)

Medication:
- Medicine: Diarrhea, Antibiotics, Analgesics (pain killers)
- Medication for the elderly: Chronic diseases (heart problems, diabetes, high blood pressure and others) and skin diseases.
- Tranquilizers, Chlorine for sanitizing water, sanitized surgical gloves, dialysis machines
- Medical Refrigerators

Housing Equipments and Machinery:
- Tents
- Blankets
- Electrical Generators with a power output of 5 – 10 - 20 – 30 KVA
- Bulldozers and excavation equipment
- Fire Fighting Equipments:
- Fire fighting equipment
- Fire extinguishers in varying sizes
- Fire extinguishing foam
- Hoses for fire trucks.
- Financial Agencies:

Bank account number of the High Council for Emergency Relief at the Bank of Lebanon, Beirut: 760051114

We hope that all able members of the Lebanese Community and its religious, political and educational institutions, would head this urgent humanitarian cry for help and offer aid in assistance to the suffering and needy families in Lebanon, and support the Lebanese Government and its Institutions, so that it may be able to distribute the medical and humanitarian supplies to all those in need without delay.

Consul General
Charbel Wehbi
Los Angeles July 18, 2006

HARUT DER-TAVITIAN
License #0B28270
1807 W. Glenoaks Blvd., Suite 202
Glendale, CA 91201
Tel.: 818/502-3233
Fax: 818/502-3244
Pgr.: 818/608-9898
info@excelhye.com
www.excelhye.com
EXCEL
HYE INSURANCE SERVICES
AUTO • HOME • LIFE • HEALTH • DISABILITY • COMMERCIAL

ՎԱՐՁՈՒ ՍՐԱՀ
ՓԱՍԱՏԻՆԱՅԻ ՄԷՋ
(200 ՀՈԳԻԻ ՀԱՄԱՐ)
ԱՄԷՆ ՏԵՍԱԿ ԱՌԻԹՆԵՐՈՒ ՀԱՄԱՐ
1060 N. ALLEN AVE. PASADENA
ՄԱՆՐԱՄԱՍՆՈՒԹԻՒՆՆԵՐ՝ ՀԵՌԱՁԱՅՆԵԼ
(626) 797-7680 (626) 398-0506

## USC Institute of Armenian Studies Appoints Vatche Mankerian as Program Manager

LOS ANGELES -- The USC Institute of Armenian Studies has appointed Vatche Mankerian as the Program Manager of the Institute. He will be in charge of operations of the Institute and will be reporting to the Director of the Institute, Professor R. Hrair Dekmejian.

For the past two decades, Mankerian has actively contributed to the cultural life of Los Angeles and its Armenian community. A multifaceted and distinguished artist, pedagogue, lecturer, and author he has performed and lectured on Armenian culture and music in countries around the world.

Mankerian earned his Bachelor and Master's degrees from the University of Southern California. A member of the Music Teachers' Association of California, he has been a music educator at some of the leading music schools in Southern California, including the Pasadena Conservatory of Music and Los Angeles Valley College.

Mankerian has taught Armenian language, literature and culture for the past several years at various academic institutions such as Glendale Community College and AGBU Manoogian-Demirdjian School. Most recently, he chaired the Armenian Department at Sahag-Mesrob School, and authored three volumes of textbooks titled Armenian Culture. The books are the first Armenian textbooks on the different aspects of Armenian culture, written in Armenian and published inthe United States. These textbooks have been adopted by several Armenian schools in the Los Angeles area because of their conceptual uniqueness and originalityof content.

Housed in the USC College of Letters, Arts & Sciences, the USC Institute of Armenian Studies serves as a non-partisan center around which the entire Armenian community can rally, regardless of political or religious affiliation. The Institute is a resource center and repository to help preserve the Armenian heritage in America, while providing a home to approximately 1,000 Armenian-American students who attend USC each year.

In addition, the Institute will host, coordinate and collaborate on a wide range of academic and professional endeavors concerning Armenia and Armenians in the fields of education, business, technology, science, medicine, history, law, politics, religion, literature, music, dance, arts, architecture, media, theater, cinema and others. Some of the goals of the Institute include establishing endowed scholarships, fellowships, research programs, publication series and lecture series.

Upcoming events of the USC Institute of Armenian Studies include an Armenian-American Federal Judges' Forum, which will feature Federal Judges Dickran Tevrizian, Samuel Der-Yeghiayan, and Jacqueline Chooljian. The program is presented in cooperation with the Armenian Bar Association. The Forum will take place on August 13, from 2 to 4 p.m. at USC Davidson Conference Center.

For further information regarding USC Institute of Armenian Studies' events please contact by phone at 213-821-3943, or e-mail at armenian@college.usc.edu.

## Over 600 People Evacuated To Yerevan

**Continued from page 1**

Armenia for security reasons, though.

The government estimates that some 1,200 Armenian nationals lived in Lebanon before the start of the Israeli onslaught almost two weeks ago. Lebanon is also home to an estimated 80,000 ethnic Armenians, most of them living in the Christian districts of Beirut that have been largely spared bombardment so far. The Armenian community has not reported any casualties yet.

"Fortunately, our forecasts have proved correct and there has been no massive influx [of Armenian evacuees from Lebanon], even though our diplomatic missions are prepared to help to evacuate more people," said Gharibjanian.

The government in Yerevan announced last week that any citizen of Lebanon fleeing the war and willing to take refuge in Armenia will be granted special residency permits free of charge. It also sent two diplomats to Beirut and Aleppo, Syria to assist in the evacuation.

So far, about 30,000 foreign nationals have fled Lebanon, most traveling to Cyprus and Turkey by boat.

## US House Rejects Attempts To Isolate Armenia

**Continued from page 1**

that, "We are currently working on a new project – a new rail road Kars-Akhalkalaki-Tbilisi-Baku..If we succeed with this project, the Armenians will end in complete isolation, which would create an additional problem for their future, their already bleak future…"

Meanwhile, a meeting of transport ministers from Azerbaijan , Turkey and Georgia , slated for mid-June, was postponed following action by the U.S. Congress to prohibit American companies from participating in the railway construction. The meeting is scheduled to take place on July 27 in Astana, Kazakhstan.

The Export-Import Bank is a federal government agency which provides loans, loan guarantees and insurance to support exports of U.S. goods and services to international markets.


**Ձեր Ծանուցումները Վստահեցէք**

**«Մասիս» Շաբաթաթերթին**


## AEUNA Celebrates 160th Anniversary At 2006 New Jersey Convention

NEW JERSEY -- Hosted by the Armenian First Presbyterian Church of Paramus, New Jersey, the Armenian Evangelical Union of North America held its 18th Biennial General Assembly June 29-July 2, 2006, at the New Jersey Woodcliff Lake Hilton. The event coincided with the 160th Anniversary of the Armenian Evangelical Church, founded July 1, 1846 at the Pera Church of Constantinople, now Istanbul. More than thirty churches from the U.S. and Canada were represented.

AEUNA Moderator Rev. Bernard Guekguezian presided over business meetings along with board members Vice Moderator Rev. Ara Heghinian, Minister to the Union Rev. Joe Matossian, new Administrative Director of the Union Hagop Loussararian, Treasurer Fred Simonian, and Clerk Phillip Tavlian.

Three full member Churches, the Armenian Church of the Nazarene, Glendale (Rev. Habib Alijaji), the Armenian Ararat Evangelical Church of Salt Lake City (Pastor Gevorg Paronyan), and the Armenian Evangelical Church of Las Vegas (Dr. Kegham Tashjian) were officially accepted. Three associate member churches, accepted into the non-voting, "getting to know you category" were the Armenian Christian Fellowship of Orange County (Pastor Dr. Don Sunukjian), Armenian Presbyterian Holy Trinity Church of Glendale (Rev. Berdj Djambazian), and the Christ Armenian Church of Glendale (Rev. Saro Khachikian). Rev. Guekguezian called on new member churches to serve with "intelligence, imagination, and love."

Reports from the Armenian Missionary Association of America, the Armenian Missionary Association of Canada, the Stephen Philibosian Foundation, the Merdinian Armenian School, and the Armenian Evangelical Social Service Center were accepted.

The Armenian Evangelical Women's Fellowship, East and West Regions, and the Armenian Evangelical Youth Fellowship, East and West Regions, provided a strong presence. More than 40 young people from the West Coast, led by Raffi Kaldjian, attended the convention and toured New Jersey, New York, Pennsylvania Amish Country, and Philadelphia where they celebrated American Independence on July 4.

The AEUNA main speaker was Rev. Dr. Liam Goligher, father-in-law of Rev. Gulleyan and Senior Pastor of the Duke Street Church in London, England, also a Christian radio host in Great Britain. The AEYF main speaker was Rev. Calvin Sagherian, pastor of the Armenian Brotherhood Bible Church in Pasadena and former Chaplain of Haigazian University in Beirut.

Officers who were approved to serve the AEUNA for the next two years are Moderator Rev. Ron Tovmassian (Los Angeles), Vice Moderator David Hagopian (Chicago), Clerk Phyllis Dohanian (Watertown), Treasurer Rev. Apraham Chaparian (Hollywood), Ministry Rev. Avo Boynerian (Watertown), Evangelism Rev. Berj Gulleyan (Paramus), Publications Rev. Dickran Shanlian (Los Angeles), Armenian Heritage Andy Loussararian (Toronto), Stewardship Fred Simonian (Chicago), and Members-at-Large Ed Saliba (Fresno), Souzi Baghdikian (Downey), John Paulson (Havertown), Rev. Nerses Balabanian (San Francisco), and Rev. Dr. John Khanjian (Pasadena).

Two convention banquets were held, one for adults and one for the young contingent. The adult banquet was MC'd by Vahram Aynilian. Rev. Vahan Tootikian, in Armenian, spoke of the importance of the Armenian Evangelical Movement. Banquet speaker Peter Kougasian, Esq., a 23-year veteran in the office of NY County District Attorney Robert M. Morgenthau, praised Rev. Vahan Tootikian, and recommended his book, The Armenian Evangelical Church.

Hagop Loussararian, the new Administrative Director of the Glendale, CA AEUNA office, a two-year volunteer position at this time, gave a moving message at the banquet about his experience as an orphan. He was born in Aleppo, Syria. His mother died (at age 18) when he was just a year old and his father died when he was only three. His grandmother raised him under difficult circumstances. The West New York Presbyterian Church, which is now the Paramus Church, sponsored him and he was able to complete his education in Beirut, and then served as a life long educator and administrator. He retired in 2005 after a long tenure as Principal of various schools in the Middle East and the U.S. and as Director of the Armenian Evangelical Social Service Centers in Hollywood and Glendale. He was delighted to introduce his mentor, Mrs. Marie Alberian, formerly the Sunday school superintendent of the West New York Church, who not only helped raise funds to sponsor him, but wrote to him regularly during his school years.

The youth banquet speaker was the animated Rev. Nerses Balabanian, installed last year as pastor of the Calvary Armenian Congregational Church in San Francisco. With great enthusiasm, he led the music sung throughout the convention.

Rev. Joe Matossian stressed the importance of recommitment by pronouncing, "Our forefathers passed the torch to us and we also need to pass it on." He thanked the convention planners and mentioned the many programs of the AEUNA, especially youth and camp programs (Camp Arev on the West Coast and Camp Arevelk on the East Coast) and the training of theological students, and he lauded the Forum publication, edited by Rev. George Terian and Rev. Dikran Shanlian. A torch was passed before the convention ended, symbolically emulating the actions of the forefathers who established the Armenian Evangelical Movement and their descendants who followed. The next convention will be held in 2008.

**ՈՒՇԱԴՐՈՒԹԻՒՆ**

Եթէ ձեր տրամադրութեան տակ ունիք հայերէն գիրքեր, եւ կը ցանկանաք զանոնք նուիրել Կայծ Երիտասարդական Միութեան գրադարանին՝ ապա առաքեցէք հետեւեալ հասցէով

**G.Y.O. 1060 N. ALLEN AVE. PASADENA, CA 91104**

**ԳԱՂՈՒԹԱՅԻՆ**

# ՍԱՐԳԻ ՄՈՒՐԱՏԵԱՆ ՖԻԼՄԵՐՈՒ ՓԵՍԹԻՎԱԼ



Սարգի Մուրատեան

Երկուշաբթի, Յունիս 26-էն մինչեւ Կիրակի, Յուլիս 2, Կլէնտէյլի Հանրային Գրադարանի հանդիսասրահէն ներս տեղի ունեցաւ աննախընթաց ֆիլմի փեսթիվալ մը, նուիրուած Սարգի Մուրատեանի բեմադրած եօթը ֆիլմերուն, որոնք մեծ ժողովրդականութիւն վայելած են, տարիներու ընթացքին, եւ արժանացած լայն զանգուածներու գնահատանքին:

Արդարեւ, նոյնպէս այս փեսթիվալի առիթով սրահը ծայրէ ծայր լեցուցած հանդիսատեսները անգամ մը եւս առիթը ունեցան իրապէս վայելելու իւրաքանչիւր ֆիլմի ցուցադրութիւնը եւ գնահատելու շնորհալի եւ տաղանդաւոր բեմադրիչ՝ Սարգի Մուրատեանի ներդրումը հայ ֆիլմարուեստի մարզէն ներս:

Հերթական իւրաքանչիւր երեկոյ, ներկաներուն ցոյց տրուեցաւ 1960-ական թուականներէն մինչեւ 2002 թուականը, բեմադրիչի պատրաստած իւրաքանչիւր ֆիլմը, իր տարբեր նիւթերով, ոմանք ազգային-յեղափոխական, ուրիշներ սիրային-ընտանեկան: Վերջին երկուքի պարագային, «Մուսա Լերան 40 օրերը», մանաւանդ վերջինը՝ «Ալիսիա»ն, սրահը ուղղակի յորդեցաւ ներկաներով, որոնք աւելի քան երկու ժամ տեւող ֆիլմերը դիտեցին ոտքի վրայ: Հարիւրէ աւելի չկրցան սրահ մուտք գործել տեղի անբաւարարութեան պատճառաւ: Այս երե-

Շար.ը էջ 19

# 30 ՏԱՐԻ ԵՏՔ՝ ՀԱՆԴԻՊՈՒՄ ԴԱՍԸՆԿԵՐՆԵՐՈՒ ՀԵՏ



Հանդիպումին մասնակիցներու խմբային լուսանկարը

ՍԵԴԱ ԹՕՓՈՒԶԵԱՆ

Պէյրութի Հայ Աւետարանական Գոլէճը մեր շատ սիրելի երկրորդ տունն էր, մեր մտքի դարբնոցը, ապագայի յաջողութիւններու մեր ուղեցոյցն ու տիպար հայու եւ օրինակելի քաղաքացիի կերտիչը:

Շուրջ 30 տարիներ ետք, նախաձեռնութեամբ խումբ մը նուիրեալներու եւ մասնաւորաբար Ռաֆֆի Գիրգորեանի, 8-15 Յուլիսին, 2006, Լոս Անճելոսի մէջ տեղի ունեցաւ 1976 թուականի շրջանաւարտներու համախմբումը: Այս հանդիպումներուն ներկայ էին նաեւ Պէյրութի Հայ Աւետ. Կեդրոնական Բարձրագոյն Վարժարանի ընթացաւարտներէն խումբ մը: Ընդամէնը 25-26 դասընկերներ եւ դասընկերուհիներ իրենց կողակիցներով, որոնք եկած էին Լիբանանէն, Քանատայէն եւ Ամերիկայի Միացեալ Նահանգներէն:

Մեր համադասարանցիներու հանդիպումները յիշեցուցին բանաստեղծին խօսքերը. «Եօթն օր ես ապրեցայ, եօթն ալ՝ ամբողջ Կիրակի...»:

Առաջին օրուան համախմբումը՝ տեղի ունեցաւ Տէր եւ Տիկ. Վիգէն եւ Նոնո Աբելեաններու բնակարանը: Մեքսիքական համադամ ճաշերու սպասարկումին առընթեր՝ հաճելի էր մանաւորաբար երկար տարիներու բացակայութենէ մը ետք դարձեալ իրարու հանդիպիլ եւ ծանօթանալ նաեւ իրենց կողակիցներուն:

Երկրորդ օրուան ճաշկերոյթը տեղի ունեցաւ Արա եւ Անի Ղանիմէններու տունը, ուր հիւրընկալ զոյգը «Արաբական Երեկոյ» մը հրամցուց մեզի, իր ճոխ աղանդերներով: Դպրոցական օրերու քաղցր յուշերու պատումով երեկոն ստացաւ ուրախ եւ ջերմիկ մթնոլորտ մը, որուն առանցքը՝ հայ կրթական հաստատութիւնն էր:

Նոյն խումբը տարբեր օր մը հիւրասիրուեցաւ Տէր եւ Տիկ. Վերա եւ Ստեփան Պաղպուտարեաններու կողմէ:

Յուլիսի 11-ին, 2006, շրջանաւարտները ընկերային հաճելի հաւաք մը ունեցան Ալքազար ճաշարա-

Շար.ը էջ 19

# ԻՇԽԱՆԱԿԱՆ ՆՈՒԻՐԱՏՈՒՈՒԹԻՒՆ ԼԱՐՔ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԸՆԿԵՐԱԿՑՈՒԹԵԱՆ

ԹԱԳՈՒՀԻ ԱՐԶՈՒՄԱՆԵԱՆ

2006 թուականը եղաւ ամենանշանակալին Լարք երաժշտական ընկերակցութեան համար: Այն եղաւ աննախադէպ վերելքի, պայծառ փայլատակման տարի: Լարքն ունեցաւ իր սեփական շէնքը եւ այսօր իր գործունէութիւնն է ծաւալում սեփական յարկի տակ:

Աւետիք Իսահակեանն ասում է. «Ցանկութիւնը ծնում է երազանք: Այն ինչ չի կարելի աշխարհում նիւթապէս իրականացնել, իր կենսագործումը գտնում է երազների, տեսիլների, լեգենդների, առասպելների մէջ: Բայց կատարուեց մի հրաշք եւ հիւսուեց իւրաքանչիւր լարքականի երազը, առաւելաբար Լարքի հիմնադիր-առաջնորդ Վաչէ Պարսումեանի տարիների իղձը, վսեմ ու յաւերժող:

Վեր խոյացաւ Լարքի հոյակերտ շէնքը, որովհետեւ ազնիւ համախոհների եւ բարի մարդկանց մի բանակ կանգնեց Լարքի կողքին:

Իսկ ո՞վ ղեկավարեց շէնքի կառուցման եւ վերանորոգման ողջ ճարտարապետական եւ շինարարական աշխատանքները: Այդ անձնաւորութիւնը բոլորիս սէրն ու յարգանքը վայելող Պրն. Միքայէլ Եուսէֆեանն էր, որի համար մեծ է սէրը Աստուծոյ, իր ժողովրդի, հայ դպրոցի հանդէպ: Նրա համար ծառայութեան անկեղծ ոգին, զոհաբերուող նուիրումը դարձել են ոչ թէ խօսք, այլ իրականացուած ապրում: Նա քաջ գիտէ, որ գերագոյն երջանկութիւնը, որ Աստուած տալիս է մարդ արարածին, դա սրբազան պայքարով եւ տեւական տառապանքով գիտակից զոհաբերութեամբ լեցուն կեանքն է: Եւ ահա իր կեանքի պատմութեան մէջ առաջինը չլինելով, Պրն. Եուսէֆեանը իր շունչն ու ոգին խառնեց իր աշխատանքին եւ այսօր վեր խոյացած պատերի մէջ նրա ապրումներն ու մտքերն են, նրա խոհերն ու անքուն գիշերները:

Այս նորակառոյց շէնքը, որ գտնւում է 543 Arden Ave., Glendale հասցէում, ունի իր արդիական յարմարութիւնները՝ դասարաններ, համերգասրահ, ժողովասենեակ, գրասենեակներ, գրադարան, խոհանոց, որոնց մի մասը ըստ աւանդոյթի արդէն ունեն իրենց անուանատէրերը:

Եւ ահա վերջերս կատարուեց մի իշխանական նուիրատուութիւն՝ 100,000 (հարիւր հազար տոլար) մեծարգոյ Տէր եւ Տիկ. Դրբանճեանների կողմից, որոնց անունը գեղեցիկ տառերով կը գրուի Լարքի համերգային սրահի ճակատին:

Այս պահին կրկին մտաբերում եմ մեծ բանաստեղծ Աւետիք Իսահակեանի խօսքը որ ասում է՝ «Մարդ 2 անուն պիտի ունենայ, մէկը իր հետ տանելու, միւսը աշխարհին թողնելու: Աշխարհում թողնուած անունի չափով եւ պայմանաւորուած մարդու գործի չափն ու կշիռը»:

Մարդը որ օժտուած է քրիստոնէական բարոյականով, պիտի նախընտրէր գիտակից ընծայաբերութեամբ իր կեանքը պսակել իմացեալ անմահութեամբ:

Այո, մարդկութեան դարաւոր երազը կարող է իրականանալ, եթէ Քրիստոսով աշխարհ բերուած սիրոյ, ծառայութեան ոգին դառնայ ուղեցոյց մարդկային կեանքի:

Սէր, ծառայութիւն, նուիրում, այս գիտակցութեամբ, ազնիւ եւ վեհ հոգեբանութեամբ են ապրել եւ ապրում իրենց կեանքի իւրաքանչիւր պահը, Տէր եւ Տիկ. Դրբանճեանները:

Ի՞նչ է կեանքը: Հազարաւոր տարիներ փիլիսոփաները փորձել են պատասխանել, բայց կեանքը կեանք է, կեանքը ապրում են: Մնում է միայն ապրել բարութեամբ, նուիրուածութեամբ, երջանկացնելով նաեւ շրջապատը:

Տէր եւ Տիկ. Դրբանճեանների անունը յաւիտեանս հնչելու է Լարքի պատմութեան էջերում, այն կրթօճախի, որը մշակոյթի գանձարանում հատիկ-հատիկ գեղեցիկ կաթիլներ է աւելացնում:

Հայերս հրաշալի մի ուղերձ ունենք՝ «Մեր գլխից անպակաս լինէք, վարձքերնիդ կատար»:

Նման բարերար անձանց մեր կողքին լինելը մեզ առաւել վստահեցնում է, որ միասնականութեամբ, քրիստոնէական հաւատքի խորհրդով ամրացած ապագայի վերելքի ճանապարհը յաղթահարել կը լինի լարքականների համար ընդմիշտ:

Հաւատալով մեր ժողովրդի, հայ մարդու հանճարին, Լարքի նպատակն է կրթել արժանաւոր սերունդ եւ միաժամանակ նոր սերնդի մէջ ստեղծել ժառանգորդը նախորդ սերնդի:

Դեռեւս կան դասարաններ, որոնք սպասում են իրենց անուանատէրերին:

Յիշելով հին լեգենդը՝ եթէ տաճարի սիւներից մէկը մտածի, որ ինքը կարող է հանգստանալ, ոչինչ, գմբէթը թող միւսների ուսին յենուի, այդ կառոյցը կը փլուի:

Նորակառոյց շէնքը, առաջնորդութեամբ Փրոֆ. Վաչէ Պարսումեանի մեզ տանում է ինքնազօրացման եւ առաջընթաց զարգացումի ի փառս մեր մշակոյթի:

Գրաւուած թուական

Սեպտեմբեր 9-ը Շաբաթ
Սեպտեմբեր 10-ը Կիրակի

Հայրենի մեծանուն երգիչ
Համլէթ Գէորգեանի համերգները

Glendale High School Auditorium-ի մէջ
Մանրամասնութիւններու համար հեռախօսել
Զաքրեան վիդեօ (818) 242-6928
Քաջ Նազար (818) 246-0125

## ԳՐԱԿԱՆ

# ՊԱՏՄՈՒԱԾՔ
# ՕՐԵՐՈՒ ՍԱՀԱՆՔԻՆ ՀԵՏ

ՏՕՔԹ. ԱՐՇԱԿ ԳԱԶԱՆՃԵԱՆ

Տարիներու սահանքին հետ ձեւ, տարածութիւն ու բովանդակութիւն ունեցան Համբիկ Նարեանի եւ հարազատներուն ընտանիքները: Իր եղբօր Վարանդի ամուսնութիւնը նոր, այլապէս հաճելի անակնկալ մը եղաւ, որ բերկրութեամբ յորդեցուց բոլորի սրտերը: Տակաւ կը մեծնային տղաները, եւ ինչո՞ւ չէ, հասակները կ՛անցնէին իրենցը: Գերդաստանը կը մեծնար:

Վահիկ առաւելաբար առեւտրական հակումներ ունենալուն, կանուխ Թողուց դպրոցը եւ մտաւ քեռիներուն՝ Պրն. Երուանդին ու Պրն. Փառէնի ընկերովի վաճառատունը: Երբեմնի, փոքր տարիքին չփացած՝ ներկայի գեղահասակ, խիտ ու սեւ յօնքերուն տակ ջերմութիւն բաշխող աչքերով երիտասարդը, արդէն իսկ Թեւակոխած էր իր քսաներորդ գարունը: Կազմած էր իր ընկերական լայն շրջանակը, որուն յաճախակի գիշերային զբօսանքները սկսեր էին ալ մտահոգել իր քեռին: Կը պատահէր, որ շատ ուշ գիշերներ, մտահոգ քեռին, ափ առնէր Վահիկի ընկերներուն տանդուները, հարց տալու համար, Թէ ո՞ւր է ան, արդեօք տեսա՞ծ են զինք:

Ինչ լաւն էին այն օրերը, երբ բռնած անոր մանկունակ, մետաքսեայ ձեռքէն, կը շրջէր ծանօԹ Թաղեր ու հանդիպած մթերիմի, ծանօԹի առջեւ բարեմտաբար կը յոխորտար, ներկայացնելով Վահիկը.

- Սանուկս է:

Ինչ լա՛ւն էին այն օրերը - այդ ամառնային օրերը, գիւղը: Բէյֆուն, կ՛իջնէին այգի, կը քաղէին խաղող, Թուզ ու սալոր, տանձ ու խնձոր: Վերադարձի ճամբուն վրայ՝ Վահիկ կը մտնէր մորմենիներու Թուփին մէջ, ծակծկելով ձեռք ու ոտք: Գլուխ գործոցը՝ կը մագլցէր ջրոտ կարմիր ԹուԹի ծառը, ա՛խ այդ ԹԹենին... ուր քիԹ ու մուռԹ, հագուստ ու գլուխ կը ներկէին կարմիրով:

Ինչ լա՛ւն էին այդ օրերը... երբ ՝ գնդակին ետեւէն կը վազէին միասին գիւղական եկեղեցիին բակին մէջ:

Ո՞ր մէկը յիշէր, որ մէկը պատմէր: - Կը մանկանար՝ եւ ինք, Վահիկով ջերմացող, Վահիկով խանդավառուող, Վահիկով կերպարանափոխուող անոր երանաւէտ մանկունակ աշխարհին մէջ:

Խորն էր քեռիին ցանկութիւնը՝ Վահիկը տեսնել բժիշկ:

Մեծապէս յուզուեցաւ այն օր, երբ Վահիկ Թողուց ուսումը, մտաւ կեանքի ասպարէզ:

Երկար ժամանակ կրցած էր քայլ պահել Վահիկի հետ: Բայց մինչե՞ւ երբ սակայն: Տարիքը ունէր իր խօսքը, առողջութիւնը՝ իր պայմանները. Մինչ տարիները կը Թաւալէին, Վահիկ կը մեծնար առողջ ու կայտառ՝ իր ոտքերը ձայներ կը հանէին: Ցոյց կու տային յոգնութեան նշաններ: Մերթ կը ցաւէին: Ցաճախ դժուար կը քալէին: Բժիշկները կ՛ըսէին Թէ ոտքերուն պնդերակութիւնը պատճառ էր այդ ցաւերուն: Մէջքը սկսեր էր ունենալ անբնական քմայքներ . մէկ մէկ կը բռնուէր, անշարժեցնելով զինք իր գտնուած դիրքին մէջ: Սխալ շարժում մը ցաւերու տարափ էր: Մշուշը սկսեր էր մաղուիլ իր աչքերուն բիբերուն վրայ: Ինչու՞ երկարէր. ինք պարզապէս կը ծերանար: Գերզգայնութիւն մը տակաւ կը կլանէր զինք: Դարձեր էր գերազանցապէս կասկածամիտ, պարզապէս յոռետես: Վահիկի առօրեայ գիշերային զբօսանքները առիԹ կը դառնային տանջալից սպասումներու: Արդեօք արկա՞ծ մը պատահած էր: Արդեօք արեւանգա՞ծ էին զինք: Արդեօ՞ք...

Ծնողներուն՝ հօրը՝ Համբիկի եւ մօր՝ Վարդին հանդարտութիւնը այլապէս կը մտահոգէին, ջղագրգռէին զինք:

-Այսքան անհոգութիւն՝ ոճիր է ոճիր, կ՛ըսէր քեռին:

-Տարիքն է, տարիքը, վաղը կը հանդարտի, կ՛ըսէր հայրը, Պրն. Համբիկ:

-Բարի է, շատ բարի. վատ բան չըներ, ընկերներով կը զուարճանան: Մե՞ղք կայ անոր մէջ, կը փորձէր մեղմել մայրը, Տիկ. Վարդ:

Այդ օր, Նոյեմբերի ցուրտ ուշ գիշերը, պատահեցաւ անսպասելին:

Առաւօտեան դէմ էր ուշացած գիշերը: Տակաւին անշարժ ու լուռ էր քնոտ Թաղը: Խիստ դանդաղ կշռոյԹ ունէր զարԹնումը: Մինչ, Արեւելքէն երկնուող առաւօտը աւետող արեգակը, ձեռնարկելու սկսած էր երկնակամարի ճառագայԹումներուն: Հազուադէպ կը լսուէին պատահական ու ցանցառ անցորդներու ոտքի ձայները : Այդ գիշերը ամբողջ, քեռիին յարկաբաժնի հիւրանոցին լոյսերը վառած մնացեր էին: Վահիկ տուն եկած չէր տակաւին:

Քեռին, քանի՜ քանի՜ անգամներ փողոց իջած էր անհունին մէջ իր սանուկը դիմաւորելու յոյսով: Սանուկը չէր յայտնուեր, անայլայլ յամառութեամբ: Զար մտքեր փորձուԹեան մատներ էին զինք՝ դիմելու մինչեւ ոստիկանութիւն, իրեն ծանօԹ սանուկին ընկերներուն, վերջապէս, անգամ սատանային՝ բայց ընկրկեր էր հեռաւորութեան, ցուրտին եւ իր ֆիզիքական անկարողութեան պատճառաւ: Քեռին անտրամաբանական կը գտնէր այս ուշացումը: Ալ կասկածէ վեր էր. Վահիկ զոհ դարձած էր փորձանքի մը: Ստահակին մէկը խափանած էր անոր արեւը: Արդէն իսկ ծայր տուած էր միջ-յարանուանական Թշնամութիւններ երկրէն ներս, երկիր մը, որ ունէր յարանուանական կառոյց: ՄերԹ մերԹ ցոյցեր կը կազմակերպուէին, կը լսուէին սպառնական յայտարարութիւններ: Կ՛ըլլային առեւանգումներ: Ամէն պարագային, երկիրը նստած էր հրաբուխի վրայ:

Ծիշդ է, Թէ Վահիկ զգոյշ էր, արկածախնդիր չէր, բայց անիկա բաւարա՞ր էր, որ խնայէին իրեն: Անիկա բաւարա՞ր էր, որ ինքզինքին Թոյլատրէր իր այս անբարեխիղճ վարուելակերպը: Քիչ ետք, որ պիտի տեսնէր զինք, խստօրէն պիտի յանդիմանէ՛ր զինք, բարկանա՛ր պիտի վրան, խայտառակէ՛ր: Իրաւունք չունէր իր հաճոյքին համար տառապեցնելու ուրիշներ: Կռնակը պատին, քեռին մայԹին վրայ նստած տեղը սԹափեցաւ յանկարծ: Այս ի՞նչ յանդիմանելու, - բարկանալու, խայտառակելու մասին է խօսքը: Ընդհակառակը՝ եԹէ տեսնէր՝ Աստուած իմ այս ինչ հոգեվիճակ է կարօտով, խանդաղատանքով, անմնացորդ շնորհակալութեամբ պիտ դիմաւորէր զինք, սեղմէր պիտի կուրծքին, շոյէր գլուխը, գորովալից համբուրէ՜ր, համբուրէ՜ր, համբուրէ՜ր: Այս մտորումներով տարուած էր երբ բարեհամբոյր մրափը փետրանման Թառեր էր իր յոգնաբեկ արտեւանունքներուն վրայ:

Ժամը բաւական յառաջացած էր երբ Վահիկ վար իջաւ ինքնաշարժէ մը ու քայլերը ուղղեց դէպի տուն: ՄայԹին հակառակ ափին կը գտնուէր քեռիին տունը, երկրորդ յարկի վրայ: Ինչպէս միշտ, իր աչքերը ինկան հոն, փողոցին նայող հիւրանոցին վրայ, որուն լոյսերը առհասարակ կը վառէին շռայլօրէն այս ժամերուն, ինչպէս միշտ, իր տուն գալէն ետք կը մարէին անմիջապէս: Ինք կը շարունակէր իր ճամբան, կը բանար դուռը, կը մտնէր իր սենեակը ու քիչ ետք կը մտնէր անկողին: Այդպէս ալ ընելու վրայ էր, երբ նախապէս անցուցած ժամերուն վերյիշումը արԹուն պահեց զինք որոշ ատեն մը:

Ընկերոջ, Գեղամին տարեդարձն էր: Հոն էին բոլոր ընկերընկերուհիները, հոն էր նաեւ ան, որուն կը հանդիպէր առաջին անգամ ըլլալով մինչեւ այս պահը իր այտերուն վրայ կը զգար անոր երկար արտեւանունքներուն բացխփումով իր այտին վրայ տարածուած ջերմութիւնը: Պարեր էին միասին երկա՜ր, յուզուած ու իրարու սրտի զարկին ականջալուր: Խօսեր էին ԹեԹեւ, կարճ ու անիմաստ բովանդակութեամբ: Այդ բոլորէն մնացեր էին արտեւանունքներուն խաղն ու սրտերու բաբախումը, պարն ու անիմաստ խօսակցութիւնները: Հիմա, չէր իսկ յիշեր անունը:

Ծարաւը զինք առաջնորդեց խոհանոց, ու անոր պատուհանէն՝ քեռիին հիւրասենեակը, ուր տակաւին վառած կը մնային ելեքտրալամբերը: Արտասովոր էր քեռիին հիւրասրահի լոյսերուն յամառումը: Վրան անցուց ցայգազգեստը, քայլերը ուղղեց մայԹէն անդին: Բայց ի՞նչ կրնար ըլլալ անունը այն խարտիշահեր աղջկան, որ շուքի պէս կը հալածէր զինք: Զկար քեռին: Քեռկինը պատմեց եղելութիւնը:

- Զտեսա՞ր զինք. ճամբաները ինկած քեզ կը փնտռէ, ըսաւ ան:

Վահիկ իջաւ փողոց, ուր նստակեաց մարդկային ստուեր մը գրաւեց իր ուշադրութիւնը. մօտեցաւ. պատին կրԹնած, կիսով սառած ստուերին: Քեռին էր:

-Քեռի, ի՞նչ կ՛ընես հոս:

Քեռին Թմբիրէն արԹնցաւ.

-Կարծես ցուրտ էր օդը: Նստած տեղս Թմրած-քնացած եմ: Դո՞ւն ես Վահիկ, տղա՛ս:

Վահիկ, Քեռիին Թեւանցուկ, բարձրացաւ տուն: Քեռկինը Թէյ պատրաստեց, մինչ Վահիկ պատմեց իր ուշացումին մասին: Իսկ Քեռին մէջընդմէջ կը բացագանչէր.

-Փա՜ռք քեզ Աստուած:

Անցնող օրերը մտահոգիչ օրեր դարձան տնեցիներուն ու հարազատներուն համար: Այդ լուսցող գիշերուան միջադէպէն ասդին քեռին չգտաւ ինքզինք: Իր մէջ բոյն դրած ջերմախտը չի լքեց զինք բնաւ: Թոքերու ուժեղ բորբոքում մը անկողնին գամեց զինք, որ, օր մըն ալ անակնկալօրէն շիջեցաւ, Մարտի տեղատարափ անձրեւոտ օր մը, արշալոյսին:

Ինչպէս բոլորին, նոյնպէս եւ Վահիկին համար անսպասելի կորուստ մը դարձաւ քեռիին մահը, որ որպէս մնայուն մղձաւանջ, կը հալածէր զինք տիւ ու գիշեր: Անգամ մը, իր անմխիԹար վիճակին մէջ այցելած էր քեռկինը, ու յուզումնախառն հոգեվիճակով հարցուցած անոր, Թէ ինչո՞ւ այդպէս անժամանակ ու անակնկալ՝ մեռաւ քեռին: Քեռկինը յուշած էր իր ականջին հազիւ լսելի ձայնով.

- Որովհետեւ, քեռին շատ սիրեց քեզ:

## ԱՐԱՐԱՏ ԵՒ ՀԱՅ ԲԱՌԵՐԻ ՍՏՈՒԳԱԲԱՆՈՒԹԻՒՆԸ

ԴՈԿՏ. ԳԷՈՐԳ ԽՐԼՈՊԵԱՆ

Արարատ լերան անուանումը կազմուած է երկու հնդեւրոպական ծագում ունեցող հնագոյն հայերէն բառերից. Ար եւ Ատ. Ար-ը հնագոյն դարաշրջանի հայերի Արեւի աստծոյ անուանումն է: Լեզուի զարգացման հնագոյն շրջանում յաճախ յոգնակին արտայայտւում էր տուեալ բառը երկու անգամ կրկնելով: Այսպէս օրինակ: Գոյներ, բազմագոյն ասելու փոխարէն ասում էին գոյն-գոյն: Նոյն տրամաբանութեամբ աստուածներ գաղափարը արտայայտելու համար ասում էին Ար-Ար: Ատ հնդեւրոպական լեզուներում օգտագործւում տեղ կամ վայր իմաստով (ինչպէս անգլերէնում-At): Այսպիսով Արարատ նշանակում է աստուածների բնակավայր: Հայ դիցաբանութեան ու առասպելաբանութեան մէջ մենք հանդիպում ենք մի շարք պատումների, որոնք խօսում են Արարատի լանջին, Արարատ քարայրներում ու շրջակայքում բնակուող աստուածների ու դիցաբանական հերոսների մասին: Պատահական չէ, որ Հայկ նահապետին յաջորդող հայ ղեկավարների (առասպելական հերոսների ու Թագաւորների) մեծամասնութեան անունները սկսում են Ար-ով:

Մեր ազգային անուանումը նոյնպէս ունի հնագոյն հնդեւրոպական ծագում: Հայ-Հայկ-Հայք անուանակոչումը գալիս է հնդեւրոպական HAY-HIGH բառից, որը նշանակել է բարձր, քաջ, ուժեղ, հսկայ: Դրա համար էլ Հայկի եւ Բելի դիցաբանութեան մէջ Հայկը ունի երկնային ծագում (աստուածային, աստղային) քաջ է եւ հսկայ: Իսկ մեր միւս անուանումը Արմէն (Armen) նոյնպէս հնդեւրոպական ծագում ունի. Ար- (արեւի աստուածը) եւ մարդ (man): Արմէն նշանակում է արեւորդի, արեւային մարդ: Armenia նշանակում է արեւորդիների բնակավայր, արեւորդիների հայրենիք:

ՄԱՄՈՒԼԻ ՏԱԿ Է ԵՒ ՇՈՒՏՈՎ ԼՈՅՍ ԿԸ ՏԵՍՆԷ
ԼԻՒՍԻ ՍԻՒԼԱՀԵԱՆԻ
«ՕՆՆԻԿ ՍԱՐԳԻՍԵԱՆԻ ՀԵՏՔԵՐՈՎ»

Ստուար հատորը, որ կ՚ընդգրկէ երախտաշատ Օննիկ Սարգիսեանի 1951-1991 տարիներուն ընԹացքին ստորագրած՝ գրականագիտական եւ գրադատական յօդուածները, խմբագրական եւ խմբագրական նշումները, գրախօսականները, դիմաստուերները, արձակ էջերը:

# ՎԱՐԴԱՎԱՌ՝ ՊԱՅԾԱՌԱԿԵՐՊՈՒԹԻՒՆ ՏԵԱՌՆ ՄԵՐՈՅ ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ

Հայաստանեայց Առաք. Եկեղեցւոյ Չորրորդ Տաղաւար տօնն է, որ միասին կը տօնուի եւ մեզի ծանօթ է որպէս Վարդավառ եւ Պայծառակերպութիւն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի:

Պայծառակերպութեան կամ Այլակերպութեան տօնը կը զուգադիպի Ս. Յարութեան տօնէն 14 շաբաթներ կամ 98 օրեր ետք: Վարդավառը հայ ժողովուրդի հեթանոսական շրջանէն մեզի հասած ազգային տօնախմբութեան տօն մըն է, որ մեզի ծանօթ է նաեւ Նաւասարդ անունով: Նաւասարդ բառը Իրանական փոխառութիւն մըն է, որ կը նշանակէ Նոր Տարի: Հայկական տոմարի համաձայն՝ Վարդավառը այս տարի կը զուգադիպի Օգոստոսի 23-ին:

Վարդավառը, Նաւասարդը Աստղիկ դիցուհիին նուիրուած տօն մըն է: Իսկ Պայծառակերպութեան կամ Այլակերպութեան տօնը զուտ Ս. Գրային կրօնական դէպք մըն է, նկարագրուած՝ Մատթէոս Աւետարանիչի 17:1-14 համարներուն մէջ: Յիսուս կը կերպարանափոխուի իր աշակերտներուն առջեւ Թափօր Լերան վրայ շրջապատուած Մովսէս եւ Եղիա մարգարէներու մէջտեղ, կանգնած, դէմքը պայծառափոխուած, իսկ իր հագուստը, ճերմակ ձիւնի նման սպիտակցած: Մեր Տէրը երկինքի արքայութիւնը կը բանայ պահ մը անոնց աչքերուն առջեւ եւ իր Լուսոյ Փառքով անոնց կ՚երեւայ ցոյց տալով յաւիտենականութիւնը:

Կրկնակի սոյն հեթանոս եւ քրիստոնէական տօներու միացումը կատարած է Ս. Գրիգոր Լուսաւորիչ: Հայոց մեծ սուրբը զուգակցած է սոյն երկու տօները իր հմուտ քաղաքագիտութեամբ եւ հեռատեսութեամբ, պահելու եւ յաւերժացնելու համար Հայ Եկեղեցւոյ ազգային նկարագիրը:

Աստուածաբանական կապ մը կարելի չէ գտնել սոյն տօներու միջեւ: Սակայն կարելի է որոշ չափով մը հորիզոնական օրինակներ գտնել, ինչպէս՝ Վարդավառ բարդ բառի իմաստը, որ կը նշանակէ վարդերով զարդարել: Իսկ Նաւասարդը, այսինքն տարեգլուխ կամ Նոր տարին, ուշադիր դիտողի մը համար կարելի է յիշատակել բաղդատական մը կատարելով Փասատինայի մէջ տեղի ունեցող «Րոզ Փըրէյտ»ին:

Արտաշէսեան հարստութեան շրջան, 190-54 Ն.Ք. կը կատարուէին նման մարգախաղեր Բագրեւանդ գաւառին մէջ: «Թագաւորն իր այրարատեան չորս բիւր զումարտակօք, 600 գաւառատեարք եւ 400 գահակալ իշխանք, բազմութիւն կրօնական աւագ պաշտօնէից, ամէնքն իրենց սեպուհներով, պաշտօնէիւք, ճորտերով, որով միայն քաղաքական, զինուորական եւ կրօնական ազգային հանդիսացեալք իրենց մարդերով, քանի մը բիւր կ՚ըլլային զատ ի հասարակ զօրականէն: Իսկ բազմութիւն ագնուաց եւ ռամկաց՝ միլիոնաւոր պիտի ըլլային»: Ալիշան, Յուշիկք Ա. 295-97:

Մշոյ Ս. Կարապետ Վանքին մէջ դարերով ուխտագնացութիւն տեղի ունեցած է: Հոն ալ ժամանակին կը հաւաքուէին «աշխարհախումբ» օրուան Թագաւորին, Նախարարական դասուն եւ ռամիկին հետ: Ահաւասիկ անգիր դպրութենէն մեզի հասած բանաստեղծական գողտրիկ պատառիկ մը Արտաշէս Հայոց Արքայի շրջանէն.

«Ո՜հ տայր ինձ զծուխ ծխրանի,
Եւ զառաւօտն Նաւասարդի,
Զվազելն եղանց եւ զվազելն եղջերուաց
Մեք փող հարուաք եւ թմկի հարկանէաք...»:

Ասոնք մտածումներ են գերգայուն հոգիի մը՝ որ կ՚ոգեկոչէ Աստղիկն ու Վահագնը: Վարդավառի առիթով ջուր սրսկելու, աղաւնիներ թռցնելու հանդիսութիւնը աշխարհին կը պարգէ՝ խաղաղութեան, մաքրութեան, աշխոյժ կեանքի, բարձր մշակոյթի, մարզախաղերով յաղթանակի պսակին արժանանալու բերքահաւաքի ամանորեան տօնը:

Մեր Տիրոջ Այլակերպութեան օրուան դէպքը լրումն է Մովսէս եւ Եղիա մարգարէներու աշխարհ գալուն: Երկուքն ալ ամենամեծ հսկաները հանդիսացած են Հին Կտարակարանի մէջ:

Ա. Հին Կտակարանին մէջ Եբրայեցի ժողովուրդը Եգիպտոսէն կը փախչէր դէպի Աւետեաց Երկիր: Սոյն դէպքը տեղաշարժի ամենէն ցայտուն պատմութիւններէ մէկը կը հանդիսանայ հրեայ ժողովուրդին: Անոնք միլիոնաւոր զանգուածային թիւով կը տեղափոխուէին անցնելով Կարմիր Ծովէն դէպի Սինայի անապատը, որ կը խորհրդանշէ մահէն դէպի կեանք գացող իրականութիւնը իրենց ամենամեծ յաղթանակն էր: Ինչո՞ւ, որովհետեւ Աստուած կ՚ընկերանար երկինքէն, ուղարկելով կրակէ ամպը ցերեկ ատեն, իսկ կրակէ սիւնը՝ գիշերով: Ծննդոց 13:20-22:

Վարդավառի տօնին առիթով ջուր սրսկելու աւանդութիւնը մեզ կը տանի Ս. Գրային այն ծանօթ պատմութեան երբ Նոյ Նահապետ ջրհեղեղի աւարտին կ՚իջեւանի Հայաստան Պիպլիական աշխարհը, ուր ան ութ հոգիներով եւ իրենց անասուններով կը փրկուի: Խաղաղութեան պատգամը առաջին անգամ Արարատ լերան գագաթէն կը հասնի համայն մարդկութեան:

Բ. Նոյնպէս, մեր Տիրոջ Յիսուսի Քրիստոսի Ս. Յարութեան տօնը՝ մահէն դէպի կեանք անցնելու Քրիստոնէական Վարդապետութեան ամենէն ցայտուն Տօնն է: Իսկ Պենտէկոստէն Ս. Հոգիի Իջման շնորհքներու բաշխման դէպքն է, որ տեղի ունեցաւ Սուրբ Յարութեան տօնէն յիսուն օրեր ետք: Իսկ Պայծառակերպութեան օրուան տեսիլքի խտացումը մեր Ս. Պատարագի վերջաւորութեան պատարագիչ քահանայ հայրը կ՚արտասանէ ըսելով. «Կատարումն օրինաց եւ մարգարէից դու ես, Քրիստոս Աստուած Փրկիչ մեր, որ լցեր զամենայն հայրական տնօրէնութիւնս քո. լից եւ զմեզ հոգւովդ քով Սրբեով»:

Երբ ամէն անգամ հայոց երկինքը մթագնած է տխրութեամբ, սուգի մատնելով մեր ժողովուրդի զաւակները, երբ թանձր մշուշը պատած է հայ ժողովուրդը, այդ նոյն պահուն մեր ժողովուրդը իր հայեացքը սեւեռած է դէպի իր հզօրացումի աղբիւրը: 1700 տարիներ առաջ Ս. Գրիգոր Լուսաւորչի տեսիլքէն ծորած հաւատքով կ՚ապրի եւ կը գոյատեւէ Ս. Մեսրոպի ոսկեղնիկով, իր աչքերը յառած դէպի սուրբ լեռը Արարատ, մայր Աթոռ Ս. Էջմիածնին եւ Աւետարանի Լոյս էջերուն:

# ՍՏԱՑՈՒԱԾ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ «ՀԱՅԿԱԿԱՆ ԼԵՌՆԱՇԽԱՐՀԸ ԶՐԱԴԱՇՏԱԿԱՆ ՀՆԱԳՈՅՆ ԸՆԿԱԼՈՒՄՆԵՐՈՒՄ ԵՒ ՄԱՏԵԱՆՆԵՐՈՒՄ»

## ՅՈՎԻԿ ՆԵՐՍԻՍԵԱՆ




Լոյս տեսաւ Իրանահայ վաստակաւոր պատմագէտ, Նիւ Եորքի Գիտութիւններու Ակադեմիայի իսկական անդամ Յովիկ Ներսիսեանի գիտական եւ պատմական արժէք ներկայցնող «Հայկական Լեռնաշխարհը Զրադաշտական Հնագոյն Ընկալումներում եւ Մատեաններում» հատորը, 320 էջերէ բաղկացած:

Երկար տարիներու պրպտումներու, յամառ աշխատանքի արդիւնք է սոյն աշխատութիւնը, ուր արծարծուած խնդիրները կը յենուն անհերքելի փաստերու վրայ: Հեղինակը օգտուած է 100-ի չափ հայկական, ինչպէս նաեւ օտար աղբիւրներէ եւ ընթերցողին սեղանին կը դնէ բազում փաստերով լեցուն «Հայկական Լեռնաշխարհը Զրադաշտական Հնագոյն Ընկալումներով եւ Մատեաններով» հատորը: Գիրքը խմբագրած է բնագէտ-հանքաբան Փրոֆ. Ազատ Վեհունին:

Յովիկ Ներսիսեանի այս նոր աշխատութիւնը պիտի գայ լրացնելու այն մեծ բացը, որ նշմարելի էր մեր հնագոյն պատմութեան էջերէն ներս: Զրադաշտի եւ Աւեսթայի մասին հայերէն սակաւ ուսումնասիրութիւններ կան դժբախտաբար: Այս գիրքը պիտի գոհացնէ բոլոր գիտաշխատողները եւ ինչու չէ իւրաքանչիւր ընթերցողը:

Շնորհաւորելով իրանահայ պատմաբանի այս նոր աշխատութեան հրապարակումը, առողջութիւն եւ նորանոր նուաճումներ կը մաղթենք իրեն գիտական ասպարէզէն ներս:

## ՅՈՎԻԿ ՆԵՐՍԻՍԵԱՆ

Մշակութային շրջանակներու հանրածանօթ Յովիկ Ներսիսեանը ծնած է 1921 թուականին Իրան: Վկայուած է Թեհրանի եւ ապա Կլասքոյի (Անգլիա) համալսարաններէն: Գերադասելով զինուորական կեանքը, կը յաճախէ Իրանի զինուորական համալսարանը: Շահելով շրջանաւարտներու առաջնութիւնը, Թագաւորին կողմէ կը պարգեւատրուի թրով եւ կ՚ընտրուի Թագաւորական պահակագունդի սպայ: Կը ստանայ «աջուդանական» շքափոկ, ինչպէս նաեւ «Գիտութիւն» շքանշանը Թագաւորին կողմէ: 1948ին կը հրաժարի բանակային ծառայութենէն:


Յովիկ Ներսիսեան

1991 թուականին որպէս Աւեստթուաբան կ՚ընտրուի Նիւ Եորքի Գիտութիւններու Ակադեմիայի իսկական անդամ:

Հայերէն եւ Պարսկերէն լեզուներով բանասիրական բազմաթիւ յօդուածներու հեղինակ է:

2000 թուականին կը տպուի իր յօդուածներու ընտրանին:

2002 թուականին կը տպագրուի իր «Հայ Ժողովրդի Պետութեան եւ Պատմութեան Ակունքներում» ուսումնասիրութիւնը: Իսկ 2003 թուականին՝ «1750 Թուից Ներսիսեանների Տոհմածառը» նուիրուած 18րդ դարու Հայաստանի իրադարձութիւններուն, Մուշ, Կարին եւ Համատան քաղաքներու պատմութեան եւ աւելի քան 1800 անուններ մէկ տոհմի մէջ:

2004 թուականին կը տպուի իր «Հայերի Բունագաղթն ու Բաւարիացիների Հայկական Ծագումը» ուսումնասիրութիւնը:

2006 թուականին ընթերցողներուն կը ներկայացուի իր 5րդ գիրքը՝ «Հայկական Լեռնաշխարհը Ըստ Զրադաշտն ու Իր Աւեսթան» խորագրով, որ նախատեսուած է արեւելագէտներու եւ գիտական լայն շրջանակներու համար:

Jessica Demirdjian
REALTOR®
Prudential
California Realty
9878 Hibert Street
San Diego, CA 92131
Bus 858 653-6400 Fax 858 653-6440
Cell 619 846-7738 jessicad@prusd.com
An independently owned and operated member of Prudential Real Estate Affiliates, Inc.

## ՊԱՏՄԱԿԱՆ

# ԽՈՐԱՍԱՆԸ ԵՒ ՄԱՇՀԱԴԻ ՀԱՅԵՐԸ

*ԱՐԱ ԱԼԵՔՍԱՆԻ ՍԱՐԳՍԵԱՆ*
*ՊԱՐՍԿԵՐԷՆԷՆ ԹԱՐԳՄԱՆԵՑ՝*
*ՆՈՒԱՐԴ ԶԱՐԳԱՐԵԱՆ*
*(Շարունակուած «Մասիս»ի թիւ 25էն)*

3. Մոհամադ Ռեզաշահի թագաւորութեան սկզբում երկիրը շատ խառնաշփոթ վիճակի մէջ էր, որը բոլորին պարզ է, թողնենք եւ անցնենք Մաշադի պատմութեան:

Մոհամադ Ռեզայի գահակալութեամբ վերաբացուեցին հայկական դպրոցները ամբողջ Իրանում, ինչպէս նաեւ Էլմօ-Հոնար դպրոցը Մաշադում վերանուանուեց Արգէ Աշդաս եւ կրթական նախարարութեան ծրագրով դասաւանդման բոլոր առարկաները լինելու էր պարսկերէն լեզուով եւ միայն հայերէն լեզու եւ քրիստոնէական կրօնի ուսուցումը հայերէնով պիտի դասաւանդուէր: Հայկական դպրոցի վերաբացումը զօտեպնդեց տեղի հայերին եւ Արգէ Աշդաս դպրոցը, համարեայ տասը տարի նոյն անունով շարունակեց իր գործունէութիւնը:

Հայ ուսուցիչներն էին, տիկնայք՝ Արծուիկ Յարութիւնեան, Անիա Դաւթեան, Ռոզա Մանդասարեան, Հրանուշ Յովհաննիսեան եւ պարոնայք՝ Խաչատուր Սաղաթելեան, Բագրատ Յարութիւնեան եւ մի շարք պարսիկ ուսուցիչներ պարսկերէն լեզուի եւ տարբեր գիտական առարկաների համար:


Ձախէն աջ՝ Նիկոլ Գալանդերեան՝ Սարբզւարի Պարսկական դպրոցների ուսուցիչ եւ Կարապետ Յակոբեան

1942ին վերջապէս Ս. Մեսրոպ եկեղեցու հիմնարկէքը արտօնուեց, եւ հայ բարերարների ու երկրի Շերփարէ Քեշնարի ճարտարապետների, որոնք տարիներ Մաշադի մի շարք կառավարական նաեւ Իրանի Ազգային պանքի շէնքն էին կառուցում, յանձինս հանգուցեալ ճարտարապետ Թովմասեան, Բժշկեան, Մըսըրեան եւ Դաւիթխանեան եւ Շերքաթէ Քեշադի բոլոր հայ անձնակազմի օգնութեամբ ու ջանքերով կառուցուեց եկեղեցին եւ 1950 ( 1331) թուին նրանց կից, ատամնաբոյժ Տօքթ. Արամ Դաւթեանի արտօնութեամբ, կառուցուեց դպրոցի նոր շէնքը՝ նախկին Արգէ Աղդաուը վերանուանուեց Արեան եւ մինչեւ 1977 ( 1357) շարունակում էր իր առաքելութիւնը սփիւռքահայ ազգապահպանման սուրբ գործին նուիրուած:

1940ից երեք տասնամեակում Մաշհադի հայ շրջանաւարտ երիտասարդները որ ուսում շարունակելու նպատակով Թեհրան կամ արտասահման էին գնացել, Մաշհատ վերադարձան ընդամէնը մի քանի հոգի եւ մի խումբ էլ հաստատուեցին Թեհրանում:

1. Վերդարձած երիտասարդներից էր ճարտարապետ Շաւարշ Յարութիւնեանը որը 1936ին ուսանելու համար Գերմանիա գնաց քիմիագիտութեան մէջ մասնագիտանալուց յետոյ, պատերազմի պատճառով չկարողացաւ Իրան վերադառնալ, որից յետոյ Մաշհատ եկաւ եւ իր հօր՝ Մելքոն Յարութիւնեանի թել մանելու գործարանում, նրա աջակիցը եղաւ բայց դժբախտաբար մի քանի տարուց յետոյ երիտասարդ հասակում վախճանուեց:

2. Երկրորդ գործունեայ երիտասարդը Հրանդ Մանդասարեանն էր, որը միջնակարգը աւարտելուց եւ իր հօր մահից յետոյ նրա գործընկերների հետ ձեռնարկեց լրացնելու հօր կիսատ մնացած գործերը, ծաւալելով շարժապատկերի արհեստը, եւ մասնակցելով Մաշհադի քաղաքային խորհրդին, նպաստեց քաղաքի շինարարութեան եւ գեղեցկութեան:

3. Երրորդը՝ ճարտարապետ Մելքոն Սանթուրեանն էր, որը միջնակարգը աւարտելուց յետոյ, Ամերիկայում ստացաւ Նաֆթային մասնագիտութիւն եւ վերադարձաւ Իրան, Նաֆթային ընկերութեան մէջ ընդունուելու որոշ դժուարութեան պատճառով եկաւ Մաշհատ եւ Սանթուրեան ընտանիքի վաճառականական գործերին լծուելով իր գործընկերների հետ նորարարութիւն ստեղծելով շարժապատկերի արհեստի մէջ, Մաշհադի կինոների տէր ու բաժնետէր դարձան, հետեւեալ կարգով.

1. Հրանդ Մանդասարեան եւ բաժնետէրեր ունէին կինոներ՝ Հօմա, Իրան, Ֆերդուսի, եւ մեծ ու գեղեցիկ շարժապատկերի սրա Շահրէ Ֆարհանգ անունով:

2. Պրն. Մելքոն Սանթուրեան, Տօքթ. Արամ Դաւթեան, Վարդգէս Պետրոսեան՝ ունէին Մեթրոփոլ, Քրիստալ, շատ մեծ սրահով եւ 2250 աթոռով Դիամոնդը, որը ամբողջ Իրանում եւ Միջին Արեւելքում նմանը չկար:

3. Օսքուի եղբայրներ՝ Արիա եւ Ասիա սրահներ:

4. Պրն. Շէյխզադէ՝ Սաադի սրահը:

Ինչպէս նկատեցին սիրելի ընթերցողները քաղաքի տաս լաւ եւ արդիական սինեմաներից եօթը պատկանում էր Մաշհադի հայ համայնքի անդամներին, որը փայլուն պատկերացում է հայերի ձեռներեցութեանը: Ոչ միայն այս գործերով էին զբաղուած, այլեւ բացի վաճառականութիւնից, շինարարութիւնից եւ գործարանատիրութիւնից, շաքարի գործարանների հիմնելուն եւս մասնակից դարձան: Շաքարի գործարաններ հայ ճարտարապետների միջոցով հիմնուեց Թորբաթ Հէյդարէում, Ղուչանում, եւ Աբքուէ Մաշադում: Ճարտարապետ Պրն. Արտաւազդ Գուրջեանը որ հիմա բնակւում է Աւստրալիայում երկար տարիներ ղեկավարում էր Աբքուի շաքարի գործարանը: Ալքոլի գործարանի հիմնադրմանը, որի պահանջը զգացւում էր արհեստական կազմակերպութիւնների եւ հիւանդանոցների կողմից, կառավարութեան հրահանգով՝ «Շադ Ընկերութիւն» անուան տակ, մասնակցեցին պարոնայք՝ Արշակ Մելիք Սարգսեան, Արմենակ Սանթուրեան, Հրանդ Մանդասարեան, Աբգար Գասպարեան, Հայրապետ Քարամեանը վերացնելով բժշկական եւ արհեստական ալքոլի պակասն ու դժուարութիւնը, Միսակ Բարխադարեան եւ Քարամեան անունով հայեր շատ բարձրորակ քոմփոտի գործարան հիմնելով պատճառ դարձան որ Խորասանը եւ մինչեւ անգամ ամբողջ երկիրը ձերբազատեն դրից քոմփոտ ներմուծելու հանգամանքից: Հայ երիտասարդներից որ բարձրագոյն կրթութիւն ստանալուց յետոյ տարիներ Մաշհադում կատարել են իրենց ժողովրդանուէր պարտքը, այստ յիշատակւում են հետեւեալ կարգով:


Սարզւարի մէջ հայ ընտանիքի մը երէխսերունդները

1. Տօքկ. Արամ Դաւթեան ատամնաբոյժ առաջին շրջանաւարտներից էր, տարիներ ծառայել է Մաշհադի քաղաքացիներին եւ Արիան դպրոցի որպէս տեսուչ պաշտօնավարել է մինչեւ 1977ը, եւ Իսլամական յեղափոխութիւնից յետոյ տեղափոխուեց Սուիս յետոյ Պոսթոն, առողջութիւն եւ երկար կեանք եմ մաղթում իրեն:

2. Պրն. Տօքթ. Բարխուդարեան ներքին հիւանդութիւնների մասնագէտ տարիներ Մաշհադում բժշկութեամբ էր զբաղւում եւ իր տիկնոջ ատամնաբոյժ Վերժիկ Սաղաթելեանի հետ բարի անուն վաստակեցին եւ հիմա արեւելեան Ամերիկայի Նիւ Ջըրզի քաղաքում ունեն իրենց անձնական հիւանդանոցը եւ աշխարհի այս ծայրում եւս կատարում են ժողովրդանուէր գործ, յաջողութիւն իրենց:

3. Գեներալ Տօքթ. Բէգխանեանը տարիներ Մաշհադում եւ Թեհրանում երկրի բանակում բժշկութեամբ է զբաղուել:


Ալեքսանդր Սարգսեանի ընտանիքը 1944ին

4. Տօքթ. Բադալեանը աւարտելով բժկութիւնը Փարիզում տարիներ աշխատեց այդ մասնագիտութեամբ եւ այժմ բնակւում է Փարիզում:

5. Շահէն Խանջարեանը որ տարիներ Թեհրանում դեղագործութեամբ էր զբաղուած, հիմա ապրում է Ֆրանսայում:

6. Բժշկուհի Յասմիկ Գասպարեանը Մաշհադի Բժշկական ֆակուլտետը աւարտելով եւ մասնագիտանալով, այժմ Նիւ Ջըրզի քաղաքում կառավարում է իր անձնական հիւանդանոցը:

Հայ երիտասարդներից որոնք Մաշհադից Թեհրան են գնացել եւ այնտեղ ունեցել են աչքառու գործունէութիւն, հետեւեալներն են.

1. Հանքային ճարտարապետական ճիւղում՝ Արտաւշ Յարութիւնեանը տարիներ Ատրպատականի հանքերի կառավարչին էր, որից յետոյ Թեհրանի ձուլարանի ղեկավարութիւնն էր ստանձնել, հանգստի կոչուելուց յետոյ գաղթեց Ամերիկա եւ բնակուած է Գալիֆորնիա նահանգում:

2. Տօքթ. Սուրէն Յարութիւնեան տարրալուծարանի մասնագիտութեամբ տարիներ Հաբիբի տարրալուծարանի տէր եւ տնօրէնն էր, Ամերիկա գաղթելով մասնագիտացաւ տարբեր գիտական ճիւղերում, այսօր ունի Լոս Անճելոսի ամենամեծ տարրալուծարաններից մէկը:

3. Եղբայրներ՝ Յակոբ եւ Լեւոն Բաբայեաններ Թեհրանում վաճառականութեան ասպարէզում մեծ յաջողութիւններ ունեցան որոնք յեղափոխութիւնից յետոյ, առաջացած դժուարութիւնների պատճառով ստիպուած գաղթեցին եւ ապրում են Ամերիկայում:

4. Ջորիկ Սուլխանեան 1925ին (1304) Մաշադում է ծնուել եւ տարրական ու միջնակարգի դասընթացքը Մաշհադում վերջացնելով Թեհրանի գիտութիւնների ֆակուլթեթը ընդունուեց: Եւ 1951ին հեռացաւ ֆակուլտետից եւ Օդուժի արհեստների ֆակուլտետը մտնելով կապիտան աստիճանով աւարտեց: 1954 թուին (1333) Մեհրաբադի օդակայարանում պաշտօն ստացաւ, յետոյ դարձաւ Դովշան Թափէի օդուժի կրթական բաժնի վարիչ:

Շար.ը էջ 19

# ՍՐԲՈՑ ՀՌԻՓՍԻՄԵԱՆՑ ՏՕՆՆ ՈՒ ՂԱԶՈՒԻՆԻ Ս. ՀՌԻՓՍԻՄԷ ԵԿԵՂԵՑՈՒ ԱՆՈՒԱՆԱԿՈՉՈՒԹԻՒՆԸ

*Յիսուս Քրիստոսի հրաշափառ Յարութեան տօնին յաջորդող Յարութեան 40 օրերի, Համբարձման ու Հոգեգալստեան տօներից յետոյ սրբոց տօների շարքում առաջին տեղն է գրաւում Սրբոց Հռիփսիմեանց կոյսերի տօնը, որը մեր եկեղեցում իւրայատուկ տեղ ու նշանակութիւն ունի, քանի որ Հռիփսիմեանց ու Գայիանեանց կոյսերի նահատակութեան դրուագը սերտօրէն առնչւում է Հայաստանում քրիստոնէութեան պետական կրօն հռչակման հետ:*

*Արդարեւ, ամէն տարի մեր ժողովրդի զաւակները ամենուրեք յատուկ հանդիսաւորութեամբ ու յարաճուն հաւատքով են նշում Հռիփսիմեանց կոյսերի տօնը:*

*Թեհրանի թեմում Սրբոց Հռիփսիմեանց տօնը համընկնում է Ղազուինի Ս. Հռիփսիմէ եկեղեցու անուանակոչութեան տօնին եւ այդ առիթով մատուցւում է հանդիսաւոր Ս. Պատարագ ու տեղի է ունենում ուխտագնացութիւն:*

*Սրբոց Հռիփսիմեանց տօնի առթիւ Թեհրանի հայոց թեմի առաջնորդ Տ. Սեպուհ Արք. Սարգսեանը, ընկերակցութեամբ Թ.Հ.Թ. Կրօնական Խորհրդի անդամներ՝ Տ. Վարագդատ Աւ. Քհնյ. Տէրտէրեանի եւ Տ. Մեսրոպ Քհնյ. Ռաթէոսեանի, Յունիսի 12-ի առաւօտեան մեկնեց Ղազուին: Ղազուին մուտքին Սրբազան Հօրն ու իր ուղեկիցներին դիմաւորեցին Թ. Հ. Թ. Պատգամաւորական ժողովում Ղազուինի պատգամաւորը եւ տեղի եկեղեցա-դպրոցական հոգաբարձութեան ներկայացուցիչները, որոնք հիւրերին առաջնորդեցին եկեղեցի:*

*Տօնի առիթով Ս. Պատարագ մատուցեց Տ. Մեսրոպ Քհնյ. Ռաթէոսեանը, պատարագի երգեցողութիւնը կատարեց Ս. Սարգիս եկեղեցու երգեցիկ խումբը՝ ղեկավարութեամբ Օֆիկ Մելիքեանի:*

*Ս. Պատարագի ընթացքում քարոզեց Սրբազան Հայրը, որ նախ ողջունեց ուխտաւորներին ու ղազուինահայերին, ապա բացատրեց օրուայ խորհուրդը՝ չեշտելով հաւատքի դերը՝ կոյսերի կեանքում: «Կոյսերը Քրիստոսի սիրով վառուած ու հաւատքով զօրացած՝ իրենց կեանքն ընծայաբերեցին Աստծուն՝ որպէս պատարագ, այդ պատճառով էլ իրենց արիւնը եղաւ սերմը եկեղեցու», - ասաց Սրբազան Հայրն ու բացատրեց ուխտի ու ուխտագնացութեան խորհուրդը՝ չեշտելով, որ ուխտը կապւում է տուեալ եկեղեցու անուանակոչութեան հետ, հետեւաբար՝ եկեղեցիների անուանակոչութեան տօներին են առնչւում ուխտագնացութիւնները: Իր քարոզի մի այլ բաժնում Սրբազան Հայրն անդրադարձաւ ղազուինահայ համայնքի կեանքում անցեալում կատարուած աշխատանքներին՝ Ս. Հռիփսիմէ եկեղեցու կառուցմանը, բարերար Տէր եւ Տիկ. Յովհաննէս Բարսեղեանների եւ հոգեւոր հովիւ լուսահոգի՝ Տ. Յարութիւն Աւ. Քհնյ. Տէր Մեսրոպեանի համատեղ աշխատանքներին, ապա կոչ ուղղեց բոլորին, որ միշտ հետամուտ լինեն բարեգործութեան ու ամուր պահեն իրենց քրիստոնէական հաւատը, ազգային աւանդութիւններն ու բարեպաշտական սովորութիւնները: Սրբազան Հայրն իր քարոզն աւարտեց՝ նշելով, որ այս տարի եկեղեցու կառուցման 70-ամեակն է եւ լուսահոգի Տ. Յարութիւն Աւ. Քահանայի վախճանման 25-ամեակը:*



Ղազուինի Ս. Հռիփսիմէ եկեղեցի

*Պատարագի աւարտին տեղի ունեցաւ հոգեհանգստեան յատուկ արարողութիւն՝ Տ. Յարութիւն Աւ. Քհնյ. Տէր Մեսրոպեանի եւ եկեղեցու բարերար Բարսեղեան ընտանիքի բոլոր ննջեցեալների հոգիների խաղաղութեան համար:*

*Ապա Սրբազան Հայրը, քահանաները եւ Թ. Հ. Թեմական Խորհրդի ներկայացուցիչ՝ Ժիրայր Նազարեանը, որ կէսօրին միացաւ Սրբազան Հօրը, այցելեցին բակում գտնուող ուխտաւորներին, որոնք եկել էին՝ Թեհրանից, Սպահանից, Արաքից, Անզալիից, Ուրմիայից, Ահւազից եւ մեծապէս գնահատեցին նրանց քրիստոնէավայել ու հայավայել կեցուածքը:*

*Կէսօրին Ղազուինի եկեղեցադպրոցական հոգաբարձութիւնը հիւրընկալեց Սրբազան Հօրն ու նրա ուղեկիցներին: Ճաշի ընթացքում Սրբազան Հայրը գնահատանքի խօսք ուղղեց եկեղեցա-դպրոցական հոգաբարձութեանը՝ եկեղեցին, դպրոցը եւ ամբողջ շրջափակը լաւապէս պահպանելու կապակցութեամբ:*

*Ապա Սրբազան Հայրը, նախքան հրաժեշտ առնելը, դարձեալ հանդիպեց ուխտաւորների հետ ու նրանց քաջալերելուց յետոյ՝ կարեւորութեամբ անդրադարձաւ համայնքում ծայր առած արտագաղթի երեւոյթին ու ասաց. «Ամէն մարդ ազատ է՝ որտեղ ուզում է ապրել, բայց ոչ ոք իրաւունք չունի մեր համայնքում իրարարանցում առաջացնել եւ հարցերը չափազանցուած ձեւով ներկայացնել: Մենք այն հողում խոր արմատներ ունեցող համայնք ենք եւ որպէս այդպիսին էլ կը մնանք»:*

*Սրբազան Հայրը իր խօսքի աւարտին գնահատելով ուխտաւորներին՝ բարի վերադարձ մաղթեց նրանց եւ մեկնելուց առաջ հանդիպելով այնտեղ բնակուող ուսանողներից ոմանց՝ զրուցեց նրանց հետ եւ բոլորին յաջողութիւն մաղթեց:*

*Յայտնենք, որ այս տարի Ղազուին ուխտագնացութեանը մասնակցել էին՝ Թ.Հ.Կ. Եկեղեցասէր Միութիւնը, Ս. Թարգմանչաց եկեղեցու Եկեղեցասէր Կանանց Միութիւնը, «Հայ Կին» Միութեան անդամուհիներից մի քանիսը, նոյն միութեան կից «Անահիտ» միութիւնը, «Աշխարհատես» միութիւնը, Արաքի համայնքի ներկայացուցիչներ, Հայկ. Բարեգործական Ընդհանուր Միութեան անդամներ եւ Թեհրանից, Սպահանից, Ահուազից, Անզալիից ու Ուրմիայից բաւական թուով ուխտաւորներ:*

# ԻՐԱՆԱՀԱՅ ԿԵԱՆՔ

*Թեհրանում իր մահկանացուն է կնքել Իրանահայ բազմավաստակ երաժշտագէտ, խմբավար եւ երգահան Նիկոլ Գալանդէրեանի դուստրը՝ Սեդա Գալանդէրեանը (Սեդալ): Հանգուցեալը տարիներ երգել էր Թեհրանի «Գողթան» երգչախմբում, որի խմբավարն էր հայրը՝ Նիկոլ Գալանդէրեանը: Սեդա Կարապետեան-Գալանդէրեանը իր երաժշտական տաղանդը ժառանգել էր հօրից, եւ ամբողջ կեանքը նուիրեց գեղարուեստին եւ մշակոյթին: Սեդալը հիմնադիրներից էր Թեհրանի «Հայ Կին» միութեան: Տարիներ անդամ էր Իրանահայ Գրողների Միութեան:*

***

*Կեանքից անժամանակ հեռացաւ իրանահայ երգիչ Ժոզէֆ Սէֆեանը: Հանգուցեալը լաւապէս ճանաչուած էր իրանահայ համայնքի մէջ եւ վայելում էր արուեստագէտների համակրանքը: Նա երկար տարիներ հայ ժողովրդական եւ ազգային երգերը հնչեցրեց բեմահարթակներից եւ մեծապէս գնահատուեց հասարակութեան կողմից:*

*Վերջին տարիներին հաստատուել էր իր հարազատների մօտ, Կլէնտէյլ: Ունէր մի քանի ձայներիզներ:*

***

*Իրանահայ անուանի երաժշտագէտ Լորիս Ճգնաւորեանը, Իրանի Խորհրդարանի Նախագահութեան կողմից արժանացել է Ոսկէ շքանշանի եւ յուշանուէրների:*

*«Ես հպարտ եմ որ մէկ տասնեակ արուեստագէտների մէջ, առաջինն եմ որ արժանանաւում եմ այս բացառիկ մեծարանքին», ասել է հայազգի դիրիժորը: Նշելի է որ Նրա մշակած եւ բեմադրած «Ռօստամ-Սոհրաբ», «Ռօստամ-Իսֆանդիար» եւ «սիաւուշ» օփերաները բազում անգամներ բեմադրուել են Թեհրանի «՚Վահդաթ» սրահում եւ հազարաւոր հանդիսականներ հիացմունքով դիտել եւ գնահատել են վաստակաշատ արուեստագէտին: Իրանի մամուլը բազմաթիւ յօդուածներ է տպագրել այդ կապակցութեամբ:*

***

### «ՌԱՖՖԻ»Ի ԲՆԱԿԱՐԱՆՆ ԱՅՍՕՐ

*Մեծ գրագէտի Սալմաստի Փայաջուկ գիւղի «Ռաֆֆի»ի բնակարանը մինչ այսօր մնում է որպէս փարոս՝ հայ իրականութեան մէջ:*

*Անցեալի հայահոծ շրջանը, այսօր իր լուռ գերեզմանատնով մնում է տակաւին Սալմաստ գաւառում ու միայն ագռաւներն են որ անընդհատ հսկում այդ մթնոլորտը: Վիթխարի շրջապատը որ կոչուել է պաշտպանելու եկեղեցին, հայ մանկական շրթներին Մեսրոպաշունչ Սբ. տառերը սերմանող Հայ Դպրոցը եւ վարդաստան բնակարանը Ռաֆֆիի, այսօր փոշոտ ու փշոտ աւերակների մէջ է մնացել:*

*Անողոք երկրաշարժը չի խնայել ոչ մի բանի, սակայն մինչեւ այսօր փլատակ քարերի կոյտերը հանդիսանում են խօսուն վկան Ռաֆֆիի օրակական 16 ժամուայ անխոնջ աշխատանքներին, որ հայեցի դաստիարակութեան ամուր հիմքերը հանդիսացել են ի սփիւռս աշխարհի:*

***

*Թաւրիզի Հայոց Ազգային Առաջնորդարանի մօտակայքում շուրջ 200ի հասնող «ցուցարարներ», ընդամէնը 10-15 րոպէների տեւողութեամբ, ի մի եկան նշելու իբր 1992 թուի Արցախեան պատերազմում հայերի ձեռքով ատրպէճանական Խոջալու գիւղի բնակչութեան կոտորածի յիշատակը:*

*Ջհասցնելով, սակայն իրագործել այդ «անմեղ» մտադրութիւնը (որովհետեւ ցոյցի արտօնութիւն չէին ստացել), ցուցարարները բաւարարուեցին իրենց բուն մտադրութիւնը իրագործելով՝ հայհոյախառն-դաւադիր լոզունգներով, որոնց ընդմիջից պանթուրքիզմի գարշահոտութիւն էր բուրում:*

*«Գորշ Գայլեր»ի նշանաբանով՝ «Կեցցէ միացեալ Ատրպէյճան» եւ «Մահ Հայաստանին» վանկարկողների այս հերթական հիստերիան այլ կերպ բնութագրել հնարաւոր չէր: Եւ հէնց այդ պատճառով էլ դաւադիր նման արարքները, նոյնիսկ բուն Ատրպատականի կեդրոն Թաւրիզում, երբեւիցէ չեն ստացել հասարակական-զանգուածային բնոյթ:*

*Այս 15 րոպէանոց «ցոյցը» շատ արագ կասեցուել ու ցրուել է իրաւապահ մարմինների եւ անվտանգութեան ուժերի կողմից, որոնց զգօն վերահսկողութեան շնորհիւ՝ ոչ մի հասարակական իրարանցում չի առաջացել: 24 ցուցարարներ ձերբակալուել են եւ նրանց դատական գործը յանձնուել իրաւապահ մարմիններին:*

***

*Սկսուել է իրանահայ պատանի Միրօ Բեգինջանեանի սպանութեան գործով դատական նիստը:*

*Ինչպէս յայտնել է դատական գործով փաստաբան Յովիկ Բեհրուն, դատական առաջին պաշտօնական նիստին ներկայ են լինելու թէ ամբաստանեալները եւ թէ Միրոյի ընտանիքը: Նիստին քննարկուելու են դատաբժշկական նփորձաքննութեան, ինչպէս նաեւ ոստիկանութեան հաւաքած տուեալները, ըստ որոնց ճշդուելու է իրաքանչիւր ամբաստանեալի մեղսակցութեան աստիճանը եւ արձակուելու է դատարանի վճիռը:*

*Փաստաբանը նշել է, որ դատաբժշկական կեդրոնի զեկոյցի համաձայն, Միրօն մէկ հոգու հասցրած հարուածից չի մահացել: Ամբաստանեալներից երկուսը խոստովանել են, որ հարուածել են Միրոյին:*

*Յիշեցնենք որ Միրօ Բագինջանեանը սպանուել է 2005 թուին Սեպտեմբեր 9ին, Թեհրանի «Արարատ» մարզաւանի մօտակայքում՝ երեք պարսիկների հետ վիճաբանութեան ժամանակ:*

***

*Թեհրանի «Սուքերեան» սրահում կայացաւ Հայաստանի Հանրապետութիւնում արձանագրուած «Հայ դպրոց» հիմնադրամի Իրանի մասնաճիւղի նախաձեռնած հերթական աշխատանքային զեկոյց-երեկոն, որի ընթացքում արտացոլուեցին մինչ այժմ կատարուած աշխատանքների արդիւնաւէտ ելքերը, նուիրատուների հանգանակած միջոցներով պատրաստուած գոյքի նախնական վիճակագրական հետազօտութիւնների հիման վրայ բաշխուած դպրոցական գոյքի նպատակասլաց օգտագործման իրական պատկերը:*

*Երեկոն կազմակերպուել էր «Նայիրի» եւ ԽԱՄՄ միութիւնների նախաձեռնութեամբ, որին ներկայ էին Իրանում Հայաստանի Հանրապետութեան արտակարգ եւ լիազօր դեսպան Կարէն Նազարեանը, հիմնադրամի նախաձեռնող Լեւոն Ահարոնեանը, մայեստրօ Լորիս Ճգնաւորեանը եւ խնդրով շահագրգիռ հասարակութիւն:*

# ԼԵՒՈՆ ՏԷՐ-ՊԵՏՐՈՍԵԱՆԻ ԵԼՈՅԹԸ ԱՆՎՏԱՆԳՈՒԹԵԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏՈՒՄ

*Շարունակուածէջ 7-էն*

* * *

*Իսկ այժմ դիտարկենք այստեղ հնչած միւս պնդումները:*

*Այն, որ պէտք է պայքարել ստուերային տնտեսութեան դէմ եւ խստացնել հարկային կարգապահութիւնը, դժուար թէ առարկութիւն վերցնի: Բայց որ դրանով հնարաւոր է զգալիօրէն մեծացնել բիւջէն, խիստ կասկածելի է թւում: Այդպիսի միջոցներով լաւագոյն դէպքում կարելի է հասնել ժամանակաւոր արդիւնքների, քանի որ ինքնըստինքեան հասկանալի է, որ բիւջէի աճը կախուած է ոչ այնքան վարչարարական մեթոտներից, որքան տնտեսութեան զարգացման ընդհանուր դրական միտումներից: Իսկ այդպիսի միտումներ, ինչպէս քիչ առաջ նշուեց, շրջափակումների շարունակման, ներդրումների բացակայութեան, քաղաքական ու տնտեսական մեկուսացման պայմաններում գոյութիւն չեն կարող ունենալ: Բացի այդ, ես նաեւ չափազանց վտանգաւոր եմ համարում այս բնագաւառում վարչարարական մեթոտներով հրապուրուելը: Այդ իմաստով ինձ արդէն իսկ մտավախութիւն են ներշնչում կառավարութեան կողմից վերջերս ձեռնարկուած որոշ քայլեր: Նկատի ունենալով բնագաւառն սպասարկող իրաւասու մարմինների (Հարկային վարչութեան, Մաքսային տեսչութեան, ՆԳՆ, Դատախազութեան) որոշակի հակումները՝ ես չեմ կասկածում, որ վարչարարական մեթոտների կիրառումը կը հանգեցնի լուրջ չարաշահումների, որի արդիւնքում մենք կ'ունենանք աշխատատեղերի կրճատում, կապիտալի արտահանում, ապրանքաշրջանառութեան ու դրամաշրջանառութեան անկում, եւ վերջին հաշուով՝ հարկային մուտքերի նուազում, այսինքն՝ մենք կ'ստանանք մեր ուզածի ճիշդ հակառակը: Այս ամէնի հետեւանքը կը լինի ժողովրդի առանց այդ էլ թշուառագոյն սոցիալական վիճակի հետագայ վատթարացումը եւ արտագաղթի նոր ալիքի ծաւալումը:*

*Հասկանալի չէ նաեւ, թէ ինչի վրայ է հիմնուած Սփիւռքից ակնկալուող օգնութեան հսկայական չափը (տարեկան շուրջ 400-500 միլիոն դոլար): Ասւում է, որ մինչեւ հիմա Սփիւռքի հետ լաւ չենք աշխատել, նրա հետ յարաբերութիւնները ճիշդ չենք կառուցել, այդ պատճառով էլ առայժմ նրանից չնչին օգնութիւն ենք ստացել: Եթէ անգամ այս դիտողութիւններն արդարացի համարենք, չեմ կարծում, որ Սփիւռքին քիչ թէ շատ ծանօթ որեւէ մէկը կարող է պնդել, թէ նա Հայաստանին տարեկան 400-500 միլիոն տոլարի օգնութիւն տրամադրելու կարողութիւն ունի: «Հայաստան» համահայկական հիմնադրամը առայժմ կարողացել է Սփիւռքից ապահովել տարեկան շուրջ 10 միլիոն տոլարի օգնութիւն: Թերեւս աւելի լաւ աշխատելու, յարաբերութիւնները աւելի ճիշդ կազմակերպելու դէպքում, ամենալաւատեսական գնահատականներով, հնարաւոր կը լինի այդ թիւը հասցնել առաւելագոյնը տարեկան 20 միլիոնի: Ինչո՞ւ այդքան քիչ՝ կը հարցնէք դուք: Որովհետեւ բացի Հայաստանից, Սփիւռքն ունի նաեւ բազմաթիւ այլ հոգսեր. Նա պարտաւոր է ապահովել ազգային զանազան կառոյցների՝ եկեղեցու, դպրոցների, ակումբների, կուսակցութիւնների, մամուլի, հիւանդանոցների, ծերանոցների ծախսերը, ինչպէս նաեւ ֆինանսապէս սպասարկել տարէցտարի ծաւալուող լոբբիստական աշխատանքները: Սփիւռքից հարիւրաւոր միլիոնների օգնութեան ակնկալիքն, ըստ այդմ, ոչ միայն առասպելական է, այլեւ վտանգաւոր՝ եթէ դա դիտւում է որպէս Հայաստանի տնտեսական զարգացման կարեւոր երաշխիքներից մէկը:*

*Ինձ համար բաց է մնում նաեւ այն հարցը, թէ ղարաբաղեան կարգաւորման եւ Հայաստանի տնտեսական զարգացման գործում որքան յոյսեր կարելի է կապել Ռուսաստանի եւ Իրանի հետ: Ռուսաստանն, այո, մինչեւ այսօր կենսական օգնութիւն է ցուցաբերել Հայաստանին՝ մասնաւորապէս էներգետիկ համակարգի կենսագործունէութեան ապահովման, բանակի կազմաւորման, զէնքի ու զինամթերքի մատակարարման բնագաւառներում: Անկախութիւնից ի վեր հայ-ռուսական յարաբերութիւնները զարգացել են չափազանց բարենպաստ մթնոլորտում եւ այսօր գտնւում են ամենաբարձր մակարդակի վրայ: Հայաստանը կարողացել է առաւելագոյնս օգտուել այդ յարաբերութիւններից, որը թերեւս անկախութեան շրջանի մեր կարեւորագոյն նուաճումներից է: Բայց, դժբախտաբար, այս վիճակը յաւերժ չի կարող շարունակուել: Նախ, ստիպուած եմ կրկնել, որ Ռուսաստանը երբեք չի ճանաչելու Ղարաբաղի անկախութիւնը, թէկուզ միայն այն պատճառով, որ իր կազմում ունի մօտ քսան Ղարաբաղ:*

*Այնուհետեւ, Ռուսաստանն այսօր այնպիսի կենսական շահերով է կապուած Արեւմուտքի, մասնաւորապէս միջազգային տնտեսական կազմակերպութիւնների հետ, որ չի կարող կտրուկ հակադրուել Ղարաբաղի հարցի կարգաւորման ԵԱՀԿ-ի կամ ՄԱԿ-ի ծրագրերին: Արդէն իսկ տեսանելի է, որ վերջերս, Մինսկի խմբի համանախագահութեան շրջանակում, Ռուսաստանը լիակատար համերաշխութիւն է ցուցաբերում ԱՄՆ-ի եւ Ֆրանսիայի առաջարկած կարգաւորման պլաններին: Արեւմուտքի հետ աւելորդ պրոբլեմներ չունենալու նոյն պատճառով Ռուսաստանը մի օր նաեւ ստիպուած է լինելու դադարեցնել զէնքի մատակարարումները Հայաստանին: Աւելին, ես չեմ բացառում, այլեւ ընդհակառակը՝ չափազանց բնական ու հաւանական եմ համարում, որ նկատի ունենալով կասպիական նաւթի շահագործման եւ նաւթամուղերի կառուցման խնդիրները՝ Ռուսաստանն առաջիկայում լուրջ ջանքեր է գործադրելու Ատրպէյճանի հետ նորմալ յարաբերութիւններ հաստատելու ուղղութեամբ, եւ այդ դէպքում Հայաստանը կորցնելու է Անդրկովկասում Ռուսաստանի միակ դաշնակիցը կամ ստրատեգիական գործընկերը լինելու առաւելութիւնը:*

*Ինչ վերաբերում է այն բանին, թէ՝ եթէ Ռուսաստանը դադարեցնի զէնքի մատակարարումները, մենք զէնք կ'ստանանք Իրանից, ապա կարծում եմ, դա էլ զուրկ է առարկայական հիմքից: Ճիշդ է՝ իրանաատրպէյճանական հակասութիւնների ֆոնի վրայ Հայաստանի հզօրացումն ու տնտեսական բարգաւաճումը բխում են Իրանի պետական շահերից: Ճիշդ է նաեւ, որ Հայաստանի ամենախիստ շրջափակման տարիներին Մեղրու ճանապարհը եղել է մեր գոյատեւման ամենակարեւոր պայմաններից մէկը: Բայց դրա հետ մեկտեղ չպէտք է մոռանալ երկու հանգամանք: Առաջին՝ Մեղրու ճանապարհի սահմանափակ հնարաւորութիւնները եւ լրացուցիչ ծախսատարութիւնը չեն կարող լուրջ տնտեսական համագործակցութիւն ապահովել մեր երկրների միջեւ: Երկրորդ՝ Իրանում պետական շահերից բացի գոյութիւն ունի նաեւ իսլամական համերաշխութեան գիտակցութիւն: Այդ պատճառով իրանական ոչ մի կառավարութիւն չի համարձակուի զէնք մատակարարել մի քրիստոնեայ պետութեան՝ իսլամական որեւէ պետութեան դէմ օգտագործելու համար, եթէ, իհարկէ, այդ կառավարութիւնն իր գլխից ձեռք չի քաշել: Եւ վերջինը՝ եթէ Իրանը կարող էր մեզ զէնք մատակարարել, ապա ինչո՞ւ մինչեւ հիմա դա չի արել:*

*Չգիտեմ, որքա՞ն տեղին է նաեւ Իսրայէլի եւ Հայաստանի իրավիճակների համեմատութիւնը: Իսրայէլն, այո, բոլոր հարեւանների հետ ռազմական առճակատման մէջ գտնուելով հանդերձ՝ կարողացել է ապահովել իր տնտեսական զարգացումն ու ռազմական հզօրութիւնը, բայց նա երբեք չի ենթարկուել այնպիսի շրջափակման, որի մէջ գտնւում է Հայաստանը: Իսրայէլն ունի հարիւրաւոր կիլոմետրանոց ծովային սահման եւ մի քանի հզօր ռազմա-առեւտրային նաւահանգիստներ: Ինչպէ՞ս կարելի է խօսել Իսրայէլի մեկուսացման մասին, երբ նա նաեւ տարեկան շուրջ 4 միլիարդ տոլարի օգնութիւն է ստանում հրէական Սփիւռքից, մօտաւորապէս նոյնքան էլ ԱՄՆ-ի կառավարութիւնից: Չեմ ուզում աւելի ծաւալուել, բայց չմոռանանք նաեւ հրեաների հզօր ներկայութիւնը աշխարհի գերտէրութիւնների քաղաքական կառոյցներում, համաշխարհային ֆինանսական համակարգերում, զանգուածային լրատուութեան միջոցներում եւ այլն:*

*Ամենաապշեցուցիչը, սակայն, այն պնդումն է, թէ Ղարաբաղի հարցում մենք պէտք է փոխզիջման գնանք այն ժամանակ, երբ հարկադրուած կը լինենք: Մի՞թէ հասկանալի չէ, թէ ինչ է նշանակում հարկադրուած զիջում. հարկադրուած զիջումը նշանակում է կապիտուլեացիա: Իսկ կապիտուլեացիայի ժամանակ դու ոչինչ չես զիջում կամ եթէ զիջում էլ ես՝ դրա դիմաց ոչինչ չես ստանում, այլ հլու հնազանդ ընդունում ես այն, ինչ փաթաթում են քո վզին: Քի՞չ է մեր անցեալի դառը փորձը: Քի՞չ են Բաթումի ու Ալեքսանդրապոլի խայտառակ պայմանագրերը, երբ աւելի վաղ հնարաւորութիւն կար շատ աւելի ձեռնտու լուծումներ գտնելու, բայց ժամանակի պատասխանատուները կորցրին այդ հնարաւորութիւնները: Ստիպուած եմ կրկնել իմ վերջին յօդուածի տրիվիալ միտքը. փոխզիջման պէտք է գնալ այն պահին, երբ ուժեղ ես: Հայաստանը վաղն աւելի ուժեղ չի լինելու, քան այսօր: Հետեւաբար, վաղուայ ցանկացած լուծում աւելի վատն է լինելու, քան այսօրուանը:*

* * *

*Այսպիսով, Լեռնային Ղարաբաղի հարցի հրատապ լուծման անհրաժեշտութեան դէմ բերուած ոչ մի փաստարկ, իմ կարծիքով, քննադատութեան չի դիմանում: Աւելին, այդ փաստարկների մէջ ես դիտում եմ հարցի էութիւնից շեղուելու եւ փաթեթային ու փուլային տարբերակների շուրջ ֆորմալ բանավէճ ծաւալելու միտում: Թէեւ խոստացել էի չանդրադառնալ այդ տարբերակներին, բայց, քանի որ այստեղ դրա մասին շատ խօսուեց, ստիպուած եմ անել որոշ պարզաբանումներ:*

*Հարցն այնպէս է ներկայացւում, թէ իբր Հայաստանը պաշտպանում է փուլային, իսկ Ղարաբաղը՝ փաթեթային տարբերակը: Մոռացութեան է տրւում այն փաստը, որ Հայաստանը (ճիշդ է՝ սկզբունքային վերապահումներով) ընդունել է փաթեթային տարբերակը, եւ Ղարաբաղն ինքն է կտրականապէս մերժել այն: Փաթեթայինը մերժուելուց յետոյ մեզ ներկայացուել է փուլային տարբերակը, եւ Հայաստանը (նորից սկզբունքային վերապահումներով) այն ընդունել է: Ղարաբաղը սա նոյնպէս մերժել է եւ այժմ առաջարկում է կրկին վերադառնալ փաթեթային տարբերակին: Հարց է առաջանում՝ ինչո՞ւ է այդ դէպքում Հայաստանը շարունակում պնդել փուլային տարբերակի վրայ: Պատասխանում եմ. առաջին՝ մենք գտնում ենք, որ Ղարաբաղի հարցը պէտք է լուծել այսօր, իսկ այսօր ուրիշ լուծում չկայ, քան փուլայինը, եւ երկրորդ՝ մենք համոզուած ենք, որ երկար ժամանակ, գուցէ թէ երբեւէ, փաթեթային տարբերակի շուրջ համաձայնութիւն չի կայացուելու Ղարաբաղի եւ Ատրպէյճանի միջեւ: Փաթեթային տարբերակին վերադառնալու առաջարկն, ուստի, հետապնդում է ոչ թէ հարցը լուծելու, այլ ժամանակ շահելու նպատակ: Կարծում էք՝ դժուա՞ր բան է ժամանակ շահելը, կարծում էք՝ ես չե՞մ կարող 3-4 տարի, մինչեւ իմ պաշտօնավարման ժամկէտի աւարտը, պահպանել ղարաբաղեան ստատուս-քվոն: Բայց ի՞նչ է լինելու դրանից յետոյ, ի՞նչ անելանելի վիճակի մէջ է յայտնուելու յաջորդ Նախագահը:*

*Աւարտում եմ: Երկու օրերի քննարկումն, այսպիսով, ինձ լուրջ հիմքեր է տալիս կասկածելու, թէ փուլային տարբերակին ընդդիմացողներն ընդհանրապէս Ղարաբաղի հարցը լուծելու մտադրութիւն ունեն: Շատերն առանձնապէս դա չեն էլ թաքցնում, ինչը պարզորոշ կերպով երեւում է ելոյթիս սկզբում ամփոփուած կարծիքներից: Փաթեթային, փուլային կամ այլ տարբերակների շուրջ թուացեալ բանավէճը, վստահ եմ, սոսկ շղարշ է՝ կարգաւորման պրոցէսը ձգձգելու, այսօրուայ իրավիճակը, այսինքն՝ ստատուս-քվոն որքան հնարաւոր է երկար պահպանելու համար: Ես ցաւով նախազգում եմ, թէ դա ինչ ահաւոր վտանգ է ներկայացնում թէ' Ղարաբաղի, թէ' Հայաստանի գոյութեան համար: Այսօր մենք, ինչպէս Բաթումից ու Ալեքսանդրապոլից առաջ, թերեւս Ղարաբաղի հարցի նպաստաւոր լուծման եւ Հայաստանի բարգաւաճման վերջին պատեհութիւնն ենք կորցնում: Եւ դրա համար մենք բոլորս էլ պատասխան ենք տալու մեր ժողովրդին:*

## ԽՆԴԱԿՑՈՒԹԻՒՆ

*Տէր եւ Տիկ. Ռաֆֆի եւ Լիզա Քիւրքճեաններ բախտաւորուած են երկրորդ զաւակով մը, զոր անուանած են Մէթիու:*

*«Մասիս»ի խմբագրութիւնը իր խնդակցութիւնը կը յայտնէ ընտանեկան պարագաներուն, յատկապէս Տէր եւ Տիկ. Ընկ. Թադէոս եւ Նորա Քէօրողլեաններուն:*

# ԽՈՐԱՍԱՆԸ ԵՒ ՄԱՇՀԱԴԻ ՀԱՅԵՐԸ

Շարունակուած էջ 16-էն

1971ին, (1350) որպէս Իրանի օդուժի յանձնախումբի ներկայացուցիչ Ամերիկա գնաց եւ մասնակցեց դասընթացքներին: Գնահատելով իր գործունէութեան մէջ նշանակուեց Հարաւային Մեհրաբադի ընդհանուր կրթական կեդրոնի վարիչ, որից յետոյ արժանցաւ գեներալի աստիճանի: Գեներալ Զորիկ Սոլուխանեան 1991 (1370) թուին իր մահկանացուն կնքեց Ամերիկայում: («Դանեղնամէէ Իրան» էջ 177):

Ներողութիւն եմ հայցում այն սիրելիներից որոնց անունը եւ գործունէութիւնը այստեղ չի յիշատակուել այն պատճառով որ չեմ ունեցել ստոյգ տեղեկութիւններ իրենց եւ իրենց գործունէութեան մասին: Յուսամ այս յիշողութիւնները ընթերցողը ներողամտաբար ընդունի եւ եթէ որեւէ բան վրիպել է իմ մտապատկերից, յայտնեն իրենց կարծիքն ու նկատողութիւնը, որովհետեւ այս Մաշհադի հայ համայնքի համառօտ պատմութիւնն է, որը երկար տարիներ ուսումնասիրել եւ հիմա գրի եմ առել, ութսուն ութ տարիներ յետոյ հայերի կեանքը Մաշհադում 1977 թուի դէպքերի եւ ընդհանուր երկրի փոփոխութիւնների բերումով, դժուար կացութեան մատնուեց, ոմանք բանտարկուեցին, ոմանց ինչն ու սեփականութիւնը գրաւեց ակամայ ոմանք լքեցին իրենց քաղաքն ու Թեհրան կամ ուրիշ քաղաքներ տեղափոխուեցին եւ ոմանք էլ հեռացան իրենց ծննդավայր երկիր՝ Իրանից:

Այսօր որ շարադրում եմ այս տողերը արդէն 25 տարի է ինչ էլ չի ղօղանջում Սուրբ Մեսրոպ եկեղեցու զանգերը, եւ նրա խորանի առջեւ ոչ ոք չի աղօթում, Արիան դպրոցում ոչ մի աշակերտ դաս չի սերտում, մինչդեռ դպրոցի հիմնադրման արտօնագրի պատճէնը, ահա իմ ձեռքերում ու իմ աչքերի առջեւ է:

Հայ համայնքի աշխոյժ գործունէութիւնից գուցէ միայն յուշ եւ յիշողութիւն է մնացել Մաշհադի սիրելի համաքաղաքացիների մտքում եւ ութսունութ (88) տարիներ գործ եւ աշխատանք Մաշհադում եւ Խորասանի ուրիշ քաղաքներում այսօր այդ քաղաքները հայաթափուած են բայց մենք... մենք Խորասանի հայութիւնս աշխարհի որ ծայրում էլ լինենք, ունենք մեր լաւ յուշերն ու երախտագիտութեամբ ենք յիշում բարի եւ լաւ մարդկանց:

Վերջում ուզում եմ նշել երկու տարբեր հանգամանք:

Նախ՝ Խորասանի հայութիւնը (1957ից մինչեւ 1977 Խորասանի տաս քաղաքներից ապրում միայն Մաշհատ, Ղուչան եւ Նիշափուր քաղաքներում: Մաշհադի համայնքը ունէր 350-ից 400 անդամ համայնքի անդամների սակաւաթիւ եւ բազմաթիւ լինելը կապուած էր Իրանի հայկական ընկերութիւնների գործունէութեան: Իրենց գործողները տեղափոխում էին Մաշհատ եւ մինչեւ գործի աւարտելը մնում էին Մաշհադում, աւելանում էր Մաշհադի հայութեան թիւը եւ գործը վերջանալուց յետոյ թողնում էին քաղաքը, հետեւաբար պակսում էր այն:

Ղուչունում հայերի ընդհանուր թիւը 12ից 20 հոգի է եղել եւ մեծամասնութեամբ Ղուչունի «Շադ» ընկերութեան կամ շաքարի գործարանի գործողներն էին:

Նիշափուրում 31-40 հոգի հայ էր ապրում որոնց մի մասը կազմում էին բամբակի գործարանի շատ վաղ ժամանակներից բաւական առաջացած տարիքում մարդիկ կամ նրանց մօտիկները որոնք վստահաբար 1977ից ի վեր կարելի է շատ քիչ թւով լինեն այդ երեք քաղաքներում:

Երկրորդը՝ երկմտութիւն ունեմ Մաշհադի յայտնի եւ գործունեայ հայերին ներկայցնելու հանգամանքում ցուցաբերած լինեմ որեւէ զանցառութիւն, որը պատճառ դառնայ ոմանց իրաւացի անհազստութեան, ուստի բաւ է սրանով վերջացնելմ՝ Մաշհադի հայերը միշտ բերել են իրենց ազնիւ ծառայութիւնը ժողովուրդին, եղել են գործունեայ եւ ձեռներէց մարդիկ եւ շնորհակալ Խորասանի հիւրընկալ եւ հիւրասէր տեղացիներից, եւ նրանց երկրորդ եւ երրորդ սերունդները փոխադարձել են անցեալի նրանց սէրն ու յարգանքը ի սրտէ ցանկանալով Իրանին օրաւուր բարգաւաճում եւ Իրանի ժողովրդին ամենայն բարիք:

(Վերջ)

# ՍԱՐԳԻ ՄՈՒՐԱՏԵԱՆ ՖԻԼՄԵՐՈՒ ՖԵՍԴԻՎԱԼ

Շարունակուած էջ 13-էն

ւոյթը փաստեց որ Ս. Մուրատեանի բոլոր ֆիլմերն ալ տակաւին կը պահեն իրենց այժմէականութիւնը, եւ անոնց երգերէն շատեր, յօրինուած նոյնպէս Ս. Մուրատեանի կողմէ, բոլորին շրթներուն վրայ կ՚երգուին մինչեւ այսօր: Ֆեսթիվալին գտած մեծ յաջողութիւնը կը թելադրէ որ ապագային, դարձեալ կարելի է կազմակերպել ֆեսթիվալներ, աւելի մեծ սրահներու մէջ, որոնք օժտուած ըլլան անհրաժեշտ սարքաւորումներով:

***

Ֆեսթիվալը կը վայելէր «Հայասա» Մշակութային Կեդրոնի հովանաւորութիւնը եւ քաղաքի տարբեր կազմակերպութեանց նիւթական մասնակցութիւնը: Այսպէս՝ Կլէնտէյլի «KIA» հաստատութիւնը, Raffi's Place ճաշարանը, Կլէնտէյլի «Medical» Pharmacy, Right Home, Կլէնտէյլի «West Pharmacy and Medical Supply» դեղարանը, «Վիգէն Պերճիքեան» Փաստաբանական հիմնարկը, «Color Depot» տպարանը եւ «Universal Service Exhange» հիմնարկը ազնուօրէն ապահոված էին ֆեսթիվալի նիւթական ծախսերը: Անոնց հասցէին հանդիսավար եւ «Հայասա» կեդրոնի նախագահ Տօքթ. Յարութիւն Սաղրեան, շնորհակալութեան եւ գնահատանքի խօսքեր արտասանեց: Իսկ բեմադրիչ Սարգի Մուրատեան նաեւ իր կողմէ շնորհակալութեան անկեղծ խօսքեր արտասանեց քաղաքի հայ մամուլի եւ հեռատեսիլի կայաններուն, ինչպէս նաեւ առանձին բազմաթիւ հաստատութեանց, որոնք սիրայօժար մասնակցած էին ծանուցումներուն: Այս վերջիններուն մէջ յատուկ շնորհակալութիւն կը յայտնուէր «Նոր Հայաստան» օրաթերթին, որ իր էջերը լայնօրէն տրամադրած է ֆեսթիվալին յայտարարութեանց: Ի դէպ, բեմադրիչ Սարգի Մուրատեան, ամէն օր ներկայ կը գտնուէր ֆիլմերու ցուցադրութեան, եւ սիրայօժար կը պատասխանէր եղած հարցումներուն:

Այսպէս ուրեմն, ֆեսթիվալը սկսաւ «Արիւնապարտը» ֆիլմով, ազգային-յեղափոխական կեանքէ առնուած նիւթով, երկրորդ օրը, անմահ Պարոնեանի «Պաղտասար Աղբար»ի ցուցադրութիւն, երրորդ օրը՝ «Երջանկութեան արցունքները», չորրորդ օրը՝ «Սասունի Զաւակները», հինգերորդ օրը՝ «Սիրոյ Խոստումը», վեցերորդ օրը՝ «Մուսա Լերան 40 օրերը» եւ վերջին գիշերը, «Ալխիա» իրական կեանքէ առնուած յուզիչ ֆիլմը, որուն ներկայ եղան շուրջ 600 հանդիսատեսներ:

Իւրաքանչիւր ֆիլմի ցուցադրութեան ներկաները կը լեցուէին հայրենասիրական, երբեմն ուրախ, երբեմն տխուր զգացումներով, նայած ֆիլմերու շօշափած նիւթը: Բոլոր ֆիլմերն ալ պատրաստուած էին բեմադրիչի բծախնդրութեամբ եւ 'օրուայ ընձեռած թեքնիք կարելիութիւններով: Իւրաքանչիւր ֆիլմի աւարտին ներկաները գնահատական որոտընդոստ ծափերով գնահատեցին բեմադրիչին կատարած աշխատանքը: Գաղութային իմաստով, լուրջ մշակութային յաջողութիւն մըն էր այս ֆեսթիվալը, որուն համար անկեղծ գնահատանքի արժանի է բեմադրիչ Սարգիս Մուրատեան: Յատուկ գնահատանք նաեւ լրագրող Յովհաննէս Պալայեանին, որ մեծ ներդրում ունեցած էր ֆեսթիվալի կազմակերպչական աշխատանքին համար: Շնորհակալութիւն նաեւ «Հայասա» Մշակութային Կեդրոնին իր մասնակցութեան համար:

Մեր անկեղծ եւ լուրջ գնահատանքը անշուշտ կ՚երթայ տաղանդաւոր բեմադրիչ Սարգի Մուրատեանին, որ մեր ժողովուրդին առիթը ընծայած է եւ կը շարունակէ ընծայել լատինական ֆիլմարուեստի եւ թելեվիզիոնի մարզերէն ներս, ճաշակի բարձրացման եւ հոգեկան վայելքի:

Թղթակից

# 30 ՏԱՐԻ ԵՏՔ՝ ՀԱՆԴԻՊՈՒՄ ԴԱՍԸՆԿԵՐՆԵՐՈՒ ՀԵՏ

Շարունակուած էջ 13-էն

նին մէջ, որուն ներկայ գտնուեցան նաեւ վաղեմի ուսուցչուհի Տէր եւ Տիկ. Սոնա եւ Արա Մատէլեան: Լիբանանեան յուշերով լեցուն բացառիկ խանդավառ երեկոյ մը ապրեցանք:

Յաջորդական հանդիպումներէն խանդավառուած, Հինգշաբթի Յուլիս 13ին, 1976ի աւարտականները հիւրընկալուեցան Տէր եւ Տիկ. Շարլի եւ Գոհար Ջահէրներու բնակարանը: Ջուարթ երեկոյ մըն էր հայկականութեամբ լեցուն: Ունկնդրուեցաւ հայկական երաժշտութիւն եւ լսուեցան դպրոցական կեանքէն քաղուած բազմաթիւ հետաքրքրական դրուագներ:

Համախմբումի մասնակցիներն ու իրենց զաւակները, յատուկ կարգադրութեամբ մը առիթն ունեցան այցելելու «Տիզնիլէնտ», «Իունիվըրսըլ Սթիւտիօ» եւ այլ տեսարժան վայրեր:

Փակման հաւաքոյթը տեղի ունեցաւ Յուլիս 16ին, 2006 Տէր եւ Տիկ. Ռաֆֆի եւ Ջէլլա Պալիօզեաններու բնակարանը, ուր շատ գեղեցիկ գաղափարով մը, սեղաններու դասաւորումը կատարած էին ուսուցիչ-ուսուցչուհիներու անուններով: Ներկաները վայելեցին պաշտօնական ճաշկերոյթ հաւաքոյթը, ինչպէս նաեւ իբրեւ յիշատակի նուէրներ ստացան կազմակերպիչ յանձնախումբի կողմէ պատրաստուած տեսաերիզ (CD) մը՝ հին եւ նոր յիշատակի պատկերներով:

Շատ լաւ տպաւորուած եւ ազդուած ներկաներէն ոմանք՝ իրենց սրտի խօսքը յայտնեցին թէ որքան լաւ գաղափար էր այս համախմբումը եւ որքան հաճելի ժամանակներ կրցան ապրիլ վերյիշելով դպրոցական եւ պատանեկան օրերը, ինչպէս նաեւ ուրախացան իրար յաջողութիւնները լսելով:

Արդարեւ գնահատելի նախաձեռնութիւն մըն էր: Այս գեղեցիկ հանդիպումի աւարտին որոշուեցաւ գործնապէս աջակցիլ մեր սիրելի կրթօճախին եւ յաջորդ հանդիպումը կայացնել հայրենի հողին վրայ:



ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԻՈՒԹԻՒՆ ■ ARMENIAN GENERAL BENEVOLENT UNION

*Բեղմնաւոր Անցեալ, Լուսաշող Ապագայ:*
*Proud Past, Exciting Future.*

A NEW ARMENIAN EDUCATIONAL INSTITUTION

# AGBU HIGH SCHOOL PASADENA

TO MEET THE SCHOLASTIC, DEVELOPMENTAL AND SOCIAL NEEDS OF OUR YOUTH IN PASADENA, GLENDALE, BURBANK AND SURROUNDING COMMUNITIES IN THE SAN GABRIEL VALLEY

Affiliated with AGBU Manoogian-Demirdjian School, a College Preparatory High School
Serving the Greater Los Angeles Armenian Community for 30 Years.

CLASSES WILL BEGIN ON

## TUESDAY, SEPTEMBER 12, 2006

- Enrollment open for students in Grades 9, 10 and 11 for the first year.
- First High School Graduating Senior Class in June 2008.
- Offering a challenging college preparatory academic program in a safe, caring and supportive environment.
- Armenian program to focus on the Armenian identity, culture, history and rich heritage of the Armenian people.
- Experienced and dedicated faculty committed to student learning.
- Small class sizes and low teacher to student ratio.
- Professional guidance and counseling.
- Financial assistance available for qualified families.

For further information and how to register your child, please call (818) 883-5379 or (626) 794-0363

AGBU High School - Pasadena
2495 E. Mountain Street, Pasadena, California 91104
www.agbuphs.org

**AGBU CENTENNIAL SPONSOR**

Commerce Casino LOS ANGELES
CROWNE PLAZA HOTELS & RESORTS
6131 E. Telegraph Rd. • Commerce, CA 90040 • 323.721.2100 • 714.879.2100 • commercecasino.com